



160





334.5(479.25)(09)

Պ-59

ԳԱԳԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՌՊՆՐԱՑԻԱՅԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԿՈՌՊՆՈՐՇՐԴԻ—1927 թ.
ՅԵՐԵՎԱՆ

22 JUL 2013

26.160

334.5(47.925)

05 JAN 2010

11-59

ԳԱԳԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ

1003
14173



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԿՈՌՊԵՐԱՐԴԻ—1927 Թ.
ՅԵՐԵՎԱՆ

ZUSAMMENGESETZT I SMURAN
NUS 3061 ԳՐԱՌ 174 Բ.
ՏԻՐԱԺ 1000

I.

Հայերի հասարակական շարժումը 70-80-ական թվականներին : Այդ շարժման սոցիալ-դասակարգային բովանդակությունը : Արժրուհին վորպես առաջադեմ մանր-բուրժուազիայի առաջնորդ : Նրա կոպերատիվ տեսակետները և Շուլցե-Գելիչի ազդեցությունն այդ տեսակետների վրա : Ինչո՞ւ Արժրուհու կոպերատիվ պրոպագանդը գործնական արդյունքներ չտվեց : Մեղրի գյուղը վորպես Հայաստանի սպառնալուծիչայի որոշան . դրա պատճառները . առևտրական կապիտալիզմի վաղ զարգացումը : Թիֆլիսից—վորպես այն ժամանակվա հայերի կուլտուրական կենտրոնց-յեկող գաղափարական ազդեցությունները : Գ . Արժրուհու կոպերատիվ պրոպագանդի ազդեցությունը Մեղրու մտավորականության վրա : Ռիգայից յեկող գաղափարական ազդեցությունները : Ա . Ադելյանը և նրա դերը այդ ազդեցությունների իրականացման գործում : Սպառողական ընկերություն կազմակերպելու առաջին փայերը : Առևտրական կապիտալի տնտեսական գործունեությունը : Անցումը դեպի արդյունաբերական կապիտալը : Շարժման հետագա բաղդը : Հայերի կոպերատիվը մտքի սկիզբը վերաբերվում է անցյալ դարու 70-ական թվականներին :

Հայերի համար XIX-րդ դարու յոթանասնական և ութսունական թվականները բնորոշվում են վորպես մտավոր ու կուլտուրական վերածնության սկիզբ : Այն ժամանակվա հայ հասարակության մտահղացումների մեջ տեղի ունեցած հեղափոխության դադանի զսպանակը , նրա հիմքն եյին հանդիսանում հայկական զարգացող արդյունաբերական կապիտալիզմի սաղմերը : Բայց արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը կատարվում եր Ֆեոդալական հասարակությունից ժառանգված պատմական հին տրադիցանների թաղանթի տակ : Ճիշտ է , հայկական Ֆեոդալիզմը կործանվեց դեռ այն ժամանակներից , յերբ Հայաստանը կորցրեց իր քաղաքական անկախությունը , բայց դրա փոխարեն՝ Ֆեոդալիզմի տրադիցիաները դարեր ապրեցին և յերկար ժամանակ նրանք

հանդիսանում էլին այն ուշոք, վորով ձեռվորվում եր հայերի հասարակական միտքը: Այդ արադիցիաների կենդանի կրողը պատմական յեկեղեցին եր, վորի հասարակական հսկա տեսակարար կշիռը, այնու ամենայնիվ, ամենեկին համապատասխան չեր նրա տնտեսական հզորութեանը: Ինքը յեկեղեցին հայտնի չափով հանդիսանում եր միմիայն պատմական մնացորդ, հեռավոր անցյալի Փետղալական արադիցիաների սինթեզ:

Այդ արադիցիաները հայտնի չափով կաշկանդում էլին զարգացող կապիտալիստական հասարակութեան արտադրողական ուժերի աճումը: Նրանք իրենց ամբողջ ծանրութեամբ ճնշում էլին նոր քաղաքացիական հասարակութեան աճող ուժերին: Փոխանակ ակտուալ և ստեղծագործական գործունեություն կոչ անելու ներկայում արդյունաբերական ձեռնարկողություն առաջացնելու հողի վրա—նրանք հասարակական գիտակցություն աղտոտում էլին Փետղալական անցյալի վերապրումներով: Անցյալ տապալված թագավորության մասին յերազանքներ հյուսելով՝ նրանք թմրեցնում էլին հասարակական միտքը և այդ միտքը հեռացնում ներկայի ստիպողական պահանջներից: Այդ արադիցիաները հասարակության մեջ, ընտանիքում և դպրոցում սրբագործում էլին հին նահապետական հարաբերություններ՝ կաշկանդելով անձնական նախաձեռնություն և ինքնուրույնության ամեն մի արտահայտություն: Մինչդեռ՝ քաղաքացիական նոր հասարակության զարգացումը հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում առաջացնում եր անհատական—ստեղծագործական կենդանի ուժերն ազատ արձակելու անհրաժեշտություն: Անցյալի իզուրգիական ապրումների այդ մեռյալ բեռը կրողը, նրա ելուստներ «գրաբառն» եր: «Գրաբառն» այն ձեռն եր, վորի մեջ միայն կարող եր կատարվել հասարակական մտքի զարգացումը: Բայց այդ ձեռն իր բոլոր արմատներով կապված եր Փետղալական անցյալի հոգեվոր ու նյութական կուլտուրայի հետ: Այդ իսկ պատճառով «գրաբառի» լեզվական մաշկի մեջ չեր կարող տեղի ունենալ հասարակական մտքի վոչ մի հառաջադիմություն: Իսկ զարգացող կապիտալիզմի պահանջները հրամայողաբար առաջադրում էլին գրական լեզվի դեմոկրատացում: «Գրաբառի» և Փետղալիզմի պատմական արադիցիաների կրողը հանդիսանում եր Փետղալական հասարակությունից միակ անխախտ մնացած հոգևորական դասը: Վորպես զարգացող արդյունաբերական կապիտալիզմի

պահանջների արտահայտիչ, այն ժամանակ հանդես յեկավ արձարտական մանր բուրժուազիան: Ահա թե ինչու՝ XIV-րդ դարու 70—80-ական թվականների հայերի հասարակական կյանքը բնույթադժվում ե հետադիմական հոգևոր դասի և արմատական մանր բուրժուազիայի միջև տեղի ունեցած պայքարով: Մանր բուրժուազիան հանդես եր դալիս վորպես հեղափոխական դասակարգ: Այդ պայքարը մտավոր հսկայական խմորման և հասարակական հսկա վերելքի աղբյուր հանդիսացավ: Նոր դադափարնելի ներգործություն արբած,—ասում ե նշանավոր վիպագիր Ռաֆֆին—առաջավոր յերիտասարդությունը, մոռանալով իր աննախանձելի ներկայի մասին, տարված միմիայն հասարակական ողուտի մտքերով, լի եր սոցիալական պրոբլեմներին վերաբերվող վիճարանություններով ու բանակոխվներով: «Ճիշտ ե՝ վոր հասարակական այդ խանդավառությունը գուրկ եր սոցիալական յայն թափից: Նա պարիակվել եր միմիայն քաղաքացիական ուրնտանեկան կենցաղում ռեֆորմներ կատարելու սահմանափակ շրջանակներով, լեզվի դեմոկրատականացմամբ և ձեռակերպող նոր բուրժուական—ազգային կուլտուրայի համար լեզուն դործիք դարձնելով: Մանր բուրժուազիայի արմատականությունը գուրչեր դալիս բուրժուական կուլտուրաբեղբուրության սահմաններից: Նա իր առաջ քաղաքական վոչ մի խնդիր չեր դնում: Զարգանալով ռուսական արտոլյուտիզմի թևի տակ և հայտնի չափով նրա հոգանավորությունն ունենալով՝ հայկական կապիտալիստական մանր բուրժուազիան այդ արտոլյուտիզմի նկատմամբ քաղաքականապես լոյալ եր: Այսպիսով՝ քաղաքացիական ու ընտանեկան հարաբերությունների ռեֆորմի շրջանում ունեցած նրա արմատականությունը խաղաղություն կենակցում եր քաղաքական ասպարեզի նրա պահպանողականությունից հետ: Հառաջադեմ մանր բուրժուազիայի և հոգևոր դասի միջև յեղած պայքարը վերջացավ մանր բուրժուազիայի հաղթանակով: Փետղալիզմի սոցիալական ուժերը բուրժուական վերածնության թեթև ստափյունի հանդեպ ցրել յեկան: Զրկված իր անցյալի հասարակական—տընտեսական հզորությունից, հոգևոր դասը նահանջեց և, իր համար իսկ աննկատելի կերպով՝ սպունդի նման սկսեց ներս ծծել ժամանակի վոզին: Այսպիսով պայքարն ավարտվեց մեղչանական Փարսով, վոր պայքարող յերկու կողմերի համար ել փոխադարձաբար չահավետ եր:

Մեչչանական այդ Փարսի ամենաականավոր հերոսը և միա-
 «ամանակ XIX-րդ դարու 70—80-ական թվականների հայ կապի-
 տալրութեան առաջադեմ մանր բուրժուազիայի շարժման հո-
 գևոր առաջնորդը Գրիգոր Արծրունին եր: Ծնվելով հարուստ և
 լուսավորյալ ընտանիքում, բարձրագույն ուսում ստանալով՝ նախ
 Ռուսաստանում և ապա նաև արտասահմանում, Գրիգոր Արծրու-
 նին անցյալ դարու 70—80-ական թվականների հայ արմատական
 մանր բուրժուազիայի ամենատաղանդավոր առաջնորդը հանդի-
 սացավ:

Հայկական հասարակական մտքի պատմութեան մեջ հենց
 Գ. Արծրունու հետ ել կապված են կոոպերացիայի գաղափարի
 պրոպագանդի առաջին սկզբնավորումները: Նրա կոոպերատիվ
 հայացքները կազմվել են Շուլցե-Դեյչի պրոպագանդի գաղա-
 փարական ազդեցութեան ներքո:

XIX-րդ դարու սկզբում Գերմանիան ընթացավ կալիտալիս-
 տական զարգացման ճանապարհով: Ինչպես բոլոր յերկրներում,
 այնպես ել այստեղ կալիտալիզմի զարգացմանն ուղեկցում եր
 մանր արդյունաբերութեան և առևտրի ճգնաժամը: Հատկապես
 սուր ձևով այդ ճգնաժամն արտահայտվել սկսեց մոտավորապես
 անցյալ դարու կեսերին: Դա պատճառ գործավ մանր բուրժուա-
 զիայի ընդարձակ շրջանների բնական անբավականութեան: Քայ-
 քայվող մանր բուրժուազիան իրենով ավելի ու ավելի եր լցնում
 վարձու պրոլետարիատի շարքերը: Դրա հետ միասին վերջինիս
 դրությունն ել սկսեց խիստ վատանալ: Զարգացող խոշոր կապի-
 տալիստական արտադրությունն, այսպիսով, խախտում եր աշ-
 խատավոր բոլոր դասերի բարեկեցությունը. բայց, XIX-րդ դա-
 րու 50—60-ական թվականներին Շուլցե Դեյչը, հանդես գա-
 լով վորպես քայքայվող այդ մանր բուրժուազիայի գաղափարա-
 խոս, շատ լավ եր հասկանում խոշոր արտադրութեան տնտեսա-
 կան առավելությունները՝ համեմատած մանրի հետ: Ոոչոր ար-
 տադրութեան հաղթանակը—մանր արտադրութեան նկատմամբ—
 նրան պատկերանում եր վորպես ժամանակակից զարգացման ան-
 փուլափելի տենդենց: Բայց մանր արհեստավորական արտադրու-
 թյունն ինչպե՞ս փրկել անխուսափելի կործանումից: Նա անհնա-
 րին բան եր համարում միջնադարի քաղաքային համալսարանի
 կարգերի վերածնունդը: Մնում եր միայն մի բան. արհեստավո-
 րական արդյունաբերությունը կազմակերպելու այնպիսի՝ ձևեր

ասեղծել, վորոնք նրան կտային խոշոր արտադրութեան բոլոր
 առավելություններն ու շահավետությունը: Այդ ձևը կոոպերա-
 ցիան եր, կամ՝ ինչպես նա այլ կերպ ասում եր՝ «Ասոցիացիան»:
 «Ասոցիացիան,—ասում ե նա—կարիքավոր բանվորների ու ար-
 հեստավորների համար՝ միակ փրկարար միջոցն ե հանդիսանում:
 Ասոցիացիայում արհեստավորների համար նոր ուժերով կհաննի
 հին համալսարությունը, վոր ներկա ժամանակում անողուստ և ան-
 փաստ մի հիմնարկ ե դարձել»: Շուլցե Դեյչն իր կոոպերատիվ
 սխտեմի պսակն եր համարում արտադրողական կոոպերացիան:
 Բայց՝ իբր նրա նախապատրաստական ձևեր՝ նա հանձնարարում
 եր վարկային և հում նյութերի արհեստավորական ընկերու-
 թյունները: Արտադրողական կոոպերացիայի գաղափարը, սա-
 կայն, անհանդուրժյան մատնվեց: Յեվ ընդհակառակը՝ վարկային
 ընկերությունները, վոր դիտվում եյին վորպես անցման, նախա-
 պատրաստման ձև, դարձան Շուլցեյի կոոպերատիվ կազմակեր-
 պությունների գլխավոր տեսակը:

Իսկ ինչ վերաբերվում ե սպառողական կոոպերացիային,
 ապա, թեև վերջինս կազմում եր Շուլցեյի մանր բուրժուական
 կոոպերատիվ սխտեմի ողակներից մեկը, այնուամենայնիվ, նա
 դիտվում եր վորպես յերկրորդական կարգի մի ողակ: Մանր բուր-
 ժուազիայի համար, վորի շահերին դիմում եր Շուլցե-Դեյչը,
 առաջին պլանի վրա կանգնած եյին ձեռնարկողական շահերը:
 Բայց նրանց ստեղծած սպառողական ընկերություններն ել մի-
 անույն մանր բուրժուայնութեան կնիքն եյին կրում, ինչ վոր
 նրանց կազմակերպած արհեստավորական կոոպերատիվ ընկե-
 րությունները: Նրանց համար բոլորովին ոտար եր ռոչդեյլյան
 կոոպերատիվի պրոլետարական-սոցիալիստական վողին: Նրանք
 իրենց առաջ սոցիալական վոչ մի խնդիր չեյին դնում: Նրանց մի-
 ակ նպատակն եր իրենց անդամներին եժան և լավվորակ մթերք-
 ներ հայթայթելը: Այդպիսին եր Շուլցե-Դեյչի կոոպերատիվ
 սխտեմը: Նա ամբողջովին արդյունք եր XIX-րդ դարու 40—50-
 ական թվականների գերմանական առաջադեմ մանր բուրժուա-
 զիայի շահերի: Այս մանր բուրժուազիան վոչ միայն զարգացող
 կալիտալիզմի թշնամին չեր, այլ և նրա իսկական դեմիոսրդը
 հանդիսացավ: Նա ձգտում եր կալիտալիզմին՝ առանց վերջինիս
 ներքին հակասությունների, առանց նրա ստվերային ու բացա-
 սական կողմերի: Կոոպերացիա—ասա այն ուղին, վոր տանում ե

դեպի շահերի սոցիալական ներդաշնակութուն՝ կապիտալիզմի հողի վրա: Կոոպերացիա—անա պրոլետարական սոցիալիզմի դեմ գործադրվելիք խիստական հակաթույնը:

XIX-րդ դարու 40—50-ական թվականների գերմանական հառաջադեմ մանր բուրժուազիայի այս իդեոլոգիան ավելի քան հարմար յեկավ անցյալ դարու 60—70-ական թվականների հայարմատական մանր բուրժուազիայի հոգևոր առաջնորդի ճաշակին: Գ. Արծրունին հենց Շուլցե-Դելիչյան կոոպերատիվ սիստեմի մեջ գտավ այն ընդհանուր, համայնապարփակ միջոցը, վորի սղնությամբ նա յերազում էր կապիտալիզմը դարձնել մարդկային համակեցության անանց մի ձև: Կոոպերացիայի առաջ նա ղնում էր քաղաքի և գյուղի մանր արտադրողների ընդարձակ դասակարգի տնտեսական դրությունն ամբացներու խնդիրը: Այդ իսկ պատճառով՝ սա ևս, Շուլցե-Դելիչի նման, նախապատվություն էր տալիս արտադրական և վարկային կոոպերացիաներին: Սպասողական կոոպերացիան նրա համար միայն յերկրորդական նշանակութուն ուներ: Վորպես կապիտալիստական մանր բուրժուազիայի իդեոլոգ, նա իրավացի յեր հասարակական այն դասակարգի շահերի տեսակետից, վորի հոգևոր առաջնորդն էր հանդիսանում: Իր որգան «Մշակ» թերթի եջերում նա Շուլցե-Դելիչյան կոոպերացիայի գաղափարների պրոպագանդ ըսկսեց և կոոպերացիայի առաջին սերմերը զցեց հայկական հասարակահայնության ղեռուս շփափկացրած հողի մեջ: 1873թվին «Մշակ»-ի մի շարք համարներում նա տպագրեց փոխատու-խնայողական ընկերությունների որինակելի կանոնադրություն: Սակայն՝ չրնայած նրան յեռանդուն պրոպագանդին, վերջինս այդու ամենայնիվ, համակրական վոչ մի արձագանք չգարթեցրեց այն ժամանակվա հայկական իրականության մեջ: «Հայերը,—գրում է Ասեն,—սահմանափակվում էյին միմիայն հարգալով, տեղեկանալով այն մասին, վոր աշխարհի յերեսին գոյություն ունեն հանրոգուտ հիմնարկություններ, բայց այդ հիմնարկությունները կյանքում իրականացներ նրանց համար անհնարին էր, վորովհետև մեծ էր ասիական արաղիցիաների ուժը»: «Այն ժամանակվանից յերեսուն տարի յե անցել,—գրկին գրում է նա 900-ական թվականների սկզբում,—այդ 30 տարիների ընթացքում անընդհատ քարոզվել է այդ միտքը, բայց այդու ամենայնիվ, նրա իրականացումը այսոր էլ հեռավոր ու անհավանական է թվում,

ինչպես 30 տարի առաջ»: Հարցն ինչի մասին է: Խնդիրն «ասիական արաղիցիաները» չէյին, այլ մեզ հետաքրքրող ժամանակվա տնտեսական իրականության որչեկտիվ պայմանները: Դեռ մինչև մոտ ժամանակներս հայկական գյուղում տիրում էր տնային փակ տնտեսությունը, վորի մեջ արտադրությունն ու սպասուժը միաձուլվում էյին, կաղմելով անընդհատ ու անբաժն մի քրեցեսս: Իյուղացրական առեն մի տնտեսություն աշխատում էր միայն իր համար, միմիայն իր պահանջները բավարարելու նպատակով: Ծնորհիվ դրա՝ գյուղացիներից յուրաքանչյուրը,—գարծածելով Մ. Ա. Պոչոյի արտահայտությունը՝ վոր նա ասել է կորեյացու նման տիպի տնտեսության վերաբերյալ,—հանդես էր գալիս իրր «ուճիվերսալ արհեստավոր», վոր աշխատում էր միայն իր սեփական սպասման անհրաժեշտ առարկաների արտադրության համար: Իսկ գյուղացիական կենցաղի հիմքը ընտանեկան նահապետական սկզբունքն էր: Այդ պատճառով՝ առանձնությունն ու լիակատար գաղափար վիճակը գյուղական կենցաղի բնորոշ գիծըն էյին կաղմում: Հայկական գյուղի կենցաղագիրը հետևյալ կերպ էր տալիս իրերի այն ժամանակվա դրությունը: «Մեր յերկիրը, մեր ժողովուրդը ղեռուս շատ հեռու յե մեր իդեալներից: Մեր յուրջը տղիտության անթափանցելի խավար է: Մեր ժողովուրդն աղքատ է. նրա բարբերը նահապետական են, ամեն գյուղ, ամեն մի անկյուն ապրում է իր սովորություններով ու ճաշակներով, բարու և չարի իր ըմբռնումներով... Մեր յերկրի ամբողջ տարածության վրա չէք գտնի և վոչ մի ընդհանուր բան: Ամեն մի գյուղ ապրում է իր առանձնացած կյանքով, վորի խիստ ընդգծված սահմանները նույնքան հին են, վորբան ինքը կյանքը»: Այս առանձնության արմատները գտնվում էյին ընական տնտեսության պայմանների մեջ: Այդ իսկ պատճառով՝ ղեռ. ևս հող չկար, վորպեսզի հայկական գյուղում առաջանար և գարգանար ժամանակակից կոոպերացիան: Այդ գյուղին ծանոթ էյին կապիտալիստական տնտեսության համար բնորոշող գյուղացիական կարևալիստային փախոգնուրքյան զանազան ձևերը միայն, վորոնք, համենայն ղեպս, քիչ ընդհանուր բան ունեյին ժամանակակից կոոպերացիայի հետ: Զարմանալի չէ, յեթև կոոպերատիվ գաղափարներ և առաջին սերմերը ընկան նրանց ընդունման համար ղեռ. ևս տնտեսական գարգացման ընթացքով չնախապատրաստված հոգում: Բայց նրանց ընդունման համար նախապատրաստված չէր նաև քա-

զաքը: Արդյունաբերական կապիտալիզմը դեռ հենց նոր եր սկսում զարգանալ: Քաղաքներում դերակշռողը մանր արհեստավորական արդյունաբերութունն էր: Այսպես որինակ՝ XIX-րդ դարու առաջին կիսում Յերևան քաղաքի բնակչության 66%-ը կազմում էին արհեստավորները, 16%-ը՝ մանր առևտրականները, 8%-ը՝ բարձր դասը (հողային արևատուներ և հողեփրակներ), իսկ մնացած 10%-ը՝ մուրացիկներ, թափառաչըջիկներ և անորոշ արհեստ ունեցողներ:

Քաղաքներում թվական գերակշռություն ունեցող հիմնական բնակչութունը մանր բուրժուազիան եր: Հայաստանի քաղաքները այս հիմնական տիպը մինչև ներկա ժամանակներս ել քիչ է փոփոխվել: Բայց քաղաքային մանր բուրժուազիան ուներ իր ամբարշտի կարգաբաժնի կազմակերպությունները, վորոնք պես անցյալ դարու 80-90-ական թվականներին ել բավական կենսական յերեմուկներ էին: Համբարային այդ կորպորացիաները հանդիսանում էին փորձված և պատմականորեն ձևավորված ինքնաբավ կազմակերպություններ, վոր պաշտպանում էին արհեստավորների ընդարձակ դասակարգի տնտեսական շահերը: Վերոհիշյալ նպատակի համար արհեստավորները տնտեսական վորեկ ալ կազմակերպության կարիք ամենեկին չէին ըզգում: Այդ իսկ պատճառով՝ արտագրական կոոպերատիվները ու փոխատու—խնայողական բնկերութունների մասին Գ. Արծրունու կողմից քարոզված դադափարները քաղաքային մանր բուրժուազիայի մեջ վոր մի արձագանք չգտան: Իսկ ինչ վերաբերվում է սպառողական կոոպերացիային՝ սպա այն դասակարգը, վոր սպառողկոոպերացիայի կրողը սիտի դառնար՝ դեռևս գտնվում եր իր ձևավորման պրոցեսում, դեռևս չեր առանձնացել մանր բուրժուազիայից: Մեր խոսքը վարձու բանվորների դասակարգի մասին է: Այսպիսով՝ Շուլցե-Գեյլի կոոպերացիայի դադափարների քարոզը, սկսած XIX-րդ դարու 70-ական թվականների մինչև մեր դարադուրսը, հայկական հողում գործնական վոր մի արդյունք չտվեց: Հայաստանի տնտեսական իրականութունը դեռ նախապատրաստված չեր՝ կոոպերացիայի դադափարներն ընդունելու համար: Այդ պատճառով՝ Հայաստանի կոոպերացիայի պատմության առաջին այս շրջանը, վոր ավելի քան մի քառորդ դար է ընդգրկում, պես է բնորոշել վորպես գաղափարական—նախապատրաստական շրջան:

Պեսը յեղավ տնտեսական զարգացման ամբողջ 25-30 տարի, վորպեսզի հայկական իրականության հողի վրա առաջին անգամ Գ. Արծրունու կողմից զգած կոոպերացիայի սերմերն իրենց առաջին ծիլերը սան: Կոոպերատիվ շարժման առաջին ընձյուղները յերևացին մեր դարաշրջանի սկզբին՝ Մեղրի գյուղում: Երա զարգացման առաջին ողակը հանդիսացավ Մեղրու սպառողական ընկերութունը: Իսկ նրա որորանն եր հայկական հնագույն շրջանի, Սյունյաց յերկրի մի գյուղը՝ Մեղրին: Ընկած Սյունիքի, կամ ինչպես պարսիկներն են այդ շրջանն անվանում—Սիսականի անմերձենալի Լեռների ու ձորերի միջև, Մեղրի գյուղն անցյալ դարու սթառնական թվականների կիսերին ուներ ընդամենը 195 ծուխ և 949 անձ բնակչութուն՝ յերկու սեռն ել հաշված: Շնորհիվ Սյունիքի հողային հարաբերութունների յուրահատուկ պատմության՝ վորակով լավագույն և ամենից ավելի պողաբեր հողերը կուտակվել էին հողատիրական ուժեղ դասի ձեռքում: Ռուսական ցարիզմը վոր միայն վավերացրեց ստեղծված հողային հարաբերութուններն, այլ և, ի շահ Փետրալական կալվածատիրական դասի՝ ծայրաստիճանի հասցրեց տեղական գյուղացիական բնակչության պատմական թալանի դործը: Այդ պատճառով՝ Մեղրիի բնակչութունը սպաստան վորոնց մի պատառ անպողաբեր հողի վրա: Մեղրեցիների կողմից ոգտադործվող հողի ամբողջ տարածութունը 1224,00 դեսյատին եր: Միջին թվով ամեն մի ծխին ընկնում եր 7,7 դեսյատին: Հողի ամբողջ տարածության ²/₃-ն ընկնում եր արոտատեղերին ու անհարմար հողերին, ¹/₃-ից մի քիչ պակասը՝ վարելահողերին, իսկ մնացած փոքրիկ պատառը՝ (16 դեսյատին) պողատու և խաղողի այգիներին: Միջին թվով յուրաքանչյուր ընտանիքին հասնում եր 0,73 դուխ աշխատավոր անասուն, ²²/₃₃ դուխ կաթնատու անասուն, և 5,7 դուխ մանր յեղջուրավոր կենդանի: Հասկանալի է, վոր Մեղրեցու մանր, թրջուկային տնտեսութունը, վոր սպրում եր սպիտակահեր հնության փթած տեխնիկայով,—գյուղացիական ընտանիքի բարորության համար եական հենարան հանդիսանալ չեր կարող: Իր բյուջեյի ծախքի ու յեկամուտի միջև վորոչ համասարակչութուն ստեղծելու նպատակով՝ մեղրեցին ստիպված եր դիմել վոր հողագործական աշխատանքների: Աշխատանք և «բաղը» վորոնելով՝ ավելյացած բնակչության մի մասն սկսեց ձգտել դեպի «սե վոսկու» յերկիրը—Բագու, մյուս մասը՝ դեպի Թիֆլիս և, վերջուպես, յեր-

բորդ մասը յեւը եր փնտրում տեղական վոչ յերկրագործական արհեստներով: Մեղրի գյուղի շահավետ դիրքը՝ այն, վոր նա դանվում եր Անդրկովկասյան գավառները հյուսիսային Պարսկաստանի շուկայի հետ կապող առևտրական ճանապարհի վրա, քիչ աղբյուրներ չեր տալիս վոչ յերկրագործական աշխատանքի համար: Այստեղ անհրաժեշտ է նկատել, վոր մինչև անցյալ դարու ութսունական թվականները «յերկրի» արտաքին առևտուրն ուղղված եր շատ ավելի դեպի Յեվրոպա և Ասիա (Պարսկաստան, Ճաճկաստան) քան՝ դեպի Ռուսաստան: Վերջինիցս Անդրկովկասը մեկուսացված եր արանսպորտի վրա վիճակի հետևանքով: Պարսկաստանի շուկաները համարյա թե գերիշխող նշանակութուն ունեյին «յերկրի»*) արտաքին առևտրի համար:

Նման պայմաններում, Պարսկաստանի առևտրական ճանապարհի վրա գտնվող Մեղրի փոքրիկ գյուղը առևտրական կայանի կարեւոր նշանակութուն եր ստանում: XIX-րդ դարու 80-ական թվականների կիսում այստեղ հաշվվում էին 26 առևտրականներ, վորոնց մեջ քիչ չէին համեմատաբար խոշոր շրջանառութուն ունեցողները: Առևտրի հետ միասին ծաղկում եր և արհեստավորական արդյունաբերութունը, գյուղում հաշվվում էին հարյուրից ավելի դանագան արհեստավորներ: Մեղրիի բնակիչները, — ասում է Սյունիք գավառի ուսումնասիրող Ս. Պ. Չելինսկին, — «գրեզվում են առևտրով ու արհեստներով և տարիներով իրենց անից հեռու են բնակվում, ոտար յերկրներում»: Այսպիսով՝ Մեղրին, չնորհիվ նրա, վոր առևտրական բանուկ ճանապարհի վրա բարենպաստ դիրք եր գրավում, դեռ շատ վաղ ժամանակից վոտր դրեց դեպի առևտրական կապիտալիզմի զարգացման ուղին: Առևտրական կապիտալիզմի այս զարգացումը, զուգընթաց լինելով նահապետական ընտանեկան հին հարաբերութւոյունների քայքայմանը, բնական է, վոր Մեղրու բնակչութւոյան ընդհանուր կուրտուրական վերելքին ուժեղ զարկ պիտի տար: Նույն ուսումնասիրողի վկայութւոյամբ՝ XIX-րդ դարու ութսունական թվականներին Մեղրի գյուղում վոչ միայն ամենեվին անդրադետ մարդ չկար, այլ և պատահում էին միջնակարգ կրթութւոյուն ունեցող անձինք: Յեւ վայր այն ժամանակ, յերբ 1897 թվի առաջին ընդհանուր մարդահամարի տվյալներով՝ ամբողջ Հայաստանում գրագետները վողջ բնակչութւոյան 3,2 %-ն էին կազմում: Մեղրի գյուղի ին-

*) «Край».

տենսիվ առևտրական կյանքն անկասկած զարկ է ավել ընդհանուր կուրտուրական վերելքի աշխուժացմանը: Այդ պատճառով՝ Մեղրիում համեմատաբար ավելի վաղ ձևակերպվեց տեղական մտավորականութւոյունը՝ զգայուն բարոժետր գտնալով մտավոր այն տրամագրութւոյունների ու հոսանքների համար, վոր գալիս էին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական մտավոր ու հասարակական կյանքի կենտրոն հանդիսացող Թիֆլիսից: Իր ծագումով այդ մտավորականութւոյունը գյուղացիական եր, իսկ իր սոցիալական հայացքներով նա արտահայտում եր ժամանակի արմատական մանր բուրժուազիայի մտահղացումները:

Մեղրու մտավորականութւոյունը գտնվում եր XIX-րդ դարու 70-ական թվականներից ձեւավորվել ըսկսող առաջադեմ մանր բուրժուազիայի իդեոլոգիայի գաղափարական ուժեղ ազդեցութւոյան տակ: Նրա մտքերի տիրողը, ինչպես մենք վերը ասացինք, այդ նույն բուրժուազիայի հոգևոր առաջնորդ Գ. Արծրունին եր: Ամենևին զարմանալի չի, յեթե՝ բուրժուական „Sturm und Drang“-ի գարաշրջանի առաջավոր գաղափարների հետ միասին՝ այդ մրմտավորականութւոյան դիտակցութւոյան մեջ ընկել են նաև կոոպերատիվ գաղափարների առաջին սերմերը: Այդ սերմերն ընկան նախորդ անտեսական զարգացմամբ արդեն նախապատրաստված հողում: Առևտրական կապիտալիզմի վաղ զարգացումը XX-րդ դարու սկզբում արդեն կարողացավ ուժեղ կերպով քայքայել Մեղրի գյուղի բնասնտեսութւոյան հիմքերը և բնասնտեսութւոյան վրա հենվող ընտանեկան-նահապետական հարաբերութւոյունները: Իսոյց՝ առևտրական կապիտալիզմը՝ անտեսական հին հարաբերութւոյունները քայքայելով, նրանց փոխարեն նորը և ավելի բարձրը չի ստեղծում: Այդ պատճառով՝ նրա զարգացումը զուգորդվում է շահագործման ամենավաթար ձևերի առաջացմամբ: Պառտերիզացիոնալիզմի զարգացող առևտրական կապիտալիզմի ուղեկիցը: Վաղուց է ասված, վոր «կոոպերացիան կարիքի մայրն է»: Յեւ հենց այդ կարիքից եր, վոր առաջացավ Հայաստանի առաջին սպառողական կոոպերատիվը:

Ինչքան էլ այդ զարմանալի թվա՝ այդպիսի առաջին ընկերութւոյունը սպառողների ընկերութւոյունն եր: Նրա մասին Մեղրու առաջավոր մտավորականութւոյան մեջ միտք ծագեց 1899 թվին: Ինչո՞ւ այդ միտքը կանգ առավ հենց սպառողական ընկերութւոյան վրա և վոչ վարկային ընկերութւոյան, վոր թվում եր, թե կարող եր ավելի ի-

բական հենարան հանդիսանալ՝ Մեղրեցու՝ իր կայունությունն արդեն իսկ կորցնել ըսկսող գյուղացիական տնտեսութեան համար: Ինչպե՞ս հասկանալ առաջին հայացքից տարրինակ թվացող այս յերեվույթը: Մենք մտածում ենք, վոր այս յերեվույթի «գաղտնիքը» հետևյալն է. իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Մեղրի գյուղը «Յերկիր» առևտրա-արդյունաբերական կյանքի կենտրոններից հայտնի չափով կտրված էր: Սրա հետևանքով՝ զարգացող առևտրական կապիտալն այստեղ հենց սկզբից մեկաշնորհական բնույթ ընդունեց: Այստեղ առևտրական կապիտալի ներկայացուցիչներն իրենց համարում էին դրութեան տերը: Գյուղացիական մանր տնտեսութեաններն ամբողջապես ընկել էին գյուղական այդ սարդերի ցանցի մեջ, վորոնք գյուղի փոխանակային հարաբերութեաններին միակ կազմակերպիչն էին հանդիսանում: Գյուղացին կրկնակի կորուստ էր ունենում, թե վորպես իր տնտեսութեան ապրանքը վաճառող և թե վորպես իրեն համար անհրաժեշտ քաղաքային արդյունաբերութեան ապրանքների գնորդ: Նրա տրնտեսութեանը կորցնում էր իր կայունությունը և թեք մակերեսով սահում էր դեպի ցած՝ դեպի լիակատար քայքայում ու աղքատացում: Առևտրական կապիտալիզմի ներկայացուցիչները միաժամանակ հանդիսանում էին նաև գյուղական «բանկիրներ»-վաշխատուներ: Այդ պատճառով՝ մեղրեցին կոոպերացիայի մեջ կովի միջոց էր վորոնում՝ առևտրական կապիտալի կողմից կատարվող բազմապիսի շահագործման դեմ պայքարելու համար: Գյուղատրնտեսական կոոպերացիայի զաղափարին նա ամենևին ծանոթ չէր: Նրա կոոպերատիվ «իդեոլոգիան» կազմվում էր Շուլցե-Դեյլի զաղափարական պրոպագանդի վրա հենվելով, իսկ Շուլցե-Դեյլին, իսկապես ասած, քաղաքային մանր-բուրժուական կոոպերացիայի հայրն էր: Յեվ բնական է, վոր մեղրեցու արթնացող կոոպերատիվ միտքն ուղղվում էր դեպի սպառողական կոոպերացիան: Վերջինիս մեջ նա տեսնում էր իր անհատական տնտեսութեանն ամբողջելու միջոց: Այդ տեսակետից չափազանց հետաքրքիր և մեր միտքը հաստատող մի փաստաթուղթ է Մեղրի գյուղի գյուղական ժողովի 1899 թվի դեկտեմբեր 12-ի արձանագրութեանը, վորտեղ բացատրվում են սպառողական ընկերութեան կազմակերպելու դրդապատճառները: «Մեղրի գյուղը, —ասվում է արձանագրութեան մեջ, —վորը գտնվում է վաճառականական կենտրոնից հեռու և չունի հարմար ճանապարհների հաղորդակ-

ցութեան, ինչպես միակ միջոց՝ ազատվելու դանաղան չարչի վաճառական խանութպանների հարստահարութեաններից ու խաբեբայութեանից և կարելույն չափ տարեց տարի ընկնող յուր արնտեսական դրութեան առաջն առնելու համար՝ անհրաժեշտ համարեց Մեղրի գյուղում բաց անել հասարակական խանութ»:

* * *

Բայց ինչպե՞ս պետք է կազմակերպել այդ հասարակական խանութը: Հայկական կոոպերացիայի պիոներները դրա համար անցյալի վոչ մի փորձ չունեին: Գործնական անհրաժեշտ ցուցմունքներ ստանալու համար ո՞ւմ պետք է դիմեին: Յեւթը գտնված



Ա. ԱԳԵԼՅԱՆ.

էր: Մենք վերևում ասացինք արդեն, վոր Մեղրին՝ իրեն գործունեյութեամբ անմիջականորեն հայրենի գյուղի հետ կապված տեղական մտավորականութեանից բացի՝ մտավորականութեան բավականաչափ ներկայացուցիչներ ուներ նաև հայրենիքից դուրս «Յերկիր», Ռուսաստանի և մինչեվիսկ արտասահմանի առևտրաարդյունաբերական խոշոր կենտրոններում:

Մեր պիոներները վճռեցին՝ ղեկավարող անհրաժեշտ ցուցմունքներ ստանալու համար՝ դիմել իրենց համադրողացի Ազարե Աղելյանին, Ռիգա քաղաքը, վորտեղի պոլիտեխնիկումում Աղելյանն ուսանում էր: Ո՞վ էր Ա. Աղելյանը, վորին վիճակված էր մանկաբարձուհու դեր խաղալ հայերի այս նոր հասարակական շարժման մեջ: Նա ծնվել է Մեղրիում, 1971 թվին: Նրա հայրը


գյուղական անբացու երևիք ժամանակի համար լուսավորչալ մարդ եր հանդիսանում—նշանակալից անձնական կապեր ունեւր ժամանակի «կրթչալ հասարակութչան» հետ: Ընտանեկան միջնա- վայրի սոցիոլոգիան ներքո՝ յերրոտասարդ Ազարեյի մեջ վաղ ե սկսում արտահայտվել ուսանելու ձգտումը: Սկզբնական կրթու- թչունը նա ստանում ե հայրենի գյուղի յեկեղեցական—ծխական գարոցում: Բայց շորրորդ դասարանից ստիպված ե լինում դըր- բոցը թողնել: Ռուսական արտոլյուտիզմը, վոր խոր խավարամու- թչան հետ միասին իր հետ բերում եր նաև ազդային կուլտուրայի ամենավորը նշանների ամեն տեսակ ձնչումներ, 1885 թվին փա- կում ե հայկական գարոցները: Այդ ժամանակ Աղեյանը թող- նում ե հայրենի գյուղը ե մեկնում ե իր յեղբոր մոտ, Բագու, ա- բազորեն անող նավթարդյունարերութչան այդ կենտրոնը: 1886 թվին նա ընդունվում ե հոգևոր սեմինարիան, վորն ավարտելուց հետո 1892 թվին գնում ե Ռիգա՝ բարձրագույն կրթութչուն ստա- նալու: Այդտեղ նա ընդունվում ե պոլիտեխնիկում: Բայց ապ- բուստի նյութական ծանր պայմանները ե դրա հետեվանքով իր թոքերում սկսված պրոցեսսը Աղեյանին հնարավորութչուն չեն տալիս՝ ուսումը շարունակելու: Այդ պատճառով 1894 թվին նա վերադառնում ե իր հայրենի գյուղը, վորտեղ ե մնում 1 մինչև 1896 թիվը: Սակայն նա նորից ձգտում ե Ռիգա՝ ուսումն ավարտելու: Նորից թողնում ե հայրենի գյուղը: Հավա- բում ե իր բոլոր ուժերը ե 1901 թվին նրան վերջնապես հաջողվում ե ավարտել Ռիգայի պոլիտեխնիկումի քիմիական բաժինը: Պո- լիտեխնիկումն ավարտելուց հետո՝ նա փորձում ե իր դիտութչան պաշարն ոգազորձել Բագվի նավթային արդյունարերութչան առ- պարեզում: Այդ բանը հաջողվում ե: Մինչ այդ՝ հիվանդութչունն ու յերկարատեվ գրկանքները կարողանում են մաշել նրա կյանքի վերջին ուժերը: 1902 թվին նա կրկին վերադառնում ե հայրենի գյուղը, ուր 1903 թ. նոյեմբեր 12-ին (հ. տ.) իրվում ե նրա կյանքի թելը: Ա. Աղեյանը տիպիկ ներկայացուցիչներից մեկն ե հայկական այն այլաստիձան*) մտավորականութչան, վոր՝ զար- գացող արդյունարերական կապիտալի սոցիոլոգիան ներքո ըս- կսում ե ձևակերպվել անցյալ դարու 60—70-ական թվականներից: «Ժամանակի վողուն» հարազատ լինելով՝ նա ձգտում եր բարձրա- գույն տեխնիկական կրթութչան, փորպեսպի հետո բազմ վորոնի

*) Разночлннноі

նավթարդյունարերական կենտրոնի յետոն ջրապուլչում: Բայց նրան վիճակված չեր արդյունարերութչան «նավապետի» դերը: Կապիտալիզմն իր «բարիքներով» լուսավաակում ե վող բոլոր «ընչաբացներին ու պապակներին»: Այդ պատճառով՝ նա իր «կարյերան» պետք ե սահմանափակել ուսուցչութչան նեղ ու ան- նախանձելի շրջանով: Ռուսական արտոլյուտիզմը պատնեչ եր քա- չել հասարակական ու պետական այլ ասպարեզներում աշխատելու հնարավորութչան գեմ: Ասենք ուսուցչական ասպարեզն ել՝ արտ- յուտիզմի յերկաթե կրունկի տակ, բավական պրոբլեմատիկ եր: Ա. Աղեյանի «կարյերայի» եական խոչընդոտը նաև իր դժբաղդ կյանքի պատճառով ձեռք բերած հիվանդութչունն եր: Ի հարկ ե, նրա համար ծանր եր իր կյանքի յերազանքների խորտակումն ըզ- դալը: «Դեհ, այժմ կարող ես ինձ շնորհավորել,—դառն հեզնանքով ասաց նա իր մտերիմներից մեկին,— մահվանս գին թղթի կտորն ե այս նշանը, վերջնապես, ստացա... Յերանի թե գյուղական ուսուցիչ մնայի, քան թե արյան գնով ինժիներ—քիմիկոս կոչումը վաստա- կելի»: Սոցիալական իր հայացքով Ա. Աղեյանը, բնականաբար, հա- բում եր առաջադեմ մանր բուրժուազիայի իդեոլոգիային: Լիբերալ նարոդնիկութչան տիպիկ ներկայացուցիչներից մեկն եր նա: Սա- կայն, այդ լիբերալիզմն ստար եր ամեն տեսակ քաղաքական յե- բանդի ու բուրժուազիական: Նա պարփակված եր բուրժուական կուլտուրարեզերութչան նեղ ու սահմանափակ շրջանակներում: Բուրժուական այդ կուլտուրարեզերութչան տեսողութչան ան- կյունից նայելով՝ Աղեյանը կենցաղային մի շարք պատկերներ ե տալիս հայկական գյուղի կյանքից. իսկ հայկական գյուղը XIX-րդ դարու 80-ական թվականների վերջերից սկսում ե ապրել բնական տնտեսութչան քայքայման ե դեպի սպրանքա—դրամային տնտեսա- կան հարարերութչուններն անցնելու հիվանդագին պրոցեսս: Չը- նայած իր դրական ընդունակութչունների համեստութչան՝ Ա. Աղեյանն, այնուամենայնիվ, թողել ե գրական մի փոքրիկ ժառանգութչուն: Նրա գրական արտադրութչուններն արժեքավոր փաստաթղթեր են հանդիսանում՝ հասկանալու համար՝ սոցիալ- տնտեսական այն պրոցեսսները, վոր տեղի եյին ունենում հայկա- կան գյուղերում՝ սպրանքա—դրամային տնտեսութչան զարգաց- ման սոցիոլոգիան ներքո: Ահա թե ով եր Ազարեյ Աղեյանը, վո- բին, ինչպես մենք վերեվում ասացինք, վիճակվել եր՝ Հայաստա- նում՝ գառնալ սպառողական կրոպերացիայի շարժման մանկա-

1003
1473





1901 թվի կոոպերատիվ խանութը Մեղրի գյուղում

բարձուհին : Հենց նրա գործնական խորհրդներին էլ ղեմեցին մեր պիոներները : Յե՛վ սա պատահական բան չէր : Կոոպերատիվ շարժումը Ռիզաջում ըսկովեց դեռ ևս XIX-րդ դարու 60-ական թվականներին : Առաջին սպառողական կոոպերատիվը, Վոր հաստատված կանոնադրութունն ստացավ՝ «Ռիզաջի առաջին սպառողական ընկերութունն» եր (1865 թ.) : Նրա նախաձեռնողները գերմանական բնակչութունից էին : Հենց ընկերութուն կազմելու միտքն իսկ առաջացել էր Ծուլցե-Պելլիշի գաղափարական պրոպագանդի ազդեցության ներքո, վոր ծնունդ էր առնում Գերմանիայից : Ահա թե ինչու՝ այն ժամանակ, յերբ Ա. Աղեկյանը բնակվում էր Ռիզաջում, այնտեղ արդեն կար դարգացած կոոպերացիա : Պիոներներն, ըստ յերևույթին, գիտեցին այդ : Բայց, զժրախտարար, Աղեկյանը նրանց գործնական և վոչ մի խորհուրդ տալ չէր կարող : Կոոպերացիան նրա համար դեռևս անհայտ մի բնագավառ էր : Այդ պատճառով՝ նա, իր հերթին՝ խորհուրդ ստանալու համար, գիմեց քաղաքաանտեսության իր պրոֆեսսորին : Ահա թե այդ առթիվ նա ինչ է գրում պիոներներից մեկին-Յե. Վարդանյանին : «Միբելի Յեփրեմ, ստանալով քո նամակը, քաղաքաանտեսության պրոֆեսսորին ծանոթացրի նամակիդ բովանդակությանը և խնդրեցի այդ հարցի մասին ձեռնարկ մատնանշել : Սկզբում նա չէր ցանկանում հավատալ այն բանին, ինչ վոր լսեց և տեղից հանկարծ վեր ցատկելով բացականչեց. «Աստված իմ, արդյոք յերա՞ջ թե իրականութուն էր այդ, վոր յես լսեցի : Կովկասի ծայրամասում մտածում են կոոպերացիա ստեղծելու մասին՝ այն ժամանակ, յերբ մենք բոլորովին տարբեր պատկերացում ունենք այդ յերկրի ժողովուրդների մասին» : Հաջորդ ուրը նա իր գրադարանից բերեց այս գիրքը, վոր ուղարկում եմ քեզ : Գիրքն ինձ հանձնելով՝ նա ասաց. «Գրի՛ր և հայտնի՛ր նախաձեռնողներին իմ հարգանքն ու համակրանքը» : Գիրքը ստանալով՝ յես կարդալու և ձեզ իմ խորհուրդները տալու ժամանակ չունեցա : Նախ կարդա ինքդ, ապա՝ ընկերներիդ հետ միասին : Ամառը ինքս կգամ՝ այն ժամանակ գործի մասին միասին կրմտածենք : Առ այժմ հաջողութուն եմ ցանկանում, վոր այդ հանրոգուս գործից հաղթանակով գուրս գաք» : 1900 թվին Ա. Աղեկյանը՝ Մեղրի վերադառնալով՝ մասնակցում է կազմակերպվող ընկերության կանոնադրութունը մշակելուն : Սպառողական կոոպերացիայի նշանակության մասին գրում և մի շարք հոդ-

վածներ : Այդ հոգիվածներով նա հանձնարարում է «Կոմիտասյան հայ հրատարակչական ընկերութիւնը՝ հրատարակել 1897 թվին հաստատված նորմալ կանոնադրութիւնը»՝ հայերեն լեզվով : Ժամանակն է, —ասում է նա իր գրովածքներով,—վոր հրատարակենք դատարկ բարոյախոսութիւնները : Դա չի՛ դուրսի վերածնութիւն ու-



ՅԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ .

զին : «Փոխանակ գյուղացուն նախատելու , ավելի լավ և մտածենք, —չարունակում է նա,—նրա համար այնպիսի կուլտուրական միջոցներ ստեղծելու մասին , վորոնց ոչնութեամբ կարելի չէ բարձրացնել գյուղացու տնտեսական վիճակը և նրա կենսային ֆակտորների միջև ստեղծել հավասարակշռութիւն : Այդ միջոցներից մինը , որինակ , հասարակական խանութների գաղափարն է» :

Վերջնականապես խմբադրված կանոնադրութիւնն ուղարկվեց նահանգապետին՝ ի հաստատութիւն : «Հասարակական խանութ» կազմակերպելու մասին 1899 թվի դեկտեմբեր 12-ին կազմած հասարակական համախոսականի հիման վրա՝ 1900 թվի դեկտեմբերին կրկին հավաքվեց գյուղական ժողով , վորը յիշգործեց

չնարեց : Վերջիններս իրենց կողմից ընտրեցին յերեք անձից բաղկացած վարչութիւն՝ յերեք տարի ժամկետով : Վարչութիւնը ձեռնարկեց անդամների ցուցակագրման . ընկերութիւն մեջ մտնելու համար սահմանվեց մեկ ուրլի մուտքի վճար և 10 ուրլի փախովճար : Յուրաքանչյուր անդամի համար փայտերի առավել քանակը վորոշվեց մինչև 30 : Չունեորների համար մուծման ժամկետի յերկարաձգում հաստատվեց՝ 10 տարվա ժամանակամիջոցով : Չունեորները լրիվ փայտեր անդամի իրավունքներ պետք է ձեռք բերելին՝ լրիվ փայտովճարը մտցնելուց հետո՝ միայն : Վո՛չ լրիվ փայտնեցողների դիվիդենտն իրենց ձեռքը չեւ տրվելու , այլ փերացվելու եւ նրանց փային :

Հավաքված փայտովճարներից և ընկերութիւնից փոխարինար վերցրած գումարներից կազմվեց չորս հազար ուրլու մի դրամագլուխ : Խանութի և սահեստի համար շենք վարձվեց : Ապրանքներ բերելու համար մարդ ուղարկվեց Թիֆլիս և , վերջապես , 1900 թվի դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ «Հասարակական խանութի» հանդիսավոր բացումը : Մեղրու գյուղացիական ընակչութիւն մեջ ստեղծվել էր հասարակական մեծ վորուորութիւն ու հրճվանք : Բայց դրա փոխարեն՝ չարութիւնը զգացումի հետ միախառնված խոր վհատութիւնն էր թագավորում առևտրական կապիտալիզմի ներկայացուցիչների շրջանում : Կազմակերպված ընկերութիւնը նրանց համար քայքայում ու մահ էր բերում : Յեվ ահա տեսնում ենք , վոր խանութը բացելու առաջին իսկ տարում՝ մի քանի առևտրականներ՝ քայքայվելով , իրենց ապրանքները հանձնում են նրան : Իսկ մի շարք խոշոր առևտրականներ՝ կորցնելով իրենց հաճախորդներին , լավ սարգված իրենց խանութներից անցնում են խղճուկ կրպակների : Իրենց հասարակական հակառակորդին մրցման միջոցով հաղթելու հնարավորութիւն չունենալով՝ առևտրականները վճռում են սպառողական ընկերութիւնը պայթեցնել ներսից : Այդ նպատակներով նրանք թափանցում են ընկերութիւն մեջ , մտնում են նրա խանութը՝ վորպէս ծառայողներ : Գնորդների հետ վատ վարվելով և ուրիշ խարդախութիւններով կոտակատիվի գործերի մեջ նրանք առաջացնում են զանազան խանգարումներ : Բոլոր այդ նենդութիւնները լրացվում են «հասարակական խանութից» կատարված գողութիւններ : «Ընկերութիւն վարչութիւնը կովի կտրուկ միջոցներ է ձեռք առնում ընդհանրութիւնամի տարրերի և սպառողական ընկերութիւնը մաքրում է նր-

րանց ներկայութեանից: Վարդեպի արտաքին կռիվն եւ վերջնա-
կանապէս զաղարեցնի՝ վարչութիւնը բանակցութեանն եւ ըս-
կսում զեռես մնացող վերջին խոշոր ատետրականի հետ, վոր սա-
իր ձեռնարկութիւնը հանձնի սպառողական ընկերութեանը: Ա-
ռետրականն՝ իրր այդպիսի հանձնումի պայման, առաջարկում եւ,
վոր ընկերութեան խանութում իրեն աշխատանքի հրավիրեն: Վար-
չութիւնը՝ արդեն դառը փորձեց դաս առած, մերժում եւ այդ ա-
ռաջարկը: Սակայն՝ չնայած այդ բանակցութեանն եւ անհաջո-
ղութեանը՝ ընկերութիւնը անտեսապէս ու կազմակերպչորեն ար-
դեն այնքան ամրացավ, վոր ատետրականների հետագա նենդու-
թիւնները նրա համար այլեւ սարսափելի չեղին: Իր գործունե-
թիւնի ատալին տարում ընկերութիւնը զնեց 12,207 ուսուցիչ
սպանք եւ ծախեց 8,848 ուսուցիչ: Նրա ընդհանուր յեկամուտը
991 ուսուցիչ եւ: 1903 թվին ցարական կառավարութիւնը բռնա-
դրովեց հայկական յեկեղեցիների կալվածքներն ու դրամագլուխ-
ները: Մեղրու յեկեղեցու դրամագլուխները կազմում էին մոտ
20,000 ուսուցիչ: Հասարակական ժողովն այդ ժամանակ գաղտնի
փորձում կայացրեց՝ պետական գործակալներին ցույց տալ այդ
գումարի մի շնչին մասը միայն, իսկ նշանակալի մասը, այսինքն՝
16,300 ուսուցիչ հատկացնել Մեղրու սպառողական ընկերութեանը՝
յոգատագործումն: Ընկերութեան հետագա անտեսական գործունե-
ութեան մեջ այդ դրամագլուխը եական ոժանդակութիւն հանդի-
սացավ: 1905 թվին, յերբ հայկական զպրոցները վերարացվեցին՝
այդ դրամագլուխ տոկոսները սկսեցին հատկացվել Մեղրու զպրո-
ցին: Ընկերութեան գործերն այնքան հաջող ելին ընթանում, վոր
նա շուտով արդեն ձեռք բերեց խանութի եւ պահեստի սեփական
շէնք: Տնտեսապէս ամրապնդված եւ վռաքի յեկած, ընկերութիւնը
չբավականացավ իր ստացած արդյունքներով: Նրան կյանքի կոչ-
ող նպատակն ավելի խոր եւ: Նա կայանում եւ, —ինչպէս մենք վե-
րեւում ասացինք, — «գանձաւան շարչի վաճառական խանութպանների
հարստահարութեանից ու խարերայութեանից ազատվելում», եւ
«կարելոյն չափ, տարեց տարի ընկնող անտեսական գրութեան
ատալն առնելում»: Սպառողական ընկերութիւնը փայ-
լուն կերպով լուծեց իր առաջ դրված մեկ խնդիրը—նա զյու-
զացիններին, վորպէս քաղաքային արդյունարբութեան սպրանք-
ներն ըսպառալի, ազատեց ատետրականների շահագործումից:
Բայց զեռես չլուծված եւ մնացել հիմնական խնդիրը— սպա-



Մեղրու կողպերատիվի մեռախազուրծարանը .

ցիական մանր տնտեսութիւնների ամբողջումը : Ապրանքա-դրամային հարաբերութիւնների զարգացման հետ՝ գյուղում գյուղացիական մանր տնտեսութիւնները կորցնում են իրենց կայունութիւնը և սասիճանաբար յենթարկվում պառուպերիզացիայի : Այս յերեւելթի պատճառները գտնվում են ստրկա-տնտեսական այն կախվածութեան մեջ, վորին յենթակա յե գյուղացիական մանր տնտեսութիւնը՝ առևտրա-ապրանքաուսկում կապիտալի նկատմամբ : Բայց քիչ թե շատ զարգացած ապրանքաուս տնտրական կապիտալն սկսում է հետզհետե իրեն յենթարկել նաև գյուղատնտեսական արտադրութիւնը : Այսպիսով՝ կապիտալիստական հարաբերութիւնների զարգացումը գյուղում—աղբյուր է դառնում գյուղացիական մանր տնտեսութիւնների քայքայման : XIX-րդ դարու վերջում և ներկա դարու սկզբում Մեղրու գյուղացիներն արդեն սկսել էին սուր կերպով զգալ հայկական գյուղում զարգացող կապիտալիստական նոր հարաբերութիւնների այդ հետևանքները : Իրենց կազմակերպած ընկերութեան մեջ նրանք տեսնում էին ինքնապաշտպանութեան միջոց՝ ընդգեմ գյուղում զարգացող կապիտալիզմի : Նրանք յերազում էին կոոպերացիայի միջոցով գյուղացիական մանր անհատական տնտեսութեան հիմքերն ամրապնդելու մասին : Մեղրու գյուղացին տնտեսական զարգացող այդ նոր հարաբերութիւնների ճնշումն զգում եր ամենից ավելի բամբակի և բրդի արտադրութեան ասպարեզում : Դրանք նրա տնտեսութեան ամենից ավելի ապրանքային բնագավառն էին : Այդ պատճառով՝ նա ամենից ավելի այստեղ եր զգում կապիտալիզմի ճնշումը : Նրա տնտեսութիւնն այստեղ գերի յեր ապրանքաուսական կապիտալին, վորն արդեն իր ձեռքն եր գրավել նաև հում նյութերի արդյունաբերական սկզբնական վերամշակման բնագավառը : Այս ձևով՝ մեղրեցու գյուղացիական տնտեսութիւնը լիակատար կախվածութեան մեջ ընկավ՝ կապիտալի տեղական «մազնատներից» :

Վորպեսզի իր անդամներին ազատի կապիտալիստական քայքայող շահագործումից՝ Մեղրու սպառողական ընկերութիւնը 1907 թվին կառուցեց իր բամբակադտիչ գործարանը . վերջինիս բացվելուց հետո՝ մասնավոր կապիտալիստական գործարանը փակվեց . վորովհետև զուրկ եր կոոպերատիվ արդյունաբերութեան դեմ մրցելու հնարավորութեանից : Իսկ 1911 թ. , ընկերութիւնը , արդյունաբերութեան ասպարեզի իր հաջողութիւններից թեւավորված՝ բացեց մեծաքանակական գործարան : Դրա հետ միաժամանակ՝

ընկերութեան տնտեսական կապերն արտաքին աշխարհի հետ այնպան ամրացան, վոր նա անդամ դարձավ այն ժամանակվա «Չակոսյուզին», «Սպառողական Ընկերութիւնների Մերձկասպյան Միութեանը» և մինչև անգամ «Սպառողական Ընկերութիւնների Մոսկովյան Միութեանը» : Բայց, իսկապես ասած, զարգացման այս վերելքը վորոշ ժամանակով ընդհատվեց 1914 թվի իմպերիալիստական համաշխարհային պատերազմի հետ կապված անցքերով :

Սակայն ինչպիսի հետագա բազմ ունեցավ այդ շարժման զարգացումը, վորի սկզբնական ողակը հանդիսանում է Մեղրու Սպառողների Ընկերութիւնը : Մեղրու պիտներների որինակը կարողացա՞վ արդյոք խախտել հայկական գյուղի դարավոր անշարժութիւնը և քաշել նրան նոր հասարակական-տնտեսական շարժման հունի մեջ : Վորպեսզի այս հարցին պատասխանենք՝ պետք է տեսնենք, թե իրենից ի՞նչ եր ներկայացնում հայկական գյուղը 19-րդ դարու վերջին և ներկա դարու սկզբին :

II.

Առևտրական կապիտալի զարգացումը հայկական գյուղում՝ 19-րդ դարու 80-ական թվականներին: Նրա հավասարեցնող ազդեցութեանը: Բնական տնտեսութեան քայքայումը: Գյուղացիական տնտեսութեան սպրանքա-դրամային տարրերի զարգացումը: Զարգացող առևտրական կապիտալիզմի ձեւերն ու նրա սուբյեկտները: Մշտական առևտուրը: Շուկայի (базарная) առևտուրը: Ապրանքաուսական կապիտալը, նրա կազմակերպչական ձևերն ու քայքայիչ ազդեցութեանը՝ գյուղացիական տնտեսութեան վրա: «Մանր վարկի հիմնարկները» առաջացումը՝ 900-ական թվականներին: Սպառողական կոոպերացիայի զարգացման թուլութեանը: Պատճառները—գյուղացու աղքատութեանը, քայքայվածութեանն ու սզիտութեանը: Ինտելիգենցիայի հող չունեցող ազգային նացիոնալիզմը: Ցարիզմը: Առաջին սպառողական ընկերութեանները կարսի շրջանում: Կոոպերատիվների առաջացումն ուրիշ շրջաններում: Սպառողական կոոպերացիայի շարժման բնույթը՝ մինչև 1914 թվի համաշխարհային պատերազմի ծագումը:



Անցյալ դարու 80-ական թվականներից Հայաստանի տնտեսութեան բնատնտեսական կարգը ելական փոփոխութեան և կրում: Բնական մթերային պահպանութեանը վերածվում և դրամի: Ուժեղանում և ուսական եժան Փարբիկատների ներմուծումը, փորոնք քիչ-քիչ մուտք են գործում մինչև անգամ գյուղի ամենախուլ անկյունները: Գյուղացին ամելի ու ամելի յե սկսում ընտերանալ քաղաքային արդյունաբերութեան սպրանքներին: Ահա, թե այդ առթիվ ինչ և գրում կովկասադեաններից մեկը, Ա. Ֆ. Լյախտերը.

«Գործածութեանից վերանում են,—ասում և նա,—հայուհիների ու թրքուհիների յուրահատուկ ազգային զգեստներն՝ իրենց անզը գեղեցիկ վերջին տարագով կարված զգեստներին ու «Այլաշանտեկլոր» գլխարկներին՝ փորոնց միջից նենգորեն դուրս են նայում սանդների ծայրերը...

«Այդ ժողովուրդների տնային պիտույքների ու գործիքների վրա մենք տեսնում ենք յեվրոպական քաղաքակրթութեան մի և նույն

հավասարեցնող, անխղճ սղգեցութեանը: դրամաֆոններն ու պլաստիկաներն արդեն փոխարինում են «դուռնային» և «սազանդարին»։ վայրենի քրդի յայլաներում դուք Պոպովի թեյն և ք խրմում՝ Տուրայի փայլուն սամավարներից: Սպիրտի «պրիմուս»-ով չատ տեղերում փոխարինվել և նախկին ոջախը: Կանցնի ևս մի փոքր ժամանակ՝ և նախապատմական չութ-կարթը, վորով մարդն աչխատում էր այն ժամանակ, յերբ նա թափառական դրութեանից նոր էր անցել նստակյաց կյանքի և վորը դեռ ևս պատահում է Յերեվանի նահանգում, կփոխարինվի ամերիկյան արտադրութեան մեքենաներով. կայսող կամը՝ նրա մեջ ցցված կայծաքարի սուր ծայրերով,—վորով յեզիպտացիները կայսում էյին փարավոնների ժամանակ,—կփոխարինվի գորտչու շարժիչ ունեցող կալսիչ մեքենաներով: «Սիմպատիա» ծխախոտով վերջնականապես կփտարվի բանաստեղծական կայլանը. չոքեմեքենայի սուլիչն իր տերբիտորիայի վրայից վերջնականապես դուրս կքշի ուղտերի աստվածաշնչական քարավանները, փորոնք այնպես բանաստեղծորեն գրընդացնում են իրենց զանգակներն աստղերի ներքո՝ Արաքսի ամայի հովտում և այնպես սքանչելի ներդաշնակվում են աստվածաշնչական Արարատի սպիտակածյուն դանդավածային պատկերի հետ, և ավտոմորիլը կփոխարինի սայրերին, փորոնց լծվում են նախապատմական գոմեշներ»:

Հայկական գյուղում՝ ուսական եժան Փարբիկատների մուտք գործելու հետ միասին՝ տնային արդյունաբերութեան ճյուղերը մեկ առ մեկ անջատվում են գյուղացիական տնտեսութեանից: Ուսական գործարանն սկսում և Հայաստանի տնային արդյունաբերութեանը մեղցնել: Դրամի սուր պահանջը և բյուջետային հավասարակշռութեան խախտումը, նաև, ի միջի այլոց, տնային մի շարք զրազմունքների վերացումը, գյուղացիական տնտեսութեանը մզում են դեպի չուկայի պահանջներին հարմարվելու ճանապարհը: Տնտեսութեան հին կազմակերպութեանը յենթարկվում և հայտնի կերպարանափոխութեան: Բնական տնտեսութեանից նա սկսում և վերածվել սպրանքայինի: Շուկան դատում է գերիշխող ուժ: Այդ անվորոշ չուկայի հանդեպ՝ գյուղացիական մանր արտադրողը՝ թողնված ինքն իր սեփական ուժերի ինամքին՝ համարյա բոլորովին անպաշտպան մի ելակ և հանդիսանում: Յեթև նա դեռևս միանգամայն ազատ կերպով կարողանում և փորփրել իր հոգի կտորը՝ սպավելով սպիտակահեր հնութեանից

Ժառանգած ձևի տեխնիկայով, ու արտադրութեան միջոց-
 ներով և իրեն ինքնադուրի տեր և զգում մի պատաս և ողի վրա .
 ապա նա միանգամայն անպաշտպան արարած և դառնում ,
 յերբ սկսում է չիման մեջ մտնել արտաքին աշխարհի հետ : Այս-
 տեղ նրա առաջ բացվում է ընդարձակ ու անորոշ շուկան : Ծա-
 նոթ լինելով արտադրութեան տեխնիկային՝ նա անփորձ ու ա-
 նոգնական է դառնում , յերբ նրա առաջ կանգնում է «իր
 ձակատի քրտինքով» արտադրածը վաճառելու անհաղթելի
 խնդիրը : Վո՞րտեղ, ո՞ւմ և ինչպե՞ս վաճառել : Նա այդ
 բանը վո՞րտեղից պետք է իմանա : Արտաքին աշխարհը ծած-
 կելով է նրանից անթափանցելի վարագույրով : Բացի այդ՝ մի՞թե
 նա կարող է յերկար սպասել : Նրան դրամն՝ անչափ անհրաժեշտ
 է : Ո՞ւմ վաճառի : Յե՞վ հենց այստեղ է , վոր նրան ողնութեան և
 հասնում մի նոր կերպարանք մի նոր անձ ,—ապրանքա-դրամային
 տնտեսութեամբ հենդես յեկած մասնավոր առևտրական միջնորդը ,
 վոր իր ծառայութեաններն է առաջարկում՝ վորպես գյուղացու և
 անորոշ շուկայի միջև կապ ստեղծող մի ողակ : Այսպիսով Հայաս-
 տանի մանր գյուղացիական տնտեսութեանը հին և նոր դարերի
 «համանագծում» ստրկանում է առևտրա-միջնորդային կապիտա-
 լին , վորը դառնում է նրա քայքայման ու աղքատացման աղբյուրը :
 Զարգացող առևտրական կապիտալի ներկայացուցիչները միևնույն
 ժամանակ դառնում են գյուղական հասարակակալութեան համար-
 յա միակ կազմակերպողները : Գյուղական աշխարհը նրանց միջո-
 ցով է չիման մեջ մտնում արտաքին աշխարհի հետ : Գյուղացիա-
 կան աշխարհի ներսում նույնպես նրանք դառնում են այն ուղակ-
 ները , վորոնցով սկսում են իրար հետ կապվել գյուղացիական ա-
 ռանձին , ինքնամիտի տնտեսութեանները : Այս ձևով՝ առևտրական
 կապիտալն իր շոշափուկներով սկսում է հեռահեռ ընդ-
 գրելել հայկական գյուղը : Ապրանքա-փոխանակային առևտրի
 ձևը պահպանվում է միմիայն ամենահեռավոր , կամ
 քաղաքային կենտրոններից կտրված շրջաններում : Այդ
 շրջանների գյուղացիները դիմում են դրան՝ ձեռք բե-
 ռելու համար իրենց անհրաժեշտ այն մթերքները , վոր ի-
 րենք անայն սեփական արտադրութեամբ չեն պատրաստել : Այս-
 պես , որինակ՝ այգեգործ գյուղացիները հաճախ իրենց մթերքնե-
 րով փոխանակութեան են կատարում առատ հաց , կամ վորեւե այլ
 մթերք արտադրող գյուղացիների հետ : Այդպիսի փոխանակային

առևտուր գոյութեան ունի վո՞չ միայն տարբեր շրջանների , այլև
 միևնույն գյուղի տարբեր բնակիչների , գյուղացիների միջև : Բայց
 փոխանակութեան այս ձևը չի , վոր տիպիկ է հանդիսա-
 նում նոր ժամանակների համար : Նա հատուկ է տնային
 բնական տնտեսութեան : XIX-րդ և XX-րդ դարերի սահ-
 մանագծում , ինչպես մենք վերևում ասացինք , հետզհետե փո-
 խանակութեան գերիշխող ձև է դառնում կապիտալիստական ա-
 ռևտուրը : Վերջինիս կազմակերպման ձևերն ընդունում են բազմա-
 կերպ ու տարրինակ բնույթ : Այդ ձևերից ամեն մեկն ունի իր բը-
 նութեանը հատուկ և յերանգավորված կրողը : Ահա ձեզ առևտրի
 կազմակերպման՝ հայկական գյուղերում ամենից ավելի տարած-
 ված ու տիպիկ ձևերից մեկը : Առևտուրը կրում է մշտական բը-
 նութ . այսինքն՝ առևտրական ձեռնարկը կազմ է գյուղացիական
 բնակչութեան ունեցող և աշխույժ մի վորոշ վայրում : Գյուղական
 առևտրի այդ տեսակ կազմակերպման սուբյեկտը ,—գրում է Ա . Գ .
 Յերիցովը , վերահիշյալ ժամանակվա հայ գյուղի տնտեսական
 կենցաղը գիտցողներից մեկը ,—ներկայացնում էր իրենից «ինչ վոր
 միջին բան՝ քաղաքացու և հողագործութեան նվիրված գյուղացու
 միջև : Մեծ ձանադարհի վրա կրպակ ձեռք բերելով , կրպակի տերը
 գյուղական հասարակութեանից չի առանձնանում և իր ձեռքին է
 պահում իր հողաբաժինը : Նա հարկ է վճարում և ուրիշ
 գյուղացիներին հավասար չափով կրում է պահութեան-
 ներ : Նա ունի վարելահող , այգի և անասուններ , վոր նրան
 չեն խանգարում առևտուր անել նաև իր կրպակում :
 Այստեղ , իր հարմարավոր չենքում , նա դարսած ունի
 ամեն տեսակ ապրանքներ և բոլորից էլ՝ քիչ քանակութեամբ :
 Դարակների վրա թողափորում է տարրինակ խայտաբղետու-
 թյուն : Կես շշանոց փրփրուն «դոնսկոյի» կոզքին դրված է պրո-
 վանսյան հոտած յուղով լի աման . անչուսի՝ ձանձի կեղտերով
 ծածկված տուփի կոզքին փայլում է վակալ , այգետեղ են գրված
 թեյը , մախորկան , կանֆեկտները , պանիրը , շաքարը , ծխախոտն
 ու սարգինները : Մի կողմում դարսված է ձոթեղենը : Վաճառա-
 տեղանի տակ՝ կերտսինի տակառի հարևանութեամբ , պառկած են
 գինով և ողիով լցված տիկերը : Առաստաղից խումբ-խումբ կախ-
 ված են ստերինի մոմեր և բրբեկոպիտ գուրպաներ : Պատերին
 կախված են սուզղայյան արտադրութեան ռազմականներ և այլն» :
 Արտաքինով համեստ այս կրպակում բաժարարվում են տեղական

բնակչութեան բոլոր կարիքներն՝ ըստ վորում, տեղի յի ունենում
 գլխավորապես սպրանքա-փոխանակային առևտուր: Այստեղ
 խաչնարածն իր կաթնամթերքները փոխանակում է ձօթեղենով,
 այստեղ վաճառում է գտնում նաև գյուղացիական անտեսութեան
 ամեն մի արտադրութեանը: Կրպակատերը կարիքափոքներին վար-
 կավորում է փոքրիկ գումարներով, շատերին փրկում է նեղ վի-
 ճակից, թեև, միևնույն ժամանակ, յերախտահատուց չօվանա-
 վորջաղները նրան պարգևատրում են՝ մեկին յոթով: Նա գնող ու
 վաճառող է, նա կապալառու է, արենդատուր է, բանկիր, վաչ-
 խառու է մեկնույն ժամանակ զբաղվում է ձիեր ու յեղներ պայտե-
 լով: Այսպիսի բազմակողմանի գործունեութեամբ գյուղացի կըր-
 պակատերն իր գյուղի հասարակութեան մեջ հատուկ հարգանք է
 վայելում: Գյուղի ժողովներում նրա ձայնն ավելի բարձր է
 հնչում և նա հաճախ ղեկավարում է գյուղական համայնքի գոր-
 ծերը: Այս է գյուղի մշտական առևտրի տարածված տիպերից
 մեկը: Այսպիսի դեպքում ընդհարապես առևտրական ձեռնարկը
 տեղավորվում է խճուղային մեծ ճանապարհի վրա: Դրանով պետք
 է բացատրել սպրանքների բավական տարորինակ աստրտեմենտը:
 «Գոնակոյ կես շանոց շամպայնը», տուփերով անչոուն ու սարգինը
 նախատեսված են վորեև անցորդ սպայի կամ քաղաքային գործա-
 բարի համար: Բայց մնացած իր բոլոր կողմերով՝ այդ ձեռնար-
 կութեանը, սարգի նման՝ ամեն կողմից պատում է գյուղացիական
 անտեսութեանը: Նրա տերը գյուղական «աշխարհակուլ գորան
 է», վոր վեր է սողացել հենց գյուղացիութեան ծոցից: Նա «ուսի-
 վերսալ» շահագործող է, վոր իր անձի մեջ միավորում է ամենա-
 բազմազան անտեսական Փուենկիաներ: Բայց քանի վոր նրա կա-
 տարած «հանրուտա Փուենկիաները» (վարկ, գնում է վա-
 ճառք և այլն), ղեռ հասարակայնորեն անկազմակերպ են, ապա
 համազուգացիների կողմից նա գնահատվում է—վորպես գյու-
 ղական «բարերար»՝ գյուղի առաջին մարդ: «Գրագետ գյուղա-
 ցիական յերիտասարդութեանը նրա վրա նայում էր քծնողարար՝
 յերագելով՝ վոր ինքն էլ ապագայում կնմանվի նրան՝ վորպես իր
 իզեալին:

Խճուղային ճանապարհներից հեռու գտնվող վայրերում գյու-
 ղական առևտրի կազմակերպման ձևը փոփոխութեան էր յենթակա:
 Գյուղական շատ հասարակութեաններ արգելում էին վո-
 ղելից խմիչքների հրապարակային վաճառքն՝ իրենց մոտ: Ծնոր-

հիվ այդ բանի՝ ձօթեղենի և այլ սպրանքների մշտական առևտու-
 րը շահ քիչ էր տալիս: Նման դեպքերում մշտական առևտու-
 րը փոխարինվում էր շրջիկ առևտրով: Այս ձևի առևտուրով
 զբաղվում էին շրջիկ մանրավաճառները, կամ «գալալները»,
 վոր ձօթեղենի և այլ մանրունք սպրանքների կապոցով շրջում
 էին գյուղից գյուղ: Այս «առևտուրը» անչափ շահավետ էր
 շրջիկների համար, բայց չափազանց քայքայում էր գյուղացուն:
 Վերջինս՝ շուկայի գների մասին վոչ մի գաղափար չունենալով,
 յիակատար կախման մեջ էր ընկնում «գալալից» և իր անտեսու-
 թեան սպրանքները փոխանակում էր քաղաքային ամեն մի փտած
 բանի հետ:

Գյուղական առևտրի կազմակերպման վերոհիշյալ ձևերի կող-
 քին պետք է հիշել նաև գյուղական շուկաների առևտուրը: Գյու-
 ղական այդ շուկաները սովորաբար տարբվում են ամենից ավելի
 խիտ բնակչութեան ունեցող և մեծ ճանապարհների խաչաձևման
 վրա ընկած գյուղերում: Նրանք պարբերական բնույթ են
 կրում: Այդտեղ գյուղացիները հավաքվում են՝ իրենց սպրանքը
 վաճառահանելու: Այդտեղ՝ վորպես ուրուրներ՝ քաղաքներից գա-
 լիս, խմբվում են գնորդներն ու դանազան տիպի առևտրականներ:
 Գործառքները տեղի յեն ունենում կանխիկ հաշվով: Բայց առևտրի
 այդ ձևից մեծ շահ ստանում են միայն ունեւոր գյուղացիները, վո-
 բոնք լավ գների սպասելու հնարավորութեան ունեն: Իսկ աղքատ-
 ները, զրամի սուր կարիք զգալով՝ իրենց արտադրանքը չնչին
 գնով են վաճառում, և «գժվար թե,—նկատում է գյուղացիների
 անտեսական կենցաղն ուսումնասիրող Խ. Ա. Վերմիշեր,—նշանա-
 կալի չափով ավելի են ստանում նրանցից, ովքեր սախպված են
 իրենց արտադրանքի վաճառքը կապել վարկային դանազան գոր-
 ծառքների հետ»: Ի հարկե, հասկանալի յե, վոր այդ շուկաներում
 գործը գլուխ չի գալիս՝ առանց ավելի չափելու, ավելի կշռելու և
 խարեյութեան, վոր առևտրական կապիտալի դանազան տեսակ ներ-
 կայացուցիչները գործադրում են խավար գյուղացիութեան նկատ-
 մամ:

Սակայն՝ հայկական գյուղում զարգացող առևտրական կապի-
 տալի մի ամենավատթար ձև հանդիսանում էր ապրանքառու-
 կան կապիտալը: Նա իր նուրբ ու բազմազան շոշափուկների մեջ էր
 առնում գյուղացիական մանր-անհատական անտեսութեանը՝ հան-
 չխանալով քայքայման ու աղքատացման սղբյուր: Ըստ վորում՝


հաճախ, նրա՝ սպրանքատուական կապիտալի համար կաշուն չու-
 չափուկներ ելին հանդիսանում գյուղական տուարի կազմակերպ-
 ման վերելում հիշված ձևերը: Վորպեսզի գյուղական անդաշտայան
 արտադրողին ավելի մարտը կողոպտի՝ նա հաճախ բնդունում եր
 մեկաշնորհակամ ձևեր:

Ապրանքատուների սինդիկատները սովորական յերևույթ ելին:
 Երբ-Ֆայագեղ գալաուի ուսումնասիրող Գ. Պարվիցկին այն (ժամա-
 նակ գրում եր) . ամբողջ գալաուր «տեղական վաճառականների կող-
 մից բաժանված ե չըջանների, վորոնցում առևտուր կատարելու
 իրավունքը, վաճառականների միջև կայացած փոխադարձ համա-
 ձայնությամբ, պատկանում ե նրանցից վոր ե ե մեկին: Այդպիսի
 վաճառականները, կամ ինչպես նրանց անվանում են, մուզիտար-
 ներն, իրենց չըջաններում ունեն կրպակներ՝ ձոթեղենով ե այլ
 սպրանքներով, վոր բնակիչներն՝ ըստ իրենց կարիքի, վերցնում
 են մեծ մասամբ ապառիկ: Ամաուր կամ աշնանը վաճառական-մու-
 զիտարները պատում են իրենց չըջանի գյուղերում, կամ այդ նորա-
 տակով ուզարկում են իրենց գործակատարներին՝ վորպեսզի,
 բաց թողնված սպրանքների փոխարեն բնակիչներից ստանան ցո-
 բեն, գարի, խոշոր ու մանր յեղջյուրավոր անասուններ, իսկ քա-
 ղաքամոտ գյուղերում՝ բացի գրանից՝ նաև խոտ ու աթար: Ըստ
 վորում՝ դրամի փոխատրումն ապահովում են այնպես, վոր
 պարտքը վերադարձի առաջիկա հնձի մթերքներով ե շուկայի գը-
 ներից նշանակալի չափով ավելի ցած գնով: տոկոսները վճարումը
 ակզի յե ունենում նույնպես հացահատիկով: Ժամանակին չվճար-
 վող պարտքերի համար հրեշավոր դանցատուզանք ե սահման-
 վում: չափում ու կշուում խարում են ե, վերջպես, հացահատի-
 կը քաղաքային արդյունարերության սպրանքների հետ փոխանա-
 կում նշանակալի ոգուտով—սրանք են,—ատում ե Գ. Պարվից-
 կին,—մթերքների գնման այն կերպերը, վոր գործադրվում են
 կուլակ առևտրականների կողմից: Գյուղացիության աղքատու-
 թյունը, կարիքավոր գյուղացիներին եժան փոխատուություն բաց
 թողնող վարկային հիմնարկների բացակայությունը,—վոր աղ-
 քատ մասին ստիպում ե իր արտադրությունը վաճառել բերքը ժո-
 գովելուց անմիջպես հետո, յերբ գներն ամենից ավելի ցած են
 լինում, կամ մինչև իսկ՝ բերքը ստանալուց չատ ավելի վաղ—ահա
 այն բարենպաստ հոգը, վորի վրա աճել ե հացի գոյություն ունե-
 ցող առևտուրը»:

Ալեքսանդրապոլի գալաուի նկատմամբ նույն յերևույթն ե
 ընդդժում մի ուրիշ ուսումնասիրող—Ջելինսկին: «Իր արտադը-
 բությունը վաճառահանելու ժամանակ,—ընդդժում ե նա,—գյու-
 ղացին հաղվաղեպ ե գործ ունենում ուղղակի սպառողի հետ:
 Ալեքսանդրապոլ քաղաքում սպրում են բազմաթիվ արդյունարե-
 բողներ, վորոնց առևտուրը կայանում ե գյուղացիներին անհրա-
 ժեշտ սպրանքները վարկով բաց թողնելում, կամ նրան փոխա-
 բինարար դրամ տալում՝ պարտքը գյուղատնտեսական մթերքնե-
 րով հատուցելու պայմանով, ե, ի հարկե, դրա համար նրանք ըս-
 պատում են այնպիսի մոմենտի, յերբ գյուղացին գանվում ե ա-
 մենաանյեթանիլի դրության մեջ, ինչպես, որինակ՝ հարկը հավա-
 րելու, անասունների համաճարակի, թաղման ե այլ ժամանակ:
 Այսպիսի դեպքերում գյուղացիներն անխուսափելիորեն ըս-
 տիպված են վաճառականներին դիմել՝ գալիք հունձի հաշվին ան-
 հրաժեշտ իրեր գնելու համար: Հասկանալի յե, վոր վաճառական-
 կուլակը չի քաշվում՝ իր սպրանքը մեկին յերեք թանգ վաճառե-
 լուց, կամ գյուղացուն փոխարինարար դրամ ե տալիս այնպիսի
 հսկայական տոկոսներով, վոր, այդպիսով նրան խճճում ե ամե-
 նատնյեթանիլի ցանցերի մեջ»: Ապրանքատուական-առևտրական
 կապիտալի կողմից կատարվող այդպիսի անողք շահագործման
 շնորհիվ՝ գյուղացիական մանր արտադրողը համարյա վոչ մի
 գրդում կամ հնարավորություն չի ունենում՝ իր տնտեսությունը
 ակինիկապես բարելավելու: Պրիմիտիվ, հին մշակումից հյուժ-
 ված հողն արդեն չի կարողանում կերակրել գյուղական աճող
 բնակչությանը: «Հողը ծերացել ե, վաւ բերք ե տալիս»—հաճախ
 կարելի յե լսել գյուղացիությունից: Յեթե առաջ հացի հունձը,—
 ասում ե ներկա դարու սկզբի Հայաստանի գյուղացիական տնտե-
 սությունն ուսումնասիրողներից մեկը,—տալիս եր մեկին 12-15,
 ապա այժմ՝ տալիս ե մեկին 4-5, բայց կան ե տեղեր, վորտեղ տա-
 յիս ե մեկին 2-3: Առաջ թողնում ելին, վոր հողը 3-4 տարով հան-
 գատանա՝ այժմ այդ մասին մտածել անգամ չի կարելի—վարում
 են մինչև իսկ արոտատեղիները: Աթարը՝ պարարտացման վրա
 պարծադրվելու փոխարեն, վաճառքի յե հանվում՝ վորպես վառե-
 լիք: Ապրանքատուն գյուղացու մոտ չի թողնում անգամ նրա կեն-
 դանիները կերակրելու համար անհրաժեշտ խոտը»: Յեվ զարմա-
 նալի չի, յեթե գյուղացիական տնտեսությունը քայքայվում եր
 ե մասսայական աղքատացման եր յենթարկվում:

Ապրանքատուական կապիտալի կողմից գյուղացիական տնտեսութեան նկատմամբ կիրառվող նույն վնասակար, քայքայիչ դործունեյությունն անհրաժեշտ է բնագծել հարթավայրերի գյուղատնտեսութեան այնպիսի մի կարևոր ասպարեզում, ինչպիսին բամբակագործութեանն է: «Բամբակագործութեան համար վնասակար ապրանքատուական գործունեյությունը,—գրում է XX-րդ դարու Հայաստանի բամբակագործական շրջանի ուսումնասիրողը,—հասել է այնպիսի սահմանների, վորոնցից այն կողմնանցներն անհնարին է: Բամբակի առևտրի Ֆիրմաների ներկայացուցիչների ցուցմունքով՝ Յերևանի նահանգում արտադրված ամբողջ բամբակի քանակութեանից Ֆիրմաներն անմիջականորեն արտադրողներին չեն ձեռք բերվում անգամ մեկ հինգերորդ մասը և բամբակը շուկա բերելը համարյա բացակայում է, վորովհետև, այդ արժեքավոր միջերջի առևտուրը գտնվում է ապրանքատուների ձեռքում, վորոնց հետ և ստիպված են գործ ունենալ Ֆիրմաները: Այսպիսի դրութեյունը ստեղծվում է նրանով, վոր ապրանքատու կուրակներն արտադրողներին զարնան դեմ,—յերբ գերջիններս գրամի կարիք ունեն՝ հարկեր վճարելու, բանվորներ վարձելու և պաշարեղեն գնելու համար—տալիս են փոխառութեյուն, պարտավորութեյամբ՝ վոր արտադրողը՝ նրանց, զարնանը նախապես պայմանավորված գնով՝ իր պարտքի քանակին համապատասխան բամբակ տա... Գարնանը կուրակ—ապրանքատուները սովորաբար բամբակի համար գրամ են տալիս՝ հում նյութի փութը 1 ս. 20 կ. հաշվելով: Գյուղացին՝ զարնանը 12 ուրբու փոխառութեյուն ստանալով, բերքը հավաքելուց հետո՝ իր պարտատիրոջը պետք է հանձնի 10 փութ բամբակ, վոր ստնվազն արժե 28 ուրբի. այնպե՛ս, վոր իր հիմնական պարտքը դուրս յեկած՝ գյուղացին ինն ամսվա համար վճարում է 133%, վոր անում է տարեկան 176%... Բամբակի առևտրի այդպիսի վիճակը արևուր կերպով է անդրադառնում բամբակի արտադրողների շահերի, ինչպես և հենց բամբակի արտադրութեյան վրա: Բամբակի առևտրով զբաղվող Ֆիրմաների ներկայացուցիչներին վկայութեյան համաձայն՝ արտադրողներին հասնում է Ֆիրմաների կողմից վճարվող գնի կիսից վոչ ավելին: Փթին 10 ուրբի վճարելու զեպքում՝ արտադրողները ստանում են 4-5 ուրբուց վոչ ավելի, իսկ մնացածը գնում է մանր ու մեծ միջնորդների գրպանը: Արտադրողների ձեռքը հասնող այդ փոքրագույն վճար

քը այն միևնույն է, վորից ավելի աշխատավարձը չի կարող ընկնել: Դրա հետևանքով՝ բամբակի վորակն այնքան էլ չի հետաքրքրում արտադրողներին: Այդ պատճառով՝ արտադրողն իր լոյրը ջանքերը գործադրում է այն ուղղութեյամբ՝ վոր իր բամբակի քաշն ըստ հնարավորին մեծ լինի. այդ նպատակին հասնելու համար կանգ չի առնում վոչ բամբակը սպիտակ կավով ու քարերով կեղտոտելու, վոչ էլ թուշելու առաջ: Գնորդներն իրենց հերթին, իրենց ջանքերը լարում են, վորպեսզի արտադրողից ըստ հնարավորին շատ բամբակ ստանան՝ կշռի մեջ խաբելով՝ և թեղի վորակի վրա հատուկ ուշադրութեյուն չդարձնելով»: Այդ նույնպիսի պայմաններում եր գտնվում հարթավայրերի գյուղատնտեսութեյան մի ուրիշ կարևոր ճյուղը—այգեգործութեյունն ու գինեգործութեյունը: Շնորհիվ այստեղ ևս թագավորող ապրանքատուական կապիտալի՝ մանր այգետերերը հաղիվ էլին կարողանում սովորական աշխատավարձ ստանալ: Այսպես՝ մանր այգետերերը զարնանն իրենց խաղողը վաճառում էլին խաղվարը (30 փութը) 8 ուրբիով, մինչդեռ աշնանը խաղողի սովորական գինն էր—խաղվարը 22-23 ուրբի, իսկ վորոչ տարիներում հասնում էր մինչև 30 ուրբու:



Մենք այսպիսով ծանոթացանք այն հիմնական ձևերին, վորոնցով արտահայտվում էր առևտրական կապիտալի զարգացումը՝ հայկական գյուղում, սկսած անցյալ դարու վերջին քառորդից: Այդ ձևերը, ինչպես մենք վերևում ցույց տվինք, չափազանց զանազանակերպ էլին: Բայց, չնայած դրան՝ նրանց էյութեյունը միևնույնն էր: Քայքայելով մինչ այդ ժամանակները թագավորող բնական տնտեսակարգի և նրա վրա հենվող ընտանեկան-նահապետական հարաբերութեյունների հիմքերը՝ գյուղում զարգացող առևտրական կապիտալիզմը հավասարակշիռ վիճակից հանում էր նաև գյուղացիական մանր տնտեսութեյունը՝ նրա դանդաղ քայքայման ու մասոսյակական աղքատացման աղբյուրը դառնալով: Կապիտալիզմի գիչատիչ այդ ձևի դեմ կովելու գործում անդոր ու անողնական էլին հանդիսանում XX-րդ դարու սկզբի հայկական գյուղի փոչիացած, իրարից բաժան գյուղացիական մանր տնտեսութեյունները: Գյուղացիութեյունը խաղար, ճնշված և անբնական էր վոր և է ինքուրույն նախաձեռնութեյան համար: Նա ուրիշ

վոչ մի կապ չեր ճանաչում, բացի հասարակական-անասական ստրկութեան կապերից: Ռուսական արտոյուտիզմն, իր հերթին, իր յերկաթե կրունկի տակ ճնշում էր դյուզադիական հասարակա-կայնութեան տեղ-տեղ առաջացող արթնացման ամենափոքր ար-տացուումներն անգամ:

Իսկ ինչ վերաբերվում է գյուղական «մտավորականութեանն», ապա նա գտնվում էր քաղաքականապես ձևակերպվող ազգային ոտմանտիզմի հիպոտի ներքո: Մենք վերևում արդեն մտանանչե-ցինք, վոր XIX-րդ դարու 70-ական թվականներից հայ հասարա-կական կյանքի ստպարեղում աղմուկով հրապարակ է գալիս կա-պիտալիստական առաջադեմ մանր բուրժուազիան: Նրա իղեկոր-դիան արտացոլումն էր առաջացող կապիտալիզմի պահանջների: Այդ իսկ պատճառով, ինչպես ամեն տեղ, նույնպես և հայերի շրջա-նում, այն ժամանակ թագավորող գավառական բարբառների փո-խարեն ազգային լեզու ստեղծելու պրորբեմի հետ միասին՝ նա առա-ջադրում էր հայ ազգը «ձևակերպելու և հավաքելու խնդիրը»: «Այն ազգը, ասում է Գ. Արծրունին, առաջադեմ այդ մանր բուրժուազիայի իղեկորը, — վորի անգամներն իրանց մեջ չունեն վոչին հասարակական կապեր, վորոնք անդադար աշխարհի չորս կողմը ցրվում են, վորոնք չզիտեն միասին ապրել, միասին իրանց ցավերն ու ուրախութեանները տանել, — այդ տեսակ ազգ — ազ-գութուն չէ, նա մինչևի անգամ հասարակութուն չէ, — այլ միայն մի աղանդ է»: Հայ ժողովրդի յերկու անջատ մասերի — տաճ-կահայերի ու ուսասահայերի — մի ընդհանուր հարկի տակ ապրելը և նրանց մի «ազգի» մեջ միավորելը գտնում է կապիտալիստա-կան մանր բուրժուազիայի քաղաքական յերազը: Ազգի այս «հա-վաքումը» հայտարարվում է՝ վորպես բոլոր շարիքներից ու ցա-վերից փրկող ունիվերսալ միջոց: Նա իր հետ պետք է բերի «վոսկի դարը»: Մնացած բոլոր խնդիրները հետին պլանն են նետվում: Ըստ վորում՝ ինքը հայ ժողովուրդը գիտվում է «վորպես Ռուսաց-տանի խնդիրները Փոքր Ասիայում իրականացնելու միջոց» (Գ. Ար-ծրունի): Այսպիսով՝ հայկական ազգային ոտմանտիզմը վերած-վում է ուսական իմպերիալիզմի գործիքի, իսկ հայ ազգային իրա-կանութունը՝ յերազի: Ազգային ոտմանտիկայի այդ հիպոտի ներքո՝ կոնկրետ իրականութունը դադարում է ուշադրութեան ու հոգսերի որչեպ լինելուց: Ընդհակառակը՝ նա միմիայն խանգա-րում է ազգային միութեան «վոսկի դարին» վերաբերյալ քաղցր

յերազներին աջակցելուն: Այդ հոսանքը XIX-րդ դարու 90-ական թվականներին իր քաղաքական ամենացայտուն արտա-հայտութունն է գտնում «Դաշնակցութուն կուսակցութեան» մեջ, վոր մի շարք տասնամյակների ընթացքում գտնում է հայ հասարակական մտքի կազմակերպիչը: Բնական է, վոր հայ գյուղական «մտավորականութունը», մեծա-մասնությամբ գտնվելով մանր-բուրժուական ազգային ոտ-մանտիկայի այդ թունավոր արբեցման մեջ, քիչ էր հետա-քրքրվում այն աննախանձելի իրականությամբ, վոր հայկական գյուղում ստեղծվել էր առևտրական կապիտալիզմի զարգացման հետ միասին: Փոխանակ այդ «իրականութեան» դեմ պայքարի իրական ուղիներ վորոնելու, նա ուղիներ էր վորոնում «Ազգային միութեան» յերազների մեջ: Զարմանալի էլ չի, յեթև այդ «մտա-վորականութունն» ընդունակ չգտնվեց՝ հայկական գյուղում նոր հասարակական կոոպերատիվ շարժման պիտները հանդիսա-նալու: Ծիշտ է, վոր ներկա դարու սկզբից աշտտեղ յերևան են գալիս «մանր վարկի հիմնարկների» առաջին ընձյուղները — վո-խատու-խնայողական վարկային ընկերութուններ: 1913 թվի սկզբին այդ հիմնարկների թիվը 50-ի էր հասել: Իսկ նրանց մեջ համախմբված անտեսութունների թիվը 22, 913 էր, կամ նրանց պորժոնները յերազի շրջանների բոլոր անտեսութունների 15, 3 տո-կոսը: Այդ «հիմնարկները», կամ «գյուղական բանկերը», ինչպես նրանց գյուղացիներն էլ ին անվանում, տնկվում էլին վերևից — պետական ստաիճանավորների, մանր վարկերի ինսպեկտորների կողմից: Ըստ էյութեան՝ նրանք կիսակոոպերատիվ կազմակեր-պութուններ էլին՝ համարյա թե գուրկ իրենց մեջ մտնող մաս-սանների ամեն տեսակ ինքնագործունեյութունից: Կիսակոոպական այդ հիմնարկների միջոցով ուսական արտոյուտիզմը հետագն-դում էր միաժամանակ յերկու խնդիր — առաջինը՝ ունենալ քիչ թե շատ ձևաապահ հարկ վճարողներ — ինչպես մենք վերևում տե-սանք, առևտրական կապիտալիզմի զարգացումը տանում էր գե-պի գյուղացիութեան քայքայում ու ազքատացում, իսկ ազքատը ձգմելու համար վատ հետարան է: Յերկրորդը՝ ի նկատի յեր առ-նվում, վոր այդ «հիմնարկութունները» ոգտագործությամբ կա-րելի յէ գյուղացիութունը տնտեսապես սարկացնել արտոյու-տիստական պետութեան ձեռքում: Մենք այտտեղ չենք չուսվի այն հարցը, թե արտոյուտիզմն ինչ չափով հասավ իր նոյստակնե-

րին: Մեկ համար կարեւորն է՝ ընդգծել միայն, վոր այդ «մանր վարկի հիմնարկութիւնները» չի կարելի դիտել վորպէս իսկական հասարակական-կոոպերատիվ շարժման սկիզբ: Այնուամենայնիվ, հայերի առաջին իսկական կոոպերատիվ կազմակերպութիւնը Մեղրու սպառողական ընկերութիւնը պետք է համարել: Բայց անցաւ 10 տարուց ավելի և Մեղրու «պիտներներ» սկսած գործը արժանավոր արձագանգ չգտավ: Դրա պատճառները պարզ են այն բոլորից, վոր մենք ասացինք վերևում: 1910 թվին էր միայն, վոր ցարական զրատենյակներում յերկար քաջջուկի յենթարկվելուց հետո՝ կարսի նախկին շրջանի Նոր-Սեյիմ գյուղի մալահաններին թույլատրվեց կազմակերպել սպառողական ընկերութիւն: Յեկվորներին հակադրելով տեղական տարրերին, — հայերին, թուրքերին և այլն — ուս ինքնակալութիւնը՝ գաղութայնացման իր ծրագրներով զեկավարված՝ բնականաբար, ավելի էր հովանավորում յեկվոր ուս տարրերին: Բայց այդ նույն թվին կոոպերատիվներ են բացվում Բյազազարնոյի, Սանգարինի և Վլադիկարս գյուղերում: 1912 թվին բացվում են սպառողական յերեք նոր ընկերութիւններ, վորոնցից մեկը մալահանների մոտ և յերկուսը՝ տեղական հույն բնակչութիւն մեջ: Վերջապէս՝ 1913 թվին նորից բացվում են ևս յերկու կոոպերատիվներ: Մինչև 1914 թիվը հայկական գյուղը զէս ևս սպառողական ընկերութիւններ չի տեսնում: Թեև սպառողական ընկերութիւն կազմակերպելու միտքն անհանգստացնում է գյուղի առաջավոր առանձին տարրերին, բայց այդ միտքը կյանքում իրականացնել չի հաջողվում: Տեղական ազմինիստրացիան խեղդում է բարձր «նախաձեռնութիւններ», այդ ուղղութիւնը արտահայտված մտքերի բոլոր առկայծումները: Վերջապէս՝ 1914 թվին միայն, յերկար ու աննշալի քաջջուկներից հետո, գյուղական մտավորականութիւն նախաձեռնող մի փոքր խմբի հաջողվում է թույլատրվութիւն ստանալ՝ Բաշ-Շորագյալ գյուղում «Յերազ» անունով սպառողական ընկերութիւն բանալու: Այդ անունն՝ ավելի քան կարելի յի, համապատասխան էր իրականութիւն: Սպառողական ընկերութիւնն, իրօք վոր, յերկար ժամանակ փայփայած յերազնի մարմնացում էր հանդիսանում: «Գյուղական խրճիթներից մեկում, — պատմում է այդ ընկերութիւն հիմնադիրներից մեկը, — տեղանների շուրջը հավաքված՝ նստում, յերկար զիշերներով մտածում, ծրագրում ու յերազում էինք այն մասին, թե

յերք, վերջապէս, կհաջողվի մեզ՝ բանալ կոոպերատիվ խանութ, վոր մեր աղքատ, թշվառ գյուղացիութիւնը գյուղական գործախանութպանների շահագործումից ազատելու հնարավորութիւն կտար: Սկզբում շահագանց դե վար էր մեր ժողովրդին համոզել, թէ կոոպերատիվը ոգտակար ու անհրաժեշտ է, մանավանդ, վոր սպառողական խանութի, կամ, ինչպէս իրենք գյուղացիներն էյին



Ջարխեջ գյուղի սպառողական ընկերութիւնի հիմնադիրները.

անվանում, «բանկի դուբանի» յերդվյալ թշնամիներն ամեն կերպ աշխատում էյին կոոպերացիան վարկարեկել բնակչութիւն աչքում, և խանգարել նրա առաջացմանը»: Ենորհիվ վարչութիւն վագետութիւն և ինքնագոհ յետանդի, ընկերութիւն գործերն ըսկտում են այնքան յով գնալ, վոր գյուղացիները՝ տեսնելով ընկերութիւն տված գործնական ոգուտներն, բսկում են յետանդուն

կերպով անդամագրվել: Ըստ վերում՝ անդամագրվում են վաշ-
միայն բաշչորայայացիներն, այլ և շրջակա գյուղերի գյուղացի-
ները—հայեր, թուրքեր և հույներ: Անդամագրվելու յնն գաղիս
մինչև իսկ հեռավոր գյուղերից խնդրում, աղաչում են, վոր ի-
րենց ևս «մասնակից» անեն հակարակական խանութին: Բայց
չուտով բռնկվում և իմպերիալիստական պատերազմը: Կարսի շք-
ջանն առաջինն և լինում, վոր գլուխ նրա կործանարար հարվածները:
Կոոպերատիվ շարժման հետագա աճումը կանգ և առնում՝ մինչև
1916 թվի: Ապա՝ յերբ ուսուսական բանակն առաջ և շարժվում գեպի
Տաճկաստանի խորքերը, նա նորից վերբուկվում և և 1917 թվին
զարգացման արտասովոր տեմպ և ստանում: Մի շարք կոոպերա-
տիվներ են ստեղծվում հենց Կարս քաղաքում: Կոոպերատիվ
շարժումը լայն ալիքներով տարածվում և նաև գյուղում: Ապա-
ռողական կոոպերատիվ շարժումն աճում և նաև այլ շրջաններում:
Մինչև 1914 թվի պատերազմը՝ Նախկին Յերևանյան նահանգում
կազմակերպված են սպորտական շորս ընկերություններ—յերե-
քը գյուղում և մեկը քաղաքում: 1914 թվին կոոպերատիվ և կադ-
մակերպվում Ջալալ-Ողլում, 1915 թվին՝ Նոր-Բալաղեղում՝
«Եկոնոմիա» անունով: Մոտավորապես նույն ժամանակին և վեր-
բերվում Դիլիջանի գավառի Ջարխեջ գյուղի սպորտական ընկե-
րության կազմակերպումը: Ջարխեջի սպորտական ընկերու-
թյունն իր շրջանի համար որինակելի կոոպերատիվ հանդիսա-
ցավ: Նա գյուղում բացեց գրադարան-ընթերցարան. աներ ցու-
ցադրական ալգի. կապալով հույ վերցրեց՝ այդ հույի վրա հասա-
րակական տնտեսության ստեղծելու նպատակով. ուներ նաև
փուռ: Բացի իր անդամներին անձնական ու արտադրական ըս-
պառման առարկաներ հայթայթելուց՝ նա ձեռնակեց նաև իր
անդամների արտադրանքի վաճառումը կազմակերպելուն:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, վոր մինչև 1914 թվի համաշ-
խարհային պատերազմը, Մեղրու կոոպերատիվի որինակով, այս-
տեղ ու այնտեղ ստեղծվում էին առանձին սպորտական ընկե-
րություններ: Շարժումը գեո ևս մասսայական բնույթ չէր կրում:
Ամեն մի այսպիսի կոոպերատիվ բջիջի առաջացման արտաքին
պայմանները չափազանց ծանր էին: Գյուղացիական մանր տնտե-
սությունների անջատվածությունն ու իրարից կատարելապես
բաժան-բաժան վիճակը, գյուղացիական լայն մասսաների տգի-
տության անթափանց խավորը, առևտրական կապիտալիզմի ա-

մենագիշատիչ ձևերի թագավորումը գյուղում, ցարական ինք-
նակալության սանձարձակությունը—այս ամենը միասին վեր-
ցրած՝ սակավ էին նպաստում կոոպերացիայի քիչ թե շատ լայն
զարգացումին: Իսկ յեթե այս աճավոր Փոնի վրա յերևան էին
գալիս նոր ծնվող կոոպերատիվ հասարակակախության առանձին,
իրարից բաժան ցուրքեր—ապա՝ այն ժամանակվա հայ գյուղի ա-
մենակալատուրական և առաջավոր տարրերի կոզմից յերևան հա-
նած անձնագոհ հերոսության և հասարակական բարձր վոզկետու-
թյան արդյունքն էին նրանք: Այսպես էր շարունակվում գործը
մինչև 1914 թվի համաշխարհային իմպերիալիստական պատերազ-
մի սկիզբը:

III.

1914 թ վի իմպերիալիստական պատերազմը և նրա հետ կապված տնտեսական բարդությունները Հայաստանում: Հայաստանի ժողովրդական տնտեսության դեգրադացիան: Ապրանքային սովը: Փետրվարյան հեղափոխությունը և նրա ազդեցությունը՝ սպառկոպերացիայի զարգացման հետագա տեմպի վրա: Թիֆլիսի «Հայոց գյուղատնտեսական ընկերությունը» և նրա ազդեցությունը՝ սպառողական կոոպերացիայի զարգացման վրա. կոոպերացիան վորպես օտարալիկ-խառնակալական յերեվույթ: Սպառկոպերացիայի բուրժուական կապիտալիստական ալյանսման պրոցեսը: կենտրոնի ստեղծումը: 1917 թ վի փետրվար 11-ի ժամանակավոր համաձայնությունը: Մեղսքան զարգացման հետագա ետապները: Նրա արդյունաբերական գործունեությունը: Տնտեսական ալյանսերումը:

* * *

Համաշխարհային պատերազմը սովորական հարաբերությունների մեջ հսկայական հեղաշրջում մտցրեց: Պատերազմի հետ կապ ունեցող և նրանից առաջացած խոշոր բարդություններն ու դժվարությունները, վոր ստեղծվեցին տնտեսական կյանքում, խոշոր խթան պետք է գտնային գյուղացիության ակտիվության արթնացումի համար: Տնտեսական կյանքի քայքայման հետևանքով գյուղացիական լայն սպառման համար անհրաժեշտ հիմնական առարկաների պակասը սկսեց ավելի ու ավելի սուր կերպով զգացվել: Հայաստանը, վորպես գյուղացիական յերկիր՝ տնտեսական անքակակի հանգույցներով սերտորեն կապված էր Ռուսաստանի ներքին շուկաների հետ: Նա իրենից ներկայացնում էր և այժմ էլ նշանակալի չափով ներկայացնում է մի խոշոր գյուղ, թույլ զարգացած քաղաքներով, վորոնց տնտեսություն հիմնական ձևն են տնայնագործությունն ու արհեստը: Չունենալով իր ինդուստրիան, նա, համարյա բացառապես, ապրում է ներմուծվող ֆարիկատներով: Ի՞նչ էր ներմուծում նա մինչև պատերազմը: Աճեր, ինչ անհրաժեշտ էր մեծ գյուղի արտադրական, տնային և

անձնական սպառման համար, այսինքն՝ յերկրագործական մեքենաներ, թեև վոչ մեծ քանակությամբ, վոր, ի միջի այլոց, վկայում և նրա գյուղատնտեսական տեխնիքական սարսափելի հետամնացության մասին, մետադե և յերկաթե սպրանքներ, քիմիական արտադրության մթերքներ-ներկեր, սողա և այլն, մանուֆակտուրա, գլխավորապես գյուղացիական, շաքար, թեյ, լուցկի... Չուտ պարենավորման մթերքներից Հայաստանը ներմուծում էր մեծ քանակությամբ հաց—այլուրով ու հացահատիկով—մոտ 2¹/₂ միլլիոն փութ. այնպես վոր՝ հացի սեփական արտադրությունը նրա ներքին շուկայի համար անբավարար էր և նրա հացահատիկային մշակույթը, համարյա բացառապես՝ բնական-պարենավորման բնույթ ուներ: Այդ ներմուծումը ծածկվում էր գյուղատնտեսական արտադրությամբ, վոր նշանավոր չափով (բամբակ, բուրդ, կաշի և այլն) նույնպես ուղարկվում էր ոռուսական ներքին շուկաները: Համաշխարհային պատերազմը խոր ջլատում մտցրեց դարերի ընթացքում հաստատված այդ տնտեսական կապերի մեջ: Հայաստանը տնտեսապես սկսեց ավելի ու ավելի հեռանալ Ռուսաստանից՝ միևնույն ժամանակ չկապվելով նաև կապիտալիստական Յեվրոպայի հետ: Նրա ժողովրդական տնտեսությունը բսկսեց կատասորֆիկ կերպով ընկնել ու դեգրադացիայի յենթարկվելով գնալ դեպի տնտեսություն մինչ-կապիտալիստական ձևերը: Նրա շուկաներում սպրանքները մեկ մեկու հետեվից հետազհետ չքացան: Ապրանքային սովի հետ միասին լայնորեն զարգացավ նաև առևտրական սպեկուլյացիան: Գյուղացիական մանր արտադրողը վերելք նկարագրված գյուղական գիշատիչների կողմից վերածվեց անզուսպ և միանգամայն անսանձ շահագործման որչեփաի: Հայկական գյուղը, դարձնելով դարավոր քնից՝ պատերազմող իմպերիալիստական պետությունների մահաբեր ու ավերիչ թնդանոթների վորոտ ու ազմուկից, բնական և, վոր շոչափելով, տարերայնորեն պետք է յերներ դեպի հասարակական կապերի նոր ձևեր վորոնելու ուղին, վորպեսզի պաշտպանվեր, պայքարեր իր վրա հարձակվող թշնամի ուժերի, արագորեն զարգացող առևտրական սպեկուլյացիայի դեմ: Այդ սպեկուլյացիային հակակշիռ՝ տարերային կերպով, և լայն ալիքով սկսեց զարգանալ սպառողական կոոպերացիան, վորպես մասսայական մի յերևույթ:

Պատերազմից թուլացած ինքնակալություն հիմքերն այլևս

անդոր ելին վերահաս ժողովրդական այս տարերքի առաջն առնելու համար: Հենց ինքնակալ կառավարութիւնն անգամ՝ իրերի յերկաթի տրամարանութիւն ճնշման ներքո, կանգնեց պարենափորման հարցը վորոշ չափով պետական միջոցներով կարգավորելու անհրաժեշտութիւնն առաջ: Մտցվեց մենաշնորհ—հացի, շաքարի և այլն: Ակնհայտ էր դառնում նաև այն, վոր վերահասօժանր ժամանակներում չի կարելի գլուխ հանել՝ առանց հասարակական ուժերի ու կազմակերպութիւնների վորոշ աջակցութիւն: Ռուսաստանում այդպիսի կազմակերպութիւններից մեկն էր կոոպերացիան, վոր այդ ժամանակ արդեն աճել ու դարձել էր հասարակական գործաւոր շարժում: Կոոպերացիային հանձնվեց սպասման մի քանի արևոկաններ (ալյուր, շաքար և այլն) բնակչութիւն մեջ բաժանելու գործը:

Մի փոքր հետո մենք տեսնում ենք, վոր 1917 թ. փետր. հեղափոխութիւնում ուժգին խթան է տալիս սպառնալից քայլի հետագա զարգացմանն ու ամրապնդումին: Սրան օժանդակում են՝ մի կողմից աճող սպրանքային սովը, իսկ մյուս կողմից՝ քաղաքական ազատութիւնը, վոր դանազան տեսակի հասարակական ինքնադոճունութիւնն արտահայտելու համար լայն հնարավորութիւններ էր բացել: Անկախ դրանից՝ փետրվարյան հեղափոխութիւնում որեւէ մի ուժ է տալիս 1913 թվին Կիևի համագումարում մշակված կոոպերատիվ որինագծին: Այդ որինագիծը՝ վարպետ կոոպերատիվ մտքի կալիպտիվ արդյունք, միանգամայն համապատասխանում էր կոոպերատիվ գործունեութիւնն հատուկացած պահանջներին: Յարեղմի խավարն էր միայն, վոր խանգարում էր նրա կյանք մտնելուն: Կոոպերատիվ որենքը՝ մինչ այդ գոյութիւն ունեցող թուրքաւորական կարգի փոխարեն՝ հաստատեց սպառողական ընկերութիւնների և նրանց միութիւնների առաջացման հայտարարական կարգ, կոոպերատիվ կազմակերպութիւններն իրավաբանորեն ձեւակերպեց՝ տարրերելով նրանց մասնավոր ու բարեգործական կազմակերպութիւններից, վորոնց հաշվում գտնվում էին կոոպերատիվները: Այս բոլորը կոոպերատիվ շարժմանը պետք է ներշնչելին ստեղծագործական նոր խմբուլներ:

Ռուսաստանի հետ տնտեսապես ու կուլտուրապես կապված Հայաստանը հասարակական այս ընդհանուր վերելքից դուրս մնալ չէր կարող: Աճող սպրանքային սովը և հեղափոխութիւնը արձակված հասարակական ուժերն այստեղ կոոպերատիվ շարժ-

ման գործաւոր աճումի աղբյուր է դառնում: Հասարակական ենտոպիստների նախաձեռնական փոքրիկ խմբերի առանձին ու անջատ փորձերով, համաշխարհային պատերազմի սկսվելու հետ աճող սպրանքային սովի անհաղթահարելի դրդումների շնորհիվ, կոոպերատիվ շարժումը տարերայնորեն վերածվում է ժողովրդական հզոր շարժման: Այդ շարժումը հասուկ տեմպ է ստանում 1917—18 թվականներին, յերբ սպրանքային սովը չափազանց սուր լինուլթ է բնորոշում:

Այդ շարժման գաղափարական—կազմակերպչական շտաբն է ղառնում Թիֆլիսի Հայ Գյուղատնտեսական Ընկերութիւն կից առաջացած «կոոպերատիվ բյուրոն»: Գյուղատնտեսական այդ ընկերութիւնը գտնվում էր հայ բուրժուական ինտելիգենցիայի ամենաաջ ու ամենաչափաւոր թևի անմիջական ղեկավարութիւն տակ: Պատերազմն ու հեղափոխութիւնը նրա հասարակական նախաձեռնութիւնը վորոշ թափն էլին ներշնչել: Բացի այդ՝ կոոպերացիան վայելուչ մի առիթ էր տալիս՝ սկսված ժողովրդական լայն շարժումն իրենց անմիջական ղեկավարութիւնն ու գաղափարական վերահսկողութիւնը յենթարկելու համար: Առաջին հայացքից կարող է տարրինակ թվալ, վոր «գյուղատնտեսական ընկերութիւնն» իր վրա է վերցնում վոշ թե գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպումը, վորի պահանջը՝ ինչպես մենք կարող էլինք տեսնել վերեվում ասածներէից՝ հրամայողական էր, այլ սպառողական կոոպերացիայինը: Այս յերեվուլթը բացատրելու բանային պետք է փնտուել այնտեղ, վոր սպառողական կոոպերացիան արդեն դառնում էր հասարակական լայն շարժում, իսկ գյուղատնտեսական կոոպերացիան դեռ նոր պետք է ստեղծվեր: Բացի այդ՝ ծավալվող սպրանքային սովի հոգի վրա՝ բոլոր կոոպերացիաների շարքում, սպառողական կոոպերացիան էր, վոր առաջնակարգ նշանակութիւն էր ստացել: Յեւ վահա, «կոոպերատիվ բյուրոն» ծառայութիւնն է կանչում կոոպերացիայի հրահանգիչների մի ամբողջ կազմը՝ Հայաստանի դանազան շրջաններում գործնական աշխատանք տանելու համար: Սկսվում է սառողական ընկերութիւններ անկելու տենդոտ շրջանը: Սպառողական ընկերութիւնները բնում են մեկը մյուսի հետեից՝ վորպես սունկերն անձրեվից հետո: Գյուղացիական բնակչութիւն լայն մասսաները կպչում են սպառողական ընկերութիւններին՝ վորպես ճանձերը մեղրին: Դեռ ևս իրենց մոտ սպառողական ընկե-

ըություններ չկազմակերպած գյուղերն սպասում են հրահանգ- շին՝ վորպես «մեսսիայի»:

1916 թվին սպառողական ընկերությունների թիվը հասնում է 41-ի: 1917 թվի վերջին՝ 187-ի, վորոնք, ըստ շրջանների, բաժան- վում են հետևյալ կերպ.

Յերևան քաղաքում	25
Յերևանի գավառում	39
Եջմիածնի գավառում	37
Սուրմալուի գավառում	19
Շարուր Դարսյազյազի գավառում	23
Նախիջևանի գավառում	28
Նոր Բայազետի գավառում	16

Ընդամենը **ԱՐՐ.ՈւՐ.ԱԼՐ.ՈւՐ.** 187

Կոոպերացիայի մեջ են գրավվում գյուղական բնակչության ամենաբազմազան սոցիալական շերտերը: Բոլորին ղեկի կոոպե- րացիա է քաշում ապրանքային սովը: Ժամանակի պաֆոսն է դառ- նում չուկայից անհետացող ապրանքների հետեվից վաղելը: Լայն ալիքով ղեկի կոոպերացիան է ձգտում և գյուղական «պղտորու- թյունը»—կուլակները, ամեն տիպի շահագործողներ, խանութպան- ներ, ապրանքատուներ և այլն: Կոոպերացիան նրանց հա- մար հետզհետե դառնում է ապրանքամատակարարման հա- մարյա միակ աղբյուրը: Ահա, թե այդ առթիվ ինչ է գրում Պ. Ղարախանյանը, մեզ հետաքրքրող ժամանակա- շրջանի «կոոպերատիվ շարժման» ղեկավարներից մեկը՝ «Սպառման առարկաների պակասը,—ասում է նա,—ղեկի սպառողական կոոպերացիան էր քշում բոլորին, և առաջին հերթին՝ կուլակներին, վաշխատուներին, ունեորներին—կոոպե- րացիայի այդ յերեկվա յերդվյալ թշնամիներին, նրա խանութ- ները հրգհհոդներին, նրա գործիչների հարածողներին: Բայց դա քիչ էր: Նրանք վոչ միայն կոոպերատիվներից ոգտվում էին, վոր- պես սպառողներ, այլ և իրենց ձեռքն էին վերցնում կոոպերատիվ- ների գործերի ղեկավարությունը: Խիստ մեծացնելով փայլավճարի չափը՝ մի ձեռքում գտնվելիք փայերի սահմանային քանակը, դը- ըանով նրանք բնակչության չքավոր ու աշխատավոր տարրերին փաստորեն զրկում էին կոոպերատիվ շարժմանը մասնակցելուց: Փայլավճարների չափը հասնում էր 20-ից մինչև 100 սուբյուր, իսկ մի

ձեռքում գտնվող փայերի քանակը՝ 5-ից 20-ի: Ստացված ապ- րանքները, վորպես կանոն, անդամներին բաժանվում էր հարա- րեական չափով՝ ըստ նրանց մուծած փայլավճարների: Այն սպա- վորությունն էր ստացվում, վոր ունեվորների մի խումբ, միա- ձայն համաձայնությամբ, հավաքել է վորոչ գումար և կազ- մակերպվել է իրը «կոոպերատիվ»: Լինում էին ղեկ- քեր, յերբ ունեվորները փայ էին վերցնում վոչ միայն իրենց, այլ և ուրիշների համար: Բայց այդպիսի ղեկքում վերջինների իրավունքների միջոցով թելադրում էին իրենք... Ընկերության վարչությունը՝ վորպես կոլլեգիալ կերպով աշխա- տող մարմին, գոյություն չունեի: Սովորաբար՝ վարչության ան- գամներից վոր և է մեկը, կամ խանութի կառավարիչը, խանութը կառավարում էր ինքնազուլի կերպով—գնում էր, վաճառում, վը- ճիռներ կայացնում, ծախքեր կատարում: Նոր անդամներ ընդունում, հներին հեռացնում և այլն: Այն ղեկքում, յերբ համագործակցու- թյան վորոչ և կոլլեգիալ կամքի արտահայտություն էր լինում, դա առաջանում էր վոչ թե կոոպերատիվի շահերից, այլ հենց այդ շահերին տրամադորեն հակառակ դիտավորությունից—կոո- պերատիվն իրենց շահերին ծառայեցնելու ձգտումից: Մեծ մա- սամբ կոոպերատիվներում գործավարությունն ու հաշվապահու- թյունը բացակայում էին: Դա բացատրվում է նրանով, վոր չկային գրագետ և իրենց գործն իմացող մարդիկ: Բայց մեծ մասամբ հա- չիվների խառնաշփոթումը չարագործությունների հետեվանք էր: Այդ շարագործությունները հետեվյալ ձեերն էին ընդունել. 1. Խանութի կառավարիչը վոչ անդամներին ապրանք բաց էր թող- նում ալելի բարձր գներով. տարբերությունը գնում էր իր դըը- պանը. 2. Բոլոր տեղերում էլ ապրանքի վաճառքի գինը սկզբից չէր վորոչվում. խանութի կառավարիչն ապրանքը վաճառում էր այն գնով, ինչ գնով «ad voc» պատահած ղեկքում հաճո էր թվում. 3. ապրանքը՝ ստացվելուն պես ստուգման չէր յենթարկ- վում, իսկ վերաքնության ժամանակ ցույց էր տրվում մեծ պա- կասորդ, չորացում և փչացում. 4. պատահում էին ղեկքեր, յերբ լեանութի կառավարիչը ծածկում էր այս կամ այն հաշիվները, վոր նա ոգտագործել էր իր համար. 5. վարչությունը, կամ նրա անու- նից գործող անձնավորությունը, շատ հաճախ, անդամ էր ընդու- նում իր բարեկամներին՝ առանց փայլավճարի մուծման և, ընդ- հակառակն, իր հակառակորդներին այս կամ այն պատրվակով

յերբեմն մերժում և չեր անդամագրում . 6 . ստացված սպրանքները բաժանում էյին ըստ փայերի , պատահում էյին դեպքեր , յերբ առյուծի բաժինն ընկնում էր այս կամ այն ազգեցիկ մարդկանց . . . 7 . վարչության ազգեցիկ անդամը , կամ խանութի կառավարիչը յուրաքանչյուր քայլափոխում իր շահերի համար շահագործում էր ընկերության գրամագլուխը , գրսում առետուր էր անում , կամ տալիս էր տոկոսով» . . .

Այսպիսով՝ սպառողական կոոպերացիայի շարժումը , թեև , իմպերիալիստական պատերազմի սկսվելով ընդարձակվեց ու ծավալվեց , բայց իր վորակով մնաց կապիտալիստական և քանի դնաց , այնքան ավելի խորացավ նրա կապիտալիստական աշխատանքն սրոցեսսը : Վորոշ չափով դա անխուսափելի մի սրոցեսս էր : Մանր արտադրողների սոցիալական միջավայրը ,—վորի մեջ կոոպերացիան առաջին անգամ Հայաստանում զարգացավ ու դարձավ մասսայական յերեույթ—՛հենց ինքնին քիչ չափով էր բարենպաստ՝ իսկական սպառողական կոոպերացիայի զարգացման համար :

Նրա զարգացման համար համապատասխան սոցիալական միակ միջավայրը վարձու բանվորների միջավայրն է միայն : Իսկ գյուղացու , վորպես մանր արտադրողի համար , առաջին տեղը գրավում են իր «ձեռնարկողական» շահերը : Հենց այդ «ձեռնարկողական» վողով էլ նա անխուսափելիորեն վարակում է իր տեղծած՝ իր սեփական շահերը պաշտպանող կոոպերատիվ կազմակերպությունները : «Ձեռնարկողական» այդ շահերը վորոշ չափով պետք է վարակեյին նաև գյուղական սպառողկոոպերացիան : Ապրանքային սովն ու նրա հետ կապված առևտրական անսանձ սպեկուլյացիան ուժեղ իմպուլս տվին՝ այդ «ձեռնարկողական վողու» արտահայտվելուն : Յեկ զարմանալի չէ , յեթե ընդհանուր սպեկուլյատիվ աժիտաժի այդ տենդոտ միջնորդում ամենից ավելի ձեռնարկողական տարրերը կոոպերացիան յենթարկեցին իրենց շահախնդրական նպատակներին :

* * *

Ինչպես մենք վերեվում ասացինք , 1917 թվին Հայաստանի սպառողական կոոպերացիայի շարժումն ընդունեց մասսայական բնույթ : Իսկ հաջորդ , 1918 թվին նա հասավ իր կուլմինացիոն կետին : Սպառողական ընկերությունների թիվն արդեն հասավ 196-ի : Այս աճումը հարց դրեց կոոպերացիայի տնտեսական և գաղափա-

րտ-կազմակերպչական կենտրոն ստեղծելու անհրաժեշտության մասին : Յերեվանի « ЭКОНОМИЯ » սպառողական ընկերության նախաձեռնությամբ 1917 թվի հունվարի 17-ին հրավիրվեց խորհրդակցություն , վորին մասնակցում էյին 12 սպառողական ընկերություններ՝ 20 պատգամավորներով : Խորհրդակցությանը ներկայացված էյին յերեք քաղաքային և իննը գյուղական սպառողական ընկերություններ : Բայց և այնպես այդ խորհրդակցությունը սործնական արդյունքներ չտվեց : Նույն տարվա մարտի 7-ին յերկրորդ անգամ խորհրդակցություն հրավիրվեց՝ 14 սպառողական ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ : Խորհրդակցության որակարգում գրված էր «Յերեվանի նահանգի սպառողական ընկերությունների սպրանքի միասնական գնում կազմակերպելու» հարցը : « ЭКОНОМИЯ » սպառողական ընկերության ներկայացուցիչ Ա . Շահնազարյանն այդ հարցի մասին կարգաց գեկուցում , պարզաբանելով՝ «Յերեվանի նահանգի սպառողական ընկերությունների ժամանակավոր համաձայնությամբ սպրանքների միասնական գնում կատարելու «պայմաններին նախադիժը» : Այդ գեկուցման քննությունից հետո՝ խորհրդակցությունը սկզբունքորեն ցանկալի համարեց նման համաձայնությունը և սպա՝ սահմանեց նրա կոնկրետ պայմանները : «Ժամանակավոր համաձայնությունն ,—ասված է 1917 թվի մարտի 11-ի արձանագրության մեջ ,—նպատակ ունի իրեն մասնակցող ըսպառողական ընկերություններին աջակցել , վոր նրանք լավ վորակի սպրանքներ ստանան , ըստ հնարավորին էժան և արագ , մինչև Յերեվանի նահանգի սպառողական կոոպերատիվների միության կազմակերպումը և նրա վարչության ընտրությունը : Մատնանչված նպատակին հասնելու համար՝ համաձայնող ընկերությունները Յերեվան քաղաքում հիմնում են գործադիր մարմին՝ տեղական ներկայացուցչություններ անունով . . . Տեղական ներկայացուցչությունը կազմված է 3-ից-5 անձից , վորոնք ընտրվում են ներկայացուցիչների խորհրդակցության կողմից , փակ քվեարկությամբ և մեկ տարվա ժամկետով : Տեղական ներկայացուցչության անդամներն իրենց աշխատանքի համար մշտական ոոժիկ չեն ստանում : Ներկայացուցչության բոլոր ներկայացուցիչները ստանում են 1% վարձատրություն՝ ներկայացուցչության միջոցով ստացված բոլոր սպրանքների ընդհանուր արժեքից : Կոմիսիոն վարձագրությունը ներկայացուցիչ անդամներին տրվում է յերեք

ամիսը յրանալուց հետո» : Այն ընկերութիւնները, վոր «համա-
 ձայնութեանը մասնակցելու ցանկութիւն կհայտնեն, մեկ ամսովա
 ընթացքում ներկայացուցչութեան գանձարկին են մտցնում իրենց
 փայլը—ընկերութեան փայլաճարները ընդհանուր գումարի 3%-ի
 շահ՝ հաշված տվյալ տարեակգրի գումարից : Բացի փայլաճարնե-
 րից՝ նրանք կամիստիոն տոկոսներ են վճարում ներկայացուցչու-
 թեան ծախքերը ծածկելու համար» : Այս հետաքրքիր փաստաթուղթը
 բացում է ստեղծված կազմակերպութեան սոցիալական բնույթը :
 Այդ կազմակերպութեանն ոտար է սոցիալ-օեֆորմիստական
 վոր է ինդիքը : Սոցիալական պաֆորը չի նրա ստեղծողը, այլ հա-
 սարակական շահագանց սահմանափակ, կենսական-պրոդայիկ մի
 ինդիքը՝ իրեն անդամներին հայթայթել «լայ վորակի ապրանք՝
 ըստ հնարավորին եթան և արագ» : Այսպիսին է մանր-բուրժուա-
 կան սպառողական կոոպերացիայի նպատակըրումը : Այսպիսին
 պիտի լինէր նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայկական
 սպառողական կոոպերացիայի նպատակադրումը : Այդ կոոպերացիան հան-
 դիսացավ գյուղական մանր ապրանք-արտադրողների ընդարձակ
 դասի շարժման մի ձևը : Դրանով պիտի բացատրել և այն,
 վոր նա ձևալորվել սկսեց վոչ թե «Ռոչդելյան պիոններին» գա-
 դափարական ազդեցութեան ներքո, այլ Շուլցե-Դելիչի մանր-
 բուրժուական կոոպերատիվ սիստեմի ազդեցութեամբ : Ռոչդելյան
 կոոպերացիայի պրոբետարական-սոցիալիստական վոզին ոտար
 էր հայերի մանր-բուրժուական սպառողական կոոպերացիային :
 Մանր-բուրժուական «ձեռնարկողական» վոզին իր արտա-
 հայտութեանը դոտով նաև «Տեղական ներկայացուցչութեան» ան-
 դամներին վարձատրելու կոմիսիոն սկզբունքում, վոր ընդուն-
 վեց «ժամանակավոր համաձայնութեան» կողմից : «ժամանա-
 կավոր ներկայացուցչութեանը» հաջողվեց կարճ ժամանակա-
 միջոցում ստանալ դրամական վարկեր և կատարել նշանա-
 կալի գնումներ : Ծնորհիվ դրա, պարենավորման սուր ճգնաժո-
 մերից դրզված՝ սպառողական ընկերութիւններն սկսեցին
 բյուրեղացնել իրենց «կենտրոնի» շուրջն—այնպես վոր՝ նրան միա-
 ցած ընկերութիւնների թիվը նոյեմբեր ամսին հասնում էր 100-ի :
 1917 թվի հոկտեմբեր 27-ին, այսինքն 10 ամիս աշխատելուց հետո՝
 «ժամանակավոր ներկայացուցչութեանը» հրալիրեց Յերևանի
 նահանգի սպառողական ընկերութիւնների լիազորների օտսմա-
 նադիր ժողով, վորին ներկա էին 170 ընկերութիւնների ներկա-

յացուցիչներ : Ժամանակավոր կենտրոնը վերակազմվեց և դարձավ
 «Յերևանի նահանգի սպառողական ընկերութիւնների Միու-
 թիւն» : Լիազորների ժողովը վորոչեց անդամագրվել «Չակտոյու-
 զին», «Սպառողական ընկերութիւնների Մերձկասպյան Միու-
 թեանը», «Մոսկվայի սպառողական ընկերութիւնների Միու-
 թեանը» (ՄՈՒՈ) և Մոսկվայի ժողովրդական Բանկին :

1919 թվին միութիւնը յենթարկվում է հետագա վերակազ-
 մութեան : Անդրկովկասը քաղաքականապես բաժանվում է մի շարք
 «անկախ» հանրապետութիւնների : Ստեղծվում է նաև «անկախ»
 Հայաստանը : Այդ պատճառով՝ 1919 թվի հունվար 28-ին, տա-
 ճիկների հեռանալուց հետո, գումարվում է Յերևանի նահանգի
 լիազորական ժողովը և միութիւնը՝ վերակազմվելով դառնում է
 կոոպերացիայի Հանրապետական կենտրոն—«Հայկոպ» : Հան-
 րապետական կոոպերատիվ կենտրոնի կողքին կազմվում են նաև
 մի շարք շրջանային միութիւններ—Ղամարլուի, Նոր-Բայազեդի,
 Դիլիջանի, Ալեքսանդրապոլի, Լոռու : Մեծ մասամբ՝ սրանք գա-
 ճած միութիւններ էին : Ամենից ավելի մեծ չափով անդամներ
 ուներ Ալեքսանդրապոլի «Շիրակ» միութիւնը. նրա մեջ մտնում
 էին 63 սպառողական ընկերութիւններ : Լոռու միութեան մեջ
 մտնում էին 28 ընկերութիւններ, Նոր-Բայազեդի միութեան մեջ
 10 և այլն : 1920 թվին Հայկոպը միացնում էր 249 անանձին
 սպառողական ընկերութիւններ և հինգ շրջանային միութիւն-
 ներ : Կազմակերպված անդամների ընդհանուր քանակը կազմում
 էր 94,743 մարդ : Նրա առևտրական շրջանառութեան մասին մո-
 տավոր պատկեր են տալիս հետևյալ թվերը. Հայկոպի պահեստ-
 ները գնման արժեքով ապրանք են ընդունել.

1917 թվին	1,179,243 ուրբու
1918 թվին	2,412,387 ուրբու
1919 թվին	14,745,581 ուրբու

Սակայն, այս ապրանքային շրջանառութիւնների աճումը նրանց
 դրամական արտահայտութեանն է : Այս աճումը գլխավորապես
 առաջանում էր շուկայի ապրանքային գների արագ բարձրանա-
 լու տենդենցով—ի հետևանք աճող ապրանքային սուլի և թրդ-
 թաղերամների գնողական ընդունակութեան անկման : Իսկ
 փաստորեն՝ բնական ապրանքաշրջանառութիւնը վոչ միայն
 աճման տենդենց չէր ցուցարբերում, այլ և նկատելի կերպով ընկ-
 նում էր : Ավելի ու ավելի դժվարանում էր անհետացող ապրանքի

հետեւից վաղելը: Վտրակողից, ինչ աղբյուրներից էլին լցվում
 Հայկոպի պահեստները: Այդ աղբյուրը հանդիսանում էր գլխա-
 փորագես մասնավոր սպեկուլյատիվ ապրանքային շուկան: Գնում-
 ների մեծ մասը կատարվում էր Յերեանի տեղական շուկայում՝
 առևտրական միջնորդների միջոցով: Ամեն մի գնումի համար ավե-
 լորդ վճարվում էլին հսկայական գումարներ, վորոնք հետո վերա-
 դրվում էլին սպառողի վրա: Մինչդեռ՝ շնորհիվ արանսպորտային
 այն արտանմությունների, վորոնցով սպառվում էր կոսպերացիան,
 որյեկտիվ հնարավորություն կար՝ ապրանքն առաջին աղբյուր-
 ներից գնելու: Բայց այդ բանն, ակնհայտ է, չահավետ չէր վար-
 չության համար, վորի ղեկավարը «գործարարներն» էլին:

Մենք վերևում արդեն խոսեցինք կապիտալիստական այն
 այլասերման մասին, վորին յենթակա էր Հայաստանի գյուղա-
 կան սպառողական կոոպերացիան, սկսած 1914 թվի իմպերիալիս-
 տական պատերազմի առաջին տարիներից: Այդ պրոցեսը, բնա-
 կան է, չէր կարող չընդգրկել նաև «Միությունը», վոր փաս-
 տորեն Հայաստանի մանր-բուրժուական կոոպերացիայի սիստեմի
 պակն էր գարծել:

«Միությունը» 1918 թվին անցավ արդյունաբերական գոր-
 ծունեության: Բացեց չստի արհեստանոց, ոճառի գործարան,
 ձեռնարկեց «գոշարի», չուշխելի ու մրդի կոնսերվների պատ-
 ւաստման և այլն: 1919 թվին ղիմեց մինչև իսկ գինեգործության
 ու կոնյակի արտադրության: Միությունների արդյունաբերական
 ձեռնարկներից ստացած արդյունքի ընդհանուր գումարն այդ վեր-
 ջին տարում, պահեստի ամբողջ շրջանառության նկատմամբ,
 կազմում էր 34,6%, մինչդեռ՝ 1918 թվին կազմել էր 20,6%-ը:
 Արդյունաբերական այդ ձեռնարկներն ունեյին մանր-տնայնա-
 գործական բնույթ և աշխատում էլին ավանդական պրիմիտիվ
 տեխնիկայով: Նրանց ծավալումը չուներ ծրագիր և սիստեմ:
 Նրանք գուտ տարերային պրոցեսի արդյունք էլին: Այդ ձեռ-
 նարկների կազմակերպումը չէր բլխում նաև Միության Փի-
 նանսական կարողություններից: Միության Փինանսները ամե-
 նավատ վիճակում էլին գտնվում: 1920 թվի հունվար 25-ին կա-
 սավարության նախագահին հանձնած իր գեկուցադրի մեջ «Միու-
 թյունը վարչությունը գրում է. «Ներկայումս «Հայկոպի» գրու-
 թյունը ծանր է, վորովհետև պահեստները գատարակ են: Թեև
 էնկրոպայում մենք նշանակալից չափով ապրանքներ ենք գնել,

բայց՝ այդ ապրանքները թափելու դրամ չկա»: Վորպեսզի «Հայ-
 կոպի» դրությունը փրկվի, անհրաժեշտ է պետական ոժանդա-
 կություն»: Համարյա բացառապես պետության վարկերի վրա
 հենվելով՝ «Միությունն» իր արդյունաբերական գործունեու-
 թյան հետագա ծավալումի ծրագրներ էր կառուցում: Նա կառա-
 վարությանը խնդրում էր՝ իր կարգադրությանը հանձնել «Շուս-
 տովի» կամ «Սառաջելի» գործարանը, քաղաքից վոչ հեռու տալ
 400 դեոյաան հող՝ բանջարանոցի և գյուտանտեսական այլ մշա-
 կութների համար: Այդ ձեռնարկումներն իրականացնելու նպա-
 տակով՝ «Միությունը» խնդրում էր տալ նրան 15 միլլիոն ուր-
 լու փոխառություն, մեկ տարի ժամանակով: Իսկ պետական պա-
 հեստներից բաց թողնել «Հայկոպին» 3500-4000 փութ բամբակ՝
 արտահանելու համար: Այսպիսով՝ «Միությունը», ղեռ չծաղկած,
 սկսում էր թառամել: Իր գոյության ու «սրբաբանի» զարգացման
 հետագա հաշիվները նա ավելի ու ավելի կառուցում էր պրոգրեսիվ
 անոց պետական ոգնության վրա: Դա նրա տնտեսական այլա-
 սերման ամենալավ սիմպտոմն էր: Այլասերման այս կնիքը հայանի
 չափով դրված էր նաև նրա արդյունաբերական գործունեության
 վրա: ձիչա և այն, վոր նրա բնույթն ու ընդհանուր ուղղությու-
 նը ներգաշնակում էր գյուղացիական մանր ապրանք արտադրողների
 այն ընդարձակ դասի շահերին, վորը «Միության» սոցիալական
 հիմնական բազան էր կազմում: Արտադրության և եժան գյուղա-
 ցիական տնտեսության միջերքների (խաղող, մրդեր, կաթ և այլն)
 վերամշակման կապերտիվ կազմակերպումն անհրաժեշտ պայման
 էր հանդիսանում՝ ապրանքաուտական կապիտալի շահագործման
 դեմ կովելու գործում:

Մենք վերևում արդեն մատնացույց արինք, թե ինչ դիչատի:
 ձե էր կրում այդ շահագործումը: Գյուղացիության արտադրու-
 թյան միջերքների վաճառահանման կոոպերատիվ կազմակերպու-
 թյամբ միայն՝ և դրան միացնելով միջերքների սկզբնական վորոչ
 վերամշակումը, իրոք վոր հնարավոր կլիներ գյուղացիական
 մանր ապրանք արտադրողներին ազատել ապրանքաուտական կա-
 պիտալին տնտեսապես ստրկանալուց և սկիզբ դնել հայ գյու-
 ղի տնտեսական ու կուլտուրական վերածնության: Բայց այդ
 միակ ուղիղ ճանապարհով չգնաց «Միությունը»: Տեղերի նախա-
 ձեռնությունն արթնացնելու և կազմակերպելու փոխարեն նա վորք
 դրեց գեպի ձեռնարկողական վտանգավոր ուղին: Նրա կազմակեր-

պած ձեռնարկութիւններն, ըստ իրենց տեսակի՝ սովորական կապիտալիստական ձեռնարկութիւններ էին, վորոնց նպատակն էր, ըստ հնարավորին էժան գնել գյուղացիական հում նյութերը և թանգ վաճառել նրանցից պատրաստված վերջնական ապրանքը: Ծահը նրանց միակ շարժիչն էր: Գյուղացին, վորպես մանր ապրանք արտադրող, «կոտպերատիվ արդյունաբերութեան» այս սիստեմի կազմակերպումից վոչ միայն զգալի սպուտ չէր ստանում, այլ և տուժում էր: Սակայն հում նյութն անգամ (խաղողը) աջ ու ձախ ձեռք էր բերվում կապիտալիստական արտադրողներէից, վորոնց հետ «Հայկոտպի» վարչութիւնը «գործարար գոգում» էր հաստատել: «Միութեան» արդյունաբերական գործունեութեան մեջ տեղի ունեցած կապիտալիստական այդ խայտառակ այլասերումը: Հայաստանի (1916-1917 և 1919-1920 թ.) սպառնողպերացիայի ամբողջ սիստեմում տեղի ունեցող բուրժուական-կապիտալիստական այլասերման ընդհանուր պրոցեսի մի մասնակի յերևիւթիւն էր:

IV.

Ազգային «փոթորիկների ու կրքերի» դարաշրջանը: Ազգային պետութիւնների առաջացումը: Ազգութիւնների կոիվը վորպես դասակարգերի կոիվ: Միլիտարիզմի և ազգային «խմպերիալիզմի» զարգացումը: Ռեգրեսիվ յերևույթները տնտեսութեան բնագավառում: Նավթային արդյունաբերութեան քայքայումը: Նավթարդյունաբերական պրոլետարիատի հեռացումն՝ ըստ «ազգային տրեների»: Նկարագրված այդ պրոցեսների ազդեցութիւնը Հայաստանի վրա: Կապիտալիստական մանր բուրժուազիան վորպես ազգային « Sturm und Drang »-ի գաղափարակիր: «Հայաստանի կոպերացիա»-ն վորպես այդ բուրժուազիայի գաղափարական ազդարար: Յերագներ՝ մեծ Հայաստանի մասին: Մանր-ազգային իմպերիալիզմը: Ֆաշիստական տրամադրութիւններ: Կոպերացիան՝ վորպես ազգասիվ նացիոնալիզմին ծառայող: Հարևան ազգայնական պետութիւնների նկատմամբ յեղած թշնամական վերաբերմունքը: Հայաստանը՝ վորպես տնտեսական ուժասպասման կենտրոն: Ազգային կոպերացիայի քայքայումը:

* * *

Մենք արդեն մատնանչեցինք, վոր 1917 թիվը և 1918 թիվը առաջին կեսը Հայաստանի սպառնողական կոպերացիայի զարգացման կուլմինացիոն պունկտն են հանդիսանում: 1918 թիվի կեսերին կատարվում են մի շարք դեպքեր, վորոնք կատաստրոֆիկ բնույթ են ունենում վոչ միայն սպառնողպերացիայի այլ և ամբողջ յերկրի համար: Դրանք են—տաճիկների արշավանքը, ռուսական բանակի հեռանալը՝ սազմաճակատից և Անդրկովկասից, ազգային կրքերի հրդեհումը, վոր ամբողջ յերկիրն ընդգրկեց, ազգամիջեան արյունահեղ կոիւններն ու Անդրկովկասի քաղաքական բաժանումը՝ մի շարք ինքնանիւր պետութիւններ, վորոնք գինված էին մինչև ատամները և միմիանցից անջատված էին ստրատեգիական ու մաքսատնային բարյերներով: «Ազգային»-կենտրոնախույս ուժերը հասունանում էին գեո և սոցիոլոգիզմի ճնշիչ ու հափա-

սարեցնող հովանու տակ: Զարգացող ստեղծարարական և արդյունաբերական կապիտալների պատռն էլին նրանք: XIX-րդ դարու 60-ական թվականների այդ զարգացող կապիտալիզմի կրողը հանդիսացավ հայկական բուրժուազիան, վոր այլ ազգությունների—վրացիների և թուրքերի—տիրող հասարակական դասակարգերին փոքր առ փոքր սկսում էր տնտեսապես դուրս ջրել նրանց գրաված հրամայական բարձունքներից: Հայկական բուրժուազիայի և վրաց ու թուրք տիրող ավատական դասակարգերի միջև ստեղծված պայքարն անխուսափելիորեն պիտի ընդուներ ազգային պայքարի ձև: Ֆեոդալական այդ դասակարգերի «ազգային» կողմն միացան նույն ազգությունների մանր, ու արդեն ծնունդ առնող խոչոր բուրժուազիան, վոր նույնպես խիստ ճնշվում էլին հայկական կապիտալիստական բուրժուազիայի կողմից: Այս ձևով՝ դասակարգերի կռիվն ընդունեց ազգությունների կռիվի ձև: Ինքնակալության ճնշիչ ու հավասարեցնող գրվանի ներքո՝ «ազգային»—դասակարգային այդ հակամարտությունները հայտնի չափով ցարիզմի կողմից կաշկանդված էլին: Ճշմարիտ է՝ դա ամենեկին չէր խանդարում, վոր ինքնակալությունը հմուտ կերպով նրանց ոգտադործել կարողանար իր նպատակների համար: Նրա վաղեմի դեիզն է յեղել «բաժանիր և իշխիր»-ը:

Պատերազմը, հեղափոխությունն ու նախկին Ռուսական կայսրության քայքայումը բաց արձակեցին այդ «ազգային»—դասակարգային ուժերի տարերքը: Սկսվեց նրանց քաղաքական-պետական ձևավորման տենդոտ պրոցեսը: Ազգային պետությունների այդ ձևակերպումը ուղեկցվում էր միլիտարիզմի և յուրահատուկ ազրեսսիվ մանր-ազգայնական իմպերիալիզմի զարգացմամբ: Այդ պետություններից յուրաքանչյուրն աշխատում էր իր տերրիտորիան կլորացնել՝ գրավելով հարևան յերկրների իրեն կից այն տերրիտորիաները, վորոնց բնակչությունը նրա լեզվով էր խոսում: Ըստ վորում՝ ինչքան փոքր էր մի իշխանություն, այնքան ավելի ազրեսսիվ էր դառնում նրա կողմից գործադրվող իմպերիալիստական քաղաքականությունը: Յեվ ահա՝ սկսվեց ազգայնապես ձևավորված պետությունների միջև տեղի ունեցող կռիվների շրջանը: Ազգային-պետական այդ հակամարտությունները հայտնի չափով ջերմացվում ու ծածկորեն թերազրվում էր «բարերար» իմպերիալիստական պետությունների վորոգայթնեով: Յերկրի «բավականիզացիայի» այդ տարերային պրոցեսները՝ կապ-

ված ազգամիջյան վայրագ պատերազմների հետ, տնտեսական ասպարեզում նշանակում էլին կատարյալ հետադիմություն:

Յերկրի արդյունաբերական կյանքի տեմպը սկսում էր կատաստրոֆիկ կերպով ընկնել: Զեռնարկություն ձեռնարկության հետևելից վախվում էր, իսկ չփակվածներն ավելի ու ավելի կրճատում էլին իրենց արտադրությունը. բացառություն չէլին կազմում և այն ձեռնարկությունները, վոր ազգային սեփականություն էլին դարձել: Տնտեսական դեգրադացիայի այս յերևույթը հատկապես սուղեց յերկրի արդյունաբերական կենտրոններից ամենախոչորի՝ Ալշերոնյան թերակղզու նավթարդյունաբերության վրա: Ահա թվեր, վորոնք ցույց են տալիս նավթային արդյունաբերության կատաստրոֆիկ անկումը. նավթի հանույթը յեղել է (միլլիոն ուրլիներով).

1915 թ. —451, 1916—ին—470, 1917—ին—391,7, 1918—ին—185,0, 1919—ին—225,7.

Իսկ փորումների սաժենների քանակը յեղել է. 1915 թվին—47,827 սաժեն, 1916 թվին—43,000, 1917 թվին—32,430, 1918 թվին—տեղեկ. չկան, 1919 թ. 6,216:

Նավթային արդյունաբերության այսպիսի հակայական ունկումը ճակատագրական հետևանքներ չէր կարող չունենալ յերկրի տնտեսական զարգացման համար: Բնական և, վոր այդ անկումն ուղեկցվում էր նավթարդյունաբերության մեջ աշխատույ բանվորների բնդհանուր թվի այնպիսի կրճատումով, վորպիսին չի յեղել նավթարդյունաբերության պատմության մեջ: Նավթարդյունաբերական պրոլետարիատի տարեց-տարի անչեղորեն աճելու բնդհանուր տենդենցին հակառակ՝ 1917 թվից նկատվում է խիստ պակասումը հետադիմական կարուկ մի ընթացք: Այսպես, որինակ՝ 1916 թվին այդ պրոլետարիատի թիվը հասնում էր 52.000-ի, 1917 թվի կեսերին—47,000-ի, 1918 թվին—38,000-ի, 1919 թվին—28,000-ի: «Ազգային փոթորիկների ու կրքերի» ժամանակաշրջանի համար բնորոշ փոփոխություն կատարվեց նաև նավթարդյունաբերող բանվորների ազգագրական կազմի մեջ, վոր պարզվում է հետևյալ աղյուսակից.

ԱԶԳՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ	Բանվորների ու ծա- ռայողների թիվը		Ճ տարվա փոփոխու- թյունները	
	1915 թ.	1920 թ.	Բացարձակ թվերով	%/0-ով
Ռուսներ . . .	11,053	7,573	2,430	24,8
Հայեր	8,620	2,458	6,102	71,5
Թուրքեր . . .	5,060	3,000	2,660	41,2
Պարսիկներ . .	13,136	6,570	6,566	50—
Լեզգիներ . . .	5,235	177	5,058	96,6

Այս աղյուսակից յերևում է նավթարդյունաբերական բան-
վորների հեռացման մեծ պրոցեսը՝ ըստ իրենց «Ազգային տների»,
վոր տեղի յեր ունենում կես հարյուրամյակից ի վեր դանազան ազ-
գությունների տարբերը նավթային արդյունաբերության հավա-
սարեցնող հնոցում համախմբելուց հետո: Հեռանում են բոլորը—
նավթարդյունաբերող բանվորության ինչպես ցած, նույնպես և
վորակավորված տարրերը: Հեռանում են շտապ, տենդոտ արա-
գությամբ—ուսաները, հայերը, պարսիկները, լեզգիները: Ի հար-
կե, գաղթի ու հեռացման այս ալիքը տարբեր աստիճանով է ընդ-
գրկում նավթարդյունաբերական բանվորների տարրեր ազգային շե-
տերին: Ամենից շատ «հեռանում են» լեզգիները: Նավթարդյունա-
բերական բանվորների ստորին և ամենից ավելի չվորակավորված
տարրերը կազմելով, նրանք քիչ են կապված արհեստագործական
կյանքի պայմանների հետ և այդ պատճառով՝ համեմատաբար ա-
վելի հեշտ են թողնում իրենց համար ոտար ու անսովոր պայման-
ները, վորպեսզի հեռանան դեպի «ազատ Դաղստանի» հայրենի
լեռները: Նրանցից հետո՝ գալիս են հայերը, վոր հնդամյակի ըն-
թացքում, 1915—1920 թիվը, պակասում են 71,5%—ով: 1900 թվին
ամբողջ նավթարդյունաբերող պրոլետարիատի 1/4-ը (27,0%-ը)
կազմելով՝ 1920 թվին նրանք կազմում են արդեն նրա 1/30-րդ
(11,3%-ը) մասը, ըստ վորում, ուսաներից հետո՝ նրանք նավ-
թարդյունաբերական բանվորների ամենից ավելի վորակավորված
մասն էլին: Բայց ազգային փոթորիկի տարբերը, վոր իր ուղեք
արտահայտությունը գտավ հայ-թուրքական յերկարատև պատե-
րագմանում, նրանց ստիպեց հաղարներով կտրվել վորոշ չափով
բնակալած իրենց տեղերից և ձեռք առնել թափառականի ցուպը:
Վոր փորձերն ասես, վոր չուղեվորվեց ազգային փոթորիկներով

իր «տեղից» կտրված այդ մասսան: Ի հարկե, նրա նշանակալի-
մասն ուղևորվեց դեպի իր հայրենի մոխրակույտերը, հին, նա-
հասկապական բները, այն պրիմիտիվ ու անշարժ գյուղերը, վորոնց
կարծես չէին հանդիպել քաղաքակրթության անցնող դարերը և
վորոնց հետ այդ մասսան դեռ ևս չէր խղել իր դարավոր, ավան-
դական կապը: Գլխավորապես՝ ամենից ավելի պանդխտություն
ավող գավառների բնակիչներն էին դրանք, վոր «վոսկերեր» Ապ-
չերոնի արհեստագործության ու գործարանային հուզումնալի
սուլիչներով դուրս էին քաշվել իրենց նահապետական բներից .
այստեղ կային Շուշեցիներ, վոր՝ 1913 թվի քաղաքային մարդա-
համարի տվյալներով, Ապչերոնի յեկվոր բնակչության մեջ կազ-
մում էին 12,950 մարդ, Զանգեզուրցիներ—9,454 մարդ, Շամա-
խեցիներ—9,143 մարդ, Յերևանցիներ—6,770 մարդ, Գյոզչե-
ցիներ—1,917 մարդ, Նուխեցիներ—1,187 մարդ, Ղազխեցի-
ներ—1,198 մարդ և այլն: Նրանցից շատերն՝ ինչպես որինակ՝
Շեմախեցիները, Շուշեցիները, Գյոզչեցիներն իրենց վոսկորները
թողին ազգային արյունոտ պատերազմներում: Յերևանցիները
նույնպես կորան—մասամբ ել վերադարձան իրենց տները. իսկ
Զանգեզուրցիները և մասամբ Ղարաբաղցիները ապաստաբան ու
փրկություն գտան իրենց լեռների անճերձենալի բարձունքներում:
Ազգի այդ իրարից կտրված ու արյունոտ մնացորդները՝ բոլորին
ընդգրկող այդ արհավիրքի ազդեցության ներքո՝ սկսեցին նույն-
պես տենդոտ կերպով հավաքվել ազգային պետության մի ընդհա-
նուր հարկի տակ:

Յերրորդ պլանում, հայերից հետո՝ դանվում էին պարսիկ-
ները: Սրանք ել, լեզգիների նման, կազմելով նավթարդյունաբե-
րական բանվորության չվորակավորված ստորին մասը՝ մատնա-
նչված հնգամյակում նույնպես պակասեցին—50%—ով:

Արդյունաբերական կյանքի անչնչացման հետ միասին, նրանց
դեպի տուն էին քշում նաև արյունոտ դեպքերի այն սպառնալից
ամպերը, վոր կախվում էին «Ապչերոնի» վրա:

Մինչև այժմ թված ազգային բոլոր այդ խմբակները, —վոր
չարժման մեջ էին դրվել ձևավորվող ազգությունների զարգացող
կենտրոնախույս ուժերով, —կազմում էին Ապչերոնյան թերակղ-
զու պրոլետարիատի յեկվոր մասը միայն. իսկ նրա իսկական բը-
նիկները թուրքերն էին: Սակայն՝ չնայած դրան, նավթային ար-
դյունաբերության մեջ նրանց մասնակցությունը՝ յեկվոր տարրերի

(հայերի, ռուսների, պարսիկների և մինչև իսկ լեզգիների) համեմատութեամբ, շնչին եր: 1900 թվին նավթարդյունաբերող բանվորների ընդհանուր մասսայի մեջ թուրքերը կազմում էին 10,5%: 1915 թվին—11,1%: 1920 թվին—13,9%: Ըստ վորում՝ նրանք ևս, պարսիկների և լեզգիների հետ միասին, նավթարդյունաբերական բանվորների «ստորտան» էին կազմում: Բայց, այդուամենայնիվ, չնայած նրանց աննշան հարաբերական աճումին, նավթարդյունաբերական բանվորների ընդհանուր մասսայում թուրքական պրոլետարիատի քանակը ևս, վերոհիշյալ հնգամյակում, 1915 մինչև 1920 թիվը, արսույուտ կերպով պակասեց—5060—ից մինչև 2060—ի, այսինքն՝ 41,2%-ով: Ի հարկե, այս պակասումն արդյունք եր բանվորական տեղափոխության այն քայքայիչ պրոցեսի, վորով նրանք արդյունաբերական շրջաններից քաշվում էին դեպի ասիական անշարժություն ունեցող գյուղական գավառները: Վերջապես՝ թվական պակասումի տեսակետից վերջին պլանն են գրավում ռուսները, վոր նույնպես այդ շրջանի յեկվոր տարրերին են պատկանում: Վերոհիշյալ հնգամյակում նրանք պակասել են 24,8 տոկոսով:

Այս յերևույթը պետք է բացատրել, ակնհայտ է, մի կողմից տարածության հետուութեամբ, վորի հետևանքով «մակնթացությունը» զժվարանում եր և մյուս կողմից՝ նրանով, վոր ազգային հակամարտությունը նրանց համար ամենից պակաս չափով եր սրվել:

Այսպիսով՝ անդրկովկասյան ազգությունների քաղաքական ձևավորումը՝ վորոշ տերրիտորիալ միավորների սահմաններում, ուղեկցվում եր մի կողմից յերկրի նավթային խոշոր արդյունաբերության քայքայումով, և, մյուս կողմից՝ անշարժ վորոշ տրնտեսական հետադիմական այն տենդենցներով, վորոնց արտահայտությունն եր գյուղական բնակչության աճումը՝ ի հաշիվ խոշոր արդյունաբերական կենտրոնների բնակչության և ի հաշիվ հանգչել սկսող քաղաքների:

* *
*

Նկարագրված պրոցեսները հատուկ ուժով պիտի ազդեին Հայաստանի տնտեսական դրության վրա: Այստեղ ազգայնական Sturm und Drang —ի սուբյեկտ եր դառնում կապիտալիստական ճանր բուրժուազիան, վորին ղեկավարում եր «դաշնակցություն»

կուսակցությունը: Իսկ նրա գաղափարախոսական շեֆորն եր հանդիսանում «Հայաստանի Կոոպերացիա» ժուրնալը, վորի հրատարակողը «Հայկոսպն» եր: Մանր բուրժուազիան ապրում եր իր ազգային-սոցիալիստական յերազմերի բորբոքման կուլմինացիոն կետում: Վերջապես նրա վորոցումն ևլ տոնախմբություն յեղավ: Միացյալ և «անկախ» Հայաստանն՝ իր «պատմական սահմաններով»—նրա քաղաքական ակտուալ լոզունգը դարձավ: Նշանավոր «Սերի դաշնադրի» (1920 թ. ոգոստոսին) ստորագրումը՝ ճաճկաստանի կողմից՝ մանր բուրժուազիայի ազգային-հարձակողական ձգտումների բորբոքման ամենարարձր կետը դարձավ: «Այդ պայմանագրի տակ յաղթական պետությունների շարքում դրված է նաև Հայաստանի ստորագրությունը: Նշանակալից յերևույթ, — ազգարարում և «Հայաստանի Կոոպերացիայի» առաջնորդողը, — վոր բերկրության զգացումներ պիտի հաղորդե բորբ հայերին: Մեր քաղաքական հարությունը ճանաչվում է... Սերի պայմանագիրը ասում է հային. Հայաստանի տերը դո՛ւ ես... Սերի պայմանագիրը ասում է թուրքին. դու յեկվոր նվաճող եյիր, ուրիշ տունը մտած դիշատիչ... Բնիկ հայը նվաճում է իր հայրենիքը...» «Նյութական ու իդեոլոգիական ֆակտորներն այնպես են դասավորվում, վոր Հայաստանի վերածնությունը դառնում է ակնհայտ իրողություն»: «Մնում է, վոր ինքներս երես չդարձնենք մեր յպրտոն բողբից...»: Այստեղ «Հայաստանի Կոոպերացիան» ծավալում է իդեոլոգիական մի ամբողջ պլատֆորմ: «Ամենից առաջ, — ասում է նա, — պետք է հաղթահարել «ներքին թուրքին», «ներքին ռուսին» և մյուս ուժերին, վոր կաշկանդել են մեր հոգին, թափառական դարձրել մեր քաղաքական միտքը: Քաղաքական վերածնությունը մեղանից պահանջում է հոգևոր վերածնություն...» Սուսն ինչի՞ մասին է: Այդ ի՞նչ ուժեր են, վոր «կաշկանդում են» հայի «վոլին», իսանդարելով նրա, մանր բուրժուազիայի ազրեստիվ-ազգային ձգտումների իրականացմանը: Դա հեղափոխական սոցիալիզմի ուժն է, վոր արտաքին ավերիչ ուժ է հայտարարվում: Նա խանգարում է, վոր հայ կապիտալիստական բուրժուազիան մեծ Հայաստանի տերը դառնա: «Հայ բուրժուազիան չե թե մեր հայրենիքում ավարտել է իր գործը, այլ նույնիսկ չի ասել իր նշմարելի խոսքը, — վշտանում է «Հայաստանի Կոոպերացիան», Դ. Անանունի բերանով, — Հայաստանը, — շարունակում է նա, — նմանվեց այն թոչունին, վոր ձու յե ածում ուրիշի բնում, իսկ իր բույնը

թողնում է դատարկ և անհրապույր: Նա ունի դրամաւեր հարազատներ, վորոնք բազմել են ուրիշ յերկրներում, բեղմնավորում են այդ աշխարհները, բայց մատր մատին չեն խփում նույնը կատարելու սեփական հայրենիքի նկատմամբ»: Այս ձևով՝ մանր բուրժուազիան կապիտալիստական խոշոր բուրժուազիայի կարոտն է քաշում: Նա նրան կանչում է «հայրենիքին» օրրանալու, զգալով, վոր ինքն առանց նրան չի կարող դուրս գալ այդ ծանր բեռան տակից:

Բայց վաղուց է սասված, թե բուրժուազիայի համար «հայրենիք է այնտեղ, վորտեղ լավ է»: Դավիթ Անանունը, վորպես յերբեմնի մարքսիստ, այդ բանը լավ է հասկանում: Նա փնտում է հայկական կապիտալիստական բուրժուազիայի այդ կոսմոպոլիտիզմի, դեպի «ազգային գործերն» ունեցած անտարբերութեան պատճառները. այդ պատճառները մի քանիսն են. նախ՝ բացակայում է «հայրենիքն» արտաքին փտանդից հանդիստ պահելու յերաշխավորութունը և յերկրորդ՝ Հայաստանի մանր-բուրժուական կառավարութեան նկատմամբ յեղած անվստահութիւնը: «Վորպեսզի ազգային կապիտալը դեպի «հայրենիք» գրավենք, —ասում է Դ. Անանունը, — նրան գրավիչ պետք է դարձնենք կապիտալիստական չահագործման նպատակների համար: Ազգային «պարլամենտը», — չարունակում է նա, — այդ ուղղութեամբ արդեն քայլ է արել. «նա հայտարարել է մասնավոր սեփականութեան անձեռնմխելութիւնը»: Բայց մի՞ թե կապիտալիստական բուրժուազիան չի՞ «լսում հայ ժողովրդի ներքին ձայնը», հարցնում է նա. «Այդ ձայնը խոսում է հայ ժողովրդի սեփականատիրական ձգտումների ուժի մասին»... «Նա մասսայորեն մահանում է, առանց ձեռք բարձրացնելու ունեւորի հացին ու գույքին, հայ ժողովուրդը դարմանալիորեն ազատ է հանցավոր միտումներից դեպի ուրիշի կարողութիւնը և, Բայրոնի գեղեցիկ արտահայտութեամբ, նրա առաքինութիւններն իրանն են, իսկ արատները արդունք դրսի ազդեցութեան, վորի արմատախիլ անելու համար պիտի իր աշխատանքը ասպարեզ հանի նաև հայ բուրժուազիան»... Այդ «արատավորը» հայ «ժողովրդի» մեջ կոմունիզմն է, վոր միմիայն «դրսի ազդեցութեան արդունք» է հայտարարվում: Կոմունիզմի դեմ կռիւլու գործում մանր բուրժուազիային ոգնելու համար, «Հայաստանի Կոոպերացիան» հրավիրում է հայկական կապիտալիստական խոշոր բուրժուազիային: Այսպիսով՝ իր արտաքին ազգային-ազդեցութեամբ քաղաքականութեան աճումին զուգընթաց՝ հայկական

մանր-բուրժուազիան յերկրի ներսում, իր «հայրենիքում» ել սկսում է իսկական Փաշիզմի սերմեր աճեցնել: Հայկական մանր բուրժուազիայի այդ մտահոգացումների ամենից ավելի վառ իրողութեական շեփորն է դառնում, ինչպես մենք վերեվում ասացինք, — «Հայաստանի կոոպերատիւնների միութեան» կենտրոնական որդանը, — «Հայաստանի կոոպերացիան»: Սա ամենավին ել պատահական յերեւոյթ չի: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանի կոոպերացիայի սոցիալական հիմնական բազան կազմողը կապիտալիստական մանր բուրժուազիան էր: Նա եր այդ կոոպերացիայի նվազողն ու տոն տվողը: Նրա ղեկավար որդանները գտնվում էին «դաշնակցութեան», — վորպես այդ մանր բուրժուազիայի քաղաքական ամենաակտիւ ջոկատի, — ղեկավարութեան տակ: Այդ բուրժուազիայի «ազբեստիլ իմպերիալիզմի մոտ ծառայութեան եր մտել կոոպերացիան»: Նա գործիք պետք է դառնար ազգի անտեսական հավաքման համար և գալիք մեծ Հայաստանի անտեսական հիմքերից մեկը պիտի հանդիսանար:

Բայց «իմպերիալիզմը» ճակատագրական յեղավ փոքրիկ «Հայաստանի» համար: Նրա մանր բուրժուազիայի ազգային ոռոմանտիզմը նրա աշխատավոր մասսաների համար մեծագույն վողբերութեան նախերգանք դարձավ: «Անկախ» Հայաստանն, իր քաղաքական ձևավորման սկզբից իսկ մնաց յերկու կրակների մեջ, վորոնք գանդաղորեն ու անչեղ կերպով մաշում էին նրա անտեսական գոյութեան հիմքը:

Մի կողմից կանգնած էր Տաճկաստանը, վորից Հայաստանի մանր բուրժուազիան յերազում էր հետ խլել հայկական վիւայեթները: Տաճկաստանից կատարվելիք սերբիտորիալ այդ գրավումների հաշիւն սնվում էր գլխավորապես հայ կապիտալիստական մանր բուրժուազիայի իմպերիալիզմը: Բնական է, վոր Տաճկաստանի ռազմական ուժեղ պետութեան և փոքրիկ «Արարատյան հանրապետութեան» միջև խաղաղ հարաբերութիւններ ստեղծելուն այդ բանով ոժանդակել չէր կարելի: Հենց ըսկզբից այդ հարաբերութիւնները ձևավորվեցին վորպես բացարձակ թշնամական: Տաճկական Ռազմա-Ֆետալական պետութեան հանդեպ յեղած ստեղծութիւնը խառնվեց դեպի թուրք ժողովուրդը ստեղծված ստեղծութեանը: Ի հարկէ, Տաճկաստանն էլ քնած չէր: Նա վաղուց արդեն սովորել էր հայերի վրա նայել վորպես «մեծ պետութիւններին» հակառակական իմպերիալիստական «վորոգայթների գործիքի» վրա: Վոր-

պեսպի այդ «վորդայթներին» վերջ տա՝ նա վճռեց Փիզիքայեսս վոչնչացնել այդ «գործիքը»։ Համաշխարհային պատերազմի սկզբում նա այդ հարցը լուծեց՝ հայկական վիլայեթները հայկական ընկալությունից մաքրելով։ Բայց նրա համար դա դեռ ես հարցի վերջնական լուծումը չէր։ Փոքրիկ, «Արարատին» կից հանրապետութունը շարունակում էր այդ «գործիքի» արադիցիոն դերը խաղալ։ Տաճկաստանը պատրվակներ էր վորոնում այդ «գործիքին» վերջ տալու համար։ Մանր բուրժուազիայի իմպերիալիզմն ու նրա կույր պարծենկոտ նացիոնալիզմը այդպիսի քիչ առիթներ չէին տալիս։ Յեկ Տաճկական բանակը յերկու անգամ հրի ու սրի քաշեց փոքրիկ Հայաստանը։ Բայց միայն Տաճկաստանի հետ չի, վոր թշնամի էր Հայաստանը։ Նրա տիրող նացիոնալիստական բուրժուազիան թշնամական ընդհարումներ ունեցավ և հարևան հանրապետութուններին—Վրաստանի ու Ադրբեջանի հետ։ Վերջիններս նույնպես դուրս էին յեկել ազգային «Sturm und Drang»-ից։ Վրաստանում քաղաքական ղեկը գտնվում էր «մենչեվիկներին» ղեկավարութամբ աշխատող նացիոնալիստական մանր բուրժուազիայի ձեռքում։ Ադրբեջանում քաղաքական ղեկն իր ձեռքն էր առել խոշոր հողատիրական դասը՝ նոր առաջացող թուրքական կապիտալիստական բուրժուազիայի հետ միասին։ Այստեղ քաղաքական ղեկավար կուսակցութունը «Մուսավաթն» էր։ Ադրբեջանի տիրող դասակարգերը ևս ապրում էին թուրքական «մեծ» պետութուն ստեղծելու ծրագրներով, և նրանք այդ բանը պիտի անէին թուրք բնակչության գերակշռութուն ունեցող հարևան յերկրների վորոչ շրջաններն Ադրբեջանին միացնելու միջոցով։

Այդ «անկախ» պետութունների ստեղծման մոմենտներից նրանց միջև սկսվում է առաջանալ յերբեմն ծածկված ու խուլ, և յերբեմն բացահայտ թշնամական մի պայքար, վոր մեկ-մեկ վերածվում է ավերիչ զինված ընդհարումների։ Վրաստանն՝ իր ձեռքում ունենալով «բաց ծովի» բանալիները՝ կանգնած էր արտաքին շուկաների հետ Հայաստանին կապող ճանապարհի վրա։ Մաքսային արգելքներով նա համարյա թե փակել էր Հայաստանի մուտքը դեպի այդ շուկաները։ Այս «անտեսական բոյկոտը», վոր ջերմացվում էր յերկրի ազգութունների մեջ պետականորեն ձևավորվող մանր-բուրժուազիայի բորբոքված շովինիզմի կործանիչ կրակով, այն հետևանքն ունեցավ, վոր Հայաստանը դանդաղորեն և վորոչ կերպով գնաց դեպի Փիզիքական ու անտեսա-կուլտուրա-

կան ալլասերում։ Համարյա բոլորովին ընդհատվեց Փարսիկանաների ներմուծումը։ Արտահանումն ընկավ մինչև վերջին աստիճանը։ Յերեք «անկախ» պետութունների միջև յերեք մասի բաժանված յերկաթուղին հեռահեռ սկսեց կրճատել իր վազքը, մինչև վոր նավթային վարելիքի բացահայտման պատճառով բոլորովին կանց առավ, վորովհետև Վրաստանը դանադան պատրվակներով հետ էր պցում Ադրբեջանից յեկող նավթի ցրտերնները։

Վերը նկարագրված շարժիչ ուժերի ընդհանուր ներդրութամբ Հայաստանն, այսպիսով, դարձավ «անտեսական աղքատացման կենտրոն»։ Իսկ հայ ժողովրդի կենդանի մնացած բեկորները յենթարկվեցին կուլտուրական ու Փիզիքական ալլասերման անմիջական սպառնալիքին։ «Մեծ Հայաստանի» գաղափարից մնացին ավերակներ և «ազգի» արյունոտված բեկորները միայն։ Մանր բուրժուական ազրեսիվ նացիոնալիզմը կրեց մի անսոցք անհաջողութուն, վորն, այնուամենայնիվ, յերկրին և ժողովուրդին շատ թանկ նսակեց։



Իսկ ի՞նչ բաղբի հասավ կոոպերացիան։ Հայաստանի անտեսական կյանքի քայքայման ու ալլասերմանը զուգընթաց գնում էր նաև ազգային կոոպերացիայի ալլասերման ու քայքայման պրոցեսը։ Կոոպերացիայի համար դժբաղալուծյան շրջանն սկսվում է այն ժամանակից, յերբ, ինչպես մենք վերելվում ասացինք, 1918 թվի կեսերին տաճկական բանակը «յերկրի» սահմաններն և մտնում։ 1918 թվի վերջին տաճկական բանակը թողնում է Հայաստանի սահմանները։ Վերջինս, վորոչ ժամանակով իր ստացած հարվածներից հետո սկսում է ուշքի դալ։ Ստեղծված հարաբերական հանգիստը անտեսական աշխուժացման վորոչ խթան է դառնում։ Կենդանանալ և սկսում նաև կոոպերացիան, վոր պատերազմական դեպքերի ժամանակ ավերվել էր։ 1916 սպառողական ընկերութուններից 1918 թվի վերջին մնացել էին միայն 27-ը։ Մնացածները կործանվել էին։ 1919 թիվն արդեն հանդիսանում էր սպառողական կոոպերացիայի վերածնության տարի։ Տարվա վերջը սպառողական ընկերութունների թիվը հասնում էր 124-ի։ Նրանց աճումը շարունակվում էր նաև հաջորդ տարում․ այնպես վոր՝ 1920 թվի վերջին նրանց թիվը 282-ի

եր հասնում : Իսկ ըստ շրջանների նրանք բաշխված էլին հետևյալ ձևով .

ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Ընկերության անունը	Կադմակերգված անգամների թիվը	Ցուցարանը շուրջ բնկերության ընկնող անգամների միջին թիվը
Յերեվան քաղաք	8	11,478	1,435
Յերեվանի գավառ	54	11,548	168
Եջմիածնի »	48	14,878	309
Նոր-Բայզետի »	14	4,022	287
Սուրճալուի »	11	2,666	242
Լոռի-Փամբակի »	25	14,686	587
Ալեք-պոլի »	93	29,125	313
Դիլիջանի »	22	11,535	524
Ղարս-Կաղզվանի շրջան	5	6,772	1,354
Զանդեղուրի գավառ	1	490	490
Յերկաթուղային սպառողական ընկերություն	1	5,255	5,255
	282	112,455	399

Իսկ այդպիսի կոոպերացիայի այս ամուսնի նրա մասնակցությունների սիմպոտոմն էր միայն : Նա սնվում էր բացարձակ անապրանքայնությամբ, վորը հրեշավոր չափերի էր հասել . մենք վերելվում արդեն ասել ենք, վոր Հայաստանն իր տնտեսություն տեսակով պատկանում է գյուղական յերկրներին : Իր սեփական ինդուստրիան չունենալով՝ նա ապրում էր համարյա բացառապես ուսական արդյունաբերության ներմուծման հաշվին : Նրա քաղաքական ու տնտեսական մեկուսացման հետ միասին՝ գաղարեց նաև ամեն տեսակ Ֆարրիկամների ներհոսումը : Դադարեց և ուսական հացի ներմուծումը, վոր վոչ միայն քաղաքի պարենավորմանն էր ծառայում, այլ և բարձր-ինտենսիվ և աշխատանքի բարձր տարողության մշակույթ ունեցող գյուղատնտեսական շրջաններին : Իր արտադրության փոխարեն քաղաքից վոչինչ չստանալով, գյուղը խիստնչի նման փակվեց իր պատյանի մեջ և վերակենդանացրեց ընդհանր անտեսություն հին ձեվերը : Վերականգնվեց տնտեսական կապիտալիզմի զարգացման հետևանքով քայքայված տնային արգյունաբերությունը : Մանելու և գործելու տնային գաղղյահները

նոր ուժով աշխատել ըսկսեցին գյուղական համարյա թե ամեն մի իրճիթում : Նախկին ձեթի ճրագը կրկին փոխարինեց նավթի լամպերին : Խաղողի փառահեղ այգիները կարվեցին : Մասները բանեցվում էլին իբր վառելիք, իսկ հողի մաքրված տարածությունները արամադրվում էլին պարենավորման նյութերի մշակույթին : Նույն վիճակին էլին մատնվում և բամբակի դաշտերը :

Այն ժամանակ, յերբ գյուղը վերկույթյան ճանապարհ էր գրտնում տնային բնական տնտեսություն պայմաններում, Հայաստանի փոքրաթիվ քաղաքները մատնվում էլին հրեշավոր սովի : Ժողովրդական տնտեսություն այս ալլասերման ու քայքայման հրեշավոր Փոնի վրա ալլասերվել ու քայքայվել էր սկսում նաև աղղային կոոպերացիան : Աստիճանաբար նա դառնում էր մի անկենդան զիակ : Սպառողական ընկերությունները մեկ-մեկու հետեվից թառամում էլին : Ծուռով նրանք մինչևիսկ գաղարեցին յետուն կյանքի վոր և է նշան ցույց տալուց : Իրա հետ միաժամանակ ավելի ու ավելի բարակում էլին տնտեսական-կադմակերպչական այն թելերը, վորոնցով նրանք կապված էլին իրենց «միություն» հետ և վերջապես այդ թելերը բոլորովին կտրվեցին :

Կարվելով իր պերիֆերիայից—վոր հանդչում էր ընդհանուր աղքատացման մարմանը կրակով—«Հայկոսոսն» սկսեց խիստնչի նման կծկվել ու զալարվել իր «ապպարատի» պատյանում : Իսկ այդ «ապպարատը» կորցնելով սոցիալական ամեն մի բաղա, հետզհետե դարձավ ինքնաբավ մի ուժ, վոր ապրում էր միմիայն իր շահերով : Նրա պահեստներում անցյալից մնացել էլին սպրանքային այս ու այն արժեքները, վոր գործադրվում էլին «ապպարատը» կերակրելու վրա : Իրեղենային այդ արժեքները զեռ վորոչ չափով պահպանում էլին մեռնող «կենտրոնի» կենդանության նշանները : Նման վիճակը տեսեց մինչև այն ժամանակ, յերբ բոլորովին հալվեցին անցյալի ժառանգություն վերջին մնացորդները :

«Կենտրոնի» այսպիսի վիճակը հետզհետե կոոպերացիայի շուրջն ըստեղծում էր հասարակական արհամարանքի բարոյապես վատառողջ մթնոլորտ : Կոոպերացիան մակարուծային թարախտա մի ուռուցյց դարձավ մեռնող ժողովրդական տնտեսություն մարմնի համար : Նրանցից յերես դարձրեց մինչևիսկ «զաչնակցականների» մանր-բուրժուական նացիոնալիստական կառավարությունը, վոր արհամարանքով ու անվստահություններ էր վերաբերվում զեպի այն մարդիկը, վորոնց ինքը աղղային կոոպերացիայի ղեկավար էր

կարգել: «Բայց խնձորը խնձորենուց հետո չի բնկնում», — ասում է փոքրիկը ական առածը: Ազգային կոոպերացիան, —ինչպես մենք վերեում ցույց տվինք, իր մեջ հայելու նման անդրադարձնում էր մանր-բուրժուական նացիոնալիստական իշխանության հասարակական-տնտեսական սնանկությունն ու անբարոյականացումը: Նրա՝ մանր-բուրժուական նացիոնալիզմի մարտնչող վոզու՝ էր վարակված նաև կոոպերացիան, վոր իր սրգան «Հայաստանի կոոպերացիայի» յերեսներին ծավալում էր ազգային բացառիկության կործանարար միջնորդող և բորբոքում էր կենդանաբանական նացիոնալիզմի հավակնատուության բնազդներ միայն:

Այսպես, տնտեսական ալյասերման և ազգային կոոպերացիայի քայքայման հետ միասին տեղի էր ունենում բարոյական անկման և հոգեկան ալյասերման մի խոշոր պրոցեսս:

Սա էր Հայաստանի ազգային կոոպերացիայի անփառունակ փախճանը, վոր տեղի էր ունենում մանր-բուրժուական կառավարության և «զաշնակցականներին» անկման նախորդակին:

— V —

Նացիոնալիստական մանր բուրժուազիայի սնանկացումը: Հայաստանի սոցիալական հեղաշրջումը: Աշխատավորների իշխանությունը: Յերկրի տնտեսական ու կուլտուրական վերածնունդը: «Ռազմական կոմունիզմն» ու կոոպերացիան: Կոոպերացիայի արքևացումը և 1921 թ-վի հունիս 3-ի դեկրետը: Ազմկալի գործերի և առևտրական աժիոտաժի շրջանը:

* * *

Մինչ այդ՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ալիքներն ալիլի ու ալիլի բարձրանում են: Սոցիալական մեծ փոթորիկների վորոտը հասնում է մինչև հետափոր Հայաստան: Նացիոնալիստական մանր բուրժուազիան և նրա կառավարությունն արդեն սկսում են ջղախնայալ և փշթացնել: Հեղափոխական փոթորիկների արտաքին ծավալվող ազդեցություններին հակադիր՝ մանր բուրժուազիան ստեղծում է յուրահատուկ ազգային «չինականության» ուսմունքը, վոր ամեն չարից ու վտանգից փրկող պիտի հանդիսանար: Իրը փրկություն է հայտարարվում հայերի ազատագրումը նրանց հետ չփում ունեցած ազգերի—ուսանների պարսիկների և այլն—ամեն տեսակ կուլտուրական ազդեցություններից: Ռուսական կուլտուրան հայտարարվում է վորպես հիվանդոտ մի յերեսվթ: Կուլտուրական բոլոր ազդեցություններից մերկացած հայ—աս՝ և փրկության խաբիսխը, «Միացյալ ու անկախ Հայաստանի» քաղաքական վերածնության «պայմանը»: Գաղափարախոսները մոտանում էլին, իհարկե, վոր կուլտուրական ազդեցություններից մերկացած հայը՝ իր «ազգային» հատկությունները կորցնելու հետ միասին կկորցնեք և իր մարդկային հատկությունները:

Ազգային սահմանափակման այս տեսությամբ արամաբանորեն պատկվում էր մանր-բուրժուական իշխանության կատարյալ սնանկացումը: Իդեոլոգիական այս սնանկացումը, տնտեսական ու քաղաքական սնանկացման մյուս յերեսը հանդիսանալով՝ գերեզման էր փորում «զաշնակցականներին»

մանր-բուրժուական կառավարութեան համար: ժողովրդի մեջ, գյուղում, բոլորովին կորցնելով իր հողը, հյուսիսային հեղափոխական հողմից նա մոխիր դարձավ ու ցրվեց: Փոխվեցին նաև յերկրի ներսի սոցիալ-դասակարգային հոխհարարութեանները: Կապիտալիստական մանր բուրժուական ձեռքի ձեռքից իշխանութեանն անցավ հասարակական աշխատավոր դասակարգերին—բանվորութեանն ու մանր աշխատավորական գյուղացիներին: Իսկ քաղաքական ղեկավարութեանն անցավ Հայաստանի կազմակերպիչ կոմունիստական կուսակցութեանը: Դրա հետ միասին Հայաստանի հետագա զարգացման պրոցեսն էլ ստացավ միանգամայն տարբեր դրութիւն: Հարեան հանրապետութեան ներում—Վրաստանում և Ադրբեջանում ևս քաղաքական իշխանութեանը բուրժուական և Փետրալ-կարլաժատիրական դասակարգերի ձեռքից անցավ աշխատավորութեան ձեռքը: Վոչ թե ազգութեանները կոխվ, այլ կոխվ ընդդեմ բոլոր ճնշողների՝ անկախ նրանց ազգային պատկանելութեանից—սա էր պրոլետարական ղեմոկրատիայի խոր իմաստը. նա յեկավ փոխարինելու բուրժուական կարլաժատիրական ղեմոկրատիային: Այսպիսով՝ ազգային հակաժարտութեանները փոխարինվեցին ազգամիջցան համերաշխութեան և փոխադարձ գարծակցութեան ամուր կապերով: Դրա արտաքին արտահայտութեանը դարձավ Անդրկովկասյան հանրապետութեանների Ֆեդերացիան: Վերացվեցին ներքին մաքսերի և քարտեզիական պատնէշները: Վերականգնվեցին նախորդող դեպքերի շնորհիվ խախտված անտեսական նորմալ կապերը—ինչպես այդ հանրապետութեանների, այնպես էլ նրանց ու Ռուսաստանի միջև:

Վերականգնվեց Անդրկովկասի ու Ռուսաստանի անտեսական բնական կոմբինատը, վոր փլվել էր իմպերիալիստական պատերազմի ու ազգային «Sturm und Drang»-ի միջոցով. բայց նա վերականգնվեց բոլորովին նոր հիմունքներով, վորոնք բղխում են պրոլետարական իշխանութեան բնույթից և այն խնդիրներից, վոր կապված են «յերկրի» ու նրա մեջ մտնող ազգային հանրապետութեանների արտադրական ուժերը վերականգնելու և այդ ուժերի հետագա վերակառուցումը զարգացման նոր ուղղութեամբ տանելու հետ: Դրա հետ միասին, դուրս գալով կատարյալ անդամալուծման վիճակից, Անդրկովկասյան հանրապետութեանների անտեսական կյանքն ընկաւ քաղաքական արագ տեմպով վերականգնվել:

Պրոպրեսիվ-վերականգնումի այս պրոցեսները հատուկ ուժով պետք է անդրադառնային Հայաստանի վրա: Վերջինս, համեմատած հարեան հանրապետութեանների հետ, ամենից ավելի երատու էր քաղաքական ու անտեսական այն մեկուսացմամբ, վոր բրնորոջ էր նրա ազգային «Sturm und Drang»-ի ժամանակաշրջանի համար:

Հայաստանը վճռականորեն անցավ դեպի անտեսական ու կուլտուրական վերածնութեան ուղին: Ճշմարտութեան և այն, վոր նրա ժողովրդական անտեսութեանն ապրեց «ոաղմական կոմունիզմի» մի վոչ մեծ շրջան, վորպիսի անտեսական սխտեմը արդյունք էր քաղաքացիական պատերազմի և նրան նախորդող այն համարյա լիակատար անդամալուծման, վոր գոյութեան ուներ հանրապետութեան ամբողջ անտեսական կյանքում: Այդ պայմաններում գլխավորող էլին հանդիսանում յեղած պարենավորման միջոցների հաշվառման ու նրանց ճիշտ բաշխման խնդիրները: «Ռազմական կոմունիզմը» հայտնի չափով անխուսափելի պատմական մի ետապ էր, վոր նախորդեց Հայաստանի իսկական կուլտուրական վերածնութեան իսկական սկզբին:



Ի՞նչ դարձավ Հայաստանի սպասողական կոոպերացիան սոցիալիստական իշխանութեան ժամանակաշրջանում: Նա ի՞նչ բազմ ունեցավ: Սոցիալ-անտեսական զարգացման նոր հեռանկարներով նրա առաջ ի՞նչ նոր խնդիրներ դրվեցին:

Նա ունեցավ յերկու տարբեր վիճակներ, վորոնք կապված էլին յերկրի անտեսական զարգացման յերկու հիմնական մոմենտների հետ: Այդ յերկու մոմենտները կարելի է բնորոշել հետևյալ կերպ. առաջինը՝ վորպես ոաղմական կոմունիզմի ժամանակաշրջան, իսկ յերկրորդը՝ վորպես մի շրջան, վոր սկսվում էր անտեսական նոր քաղաքականութեան կիրառումից:

Ռազմական կոմունիզմի ետխան բնորոշվում է՝ մասնավորապես արեւորեւրոպական կապիտալիստների կատարյալ խորապիմամբ և ամբողջ անտեսութեանը կենտրոնացված պետութեան ձեռքերում կոմունիզմի սկզբունքներով կազմակերպելու քաղաքականութեամբ: Տնտեսութեան այդ սխտեմի մեջ, կոոպերացիան, վորպես մասնավոր-իրավական ինքնամփոփ կազմակերպութեան, տեղ ունենալ չէր կարող: Կենտրոնացված պետական իշխանութեան ձեռքում կոոպերացիան պետք է դառնար տեխնի-

կական-բաշխիչ մի ապարատ՝ առանց առևտրական վոր և և Փունկ-
 ցիայի: Նա դադարեցրեց իր գնումն ու վաճառքը: Նրա Փուկցիա-
 ները սահմանափակվեցին միմիայն ա՛յն ապրանքների բաշխումով,
 վոր նա պիտի ստանար «Պարտոզկոմատի» պահեստներից: Սպառո-
 ղական ընկերութունների խանութների բոլոր ապրանքային մնա-
 ցորդները հաշվի եյին առնված և բռնագրավված եյին «Պարտոզ-
 կոմատի» տեղական կազմակերպութունների կողմից: Բռնագրավ-
 ված ապրանքների ընդհանուր արժեքը հասնում էր 30,000 ուր-
 լու, վրսկով: Դրանք այն վերջին մնացորդներն եյին, վոր սպա-
 ռողական ընկերութունները ժառանգել եյին անցյալից: Ապրանք-
 ների բռնագրավման հետ միասին՝ սկսեցին բուժարքի յենթարկվել
 նաև կործանումից փրկված վերջին սպառողական ընկերութուն-
 ները: Նույն վիճակին հասավ և «Հայկոսպը», վորից սոցիալիս-
 տական իշխանութան հաստատվելու ժամանակ մնացել եյին միայն
 հաշվի առնված պահեստները: «Հայկոսպի» վարչութունը վերած-
 վեց «Պարտոզկոմատի» ծառայողական որգանի և արգելվեց, վոր
 նա վոր և և գործառք կատարի՝ առանց «Պարտոզկոմատի» հրա-
 մանի:

Իսկ «Պարտոզկոմատն» այն ժամանակ «Հայկոսպի» միջոցով
 վոչ մի գործառք չէր կատարում, վորովհետև «Պարտոզկոմատի»
 ապրանքային ֆոնդերը սահմանափակ եյին և չըջանառու-
 թյան միջոցները քիչ:

Յեզ այսպես՝ այդ չըջանում Հայտատանի կոոպերացիան մի
 սնամեջ տեսիլ էր, մի անկենդան դիակ: Նա ավելի շատ դոյու-
 թյուն ուներ վորպես դադափար, վորպես սրտենցիա, քան վորպես
 իրականութուն:

Գործն այսպես շարունակվեց մինչև 1921 թվի հունիսը: Այդ
 ժամանակամիջոցից վորոչ դարձ և սկսվում դեպի կոոպերացիայի
 վերածնութունը: Այդ դարձը նշանակալից և դառնում սպառկո-
 պերացիային վերաբերվող յերկու դեկրետների հրատարակու-
 թյամբ: Այդ յերկու դեկրետներն էլ նշված են 1921 թ. հունիս 3-ի
 ամսաթվով: Սպառողական կոոպերացիան այդ դեկրետներով ա-
 դատվում է Պարտոզկոմատի ոժանդակ որգանի դերը կատարելուց:
 Կոոպերացիան ինքնավար ու անկախ և ճանաչվում՝ սպառկո-
 պերացիայի բնույթին ու խնդիրներին հատուկ բոլոր գործառքները
 կատարելու գործում: Միաժամանակ կառավարական բոլոր մար-
 միներին կարգադրվում է վերադարձնել կոոպերացիային նրանից
 բռնագրավված բոլոր ֆոնդերը:

Յերեան են յեղնում կոոպերացիայի վերածնության առաջին
 նշույլները: Ի հասուցում կոոպերացիայի կրած վնասների՝ կա-
 ոավարության վորոչամբ, «Կոոպերատիվների միությանը», վոր-
 պես անվերադարձ փոխառություն, տրվում է 25,000 վրսկի ուր-
 լու ապրանքներ ու դրամ: Սրանից բացի՝ կոոպերացիան սկսում է
 կառավարության կողմից բավական առատաձեռն կերպով ֆինան-
 սավորվել վերադարձվելիք, բայց առանց սկզբից վճարման վորո-
 չած ժամկետներ ունեցող փոխառություններով: Չանազան ժա-
 մանակներում «Միությունն» այդպիսի փոխառություններ և բո-
 տանում 55,000 վրսկի ուր-
 լու:

Ստանալով այդ ֆոնդերը՝ միությունը կենդանանում է. ա-
 րագ ու տենդոս շինարարություն և սկսվում ինչպես իր, Միու-
 թյան ապարատում, այնպես էլ տեղերի կոոպերացիայում: Տա-
 րերային տենդոսությամբ մեկը մյուսի հետևից բացվում են
 «Միության» բաժանմունքները: Պետք էր արագ շարժվել, պետք
 էր շտապել, վորովհետև վերածնվող կոոպերացիայի վրա մեծ
 հույսեր եյին դրվում: Նրա մեջ եյին տեսնում տնտեսական հի-
 վանդության այն բուժիչ ազդեցությունը, վորի ազդեցութունը պետք
 է արտահայտվեր անմիջապես: Դրա հետ միաժամանակ ըսկսվեց
 վերևից սպառողական ընկերութուններ տնկելու մի նույնպիսի
 հիվանդագին-տենդոս պրոցես: Սակայն այդ ընկերութունները
 կոոպերատիվ եյին միմիայն անունով: Ըստ էության, նրանք
 «Միության» չըջանային բաժանմունքների սովորական խանութներ
 եյին: Նրանք կազմակերպվում եյին այնքան ավելի արագ, վոր-
 քան տեղերն ավելի եյին դրդումներ ստանում վերևից յեկող ապ-
 րանքային ֆոնդերով: Կարճ ժամանակամիջոցում հանրապետու-
 թյան տերրիտորիայի վրա ստեղծվեցին այդպիսի 150 ընկերու-
 թյուններ:

Վերևից առանց հաշվի յեկող ապրանքային ու դրամական
 ֆոնդերից խթանվելով, ինչպես «կենտրոնը», այնպես էլ «տե-
 դերն» ըսկսեցին ուռչել, ընդարձակվել, ցրվել, տարերայնորեն
 մեծացնելով իրենց շտատները, բարդացնելով իրենց տնտեսական
 ֆունկցիաները, ամենևին չհամակերպվելով իրենց միջոցներին,
 վորովհետև այդ միջոցները բավական անփորոչ մեծութուն եյին
 կազմում և դժվար էր վորոշել, թե վո՞րտեղ էր վերջանում սեփա-
 կանը և վո՞րտեղ էր սկսվում ոտարինը: Դեպքերի այս ամբողջ
 ջրասպտույան ավելի ևս ուժեղացավ, խորացավ ու բարդացավ,

յերը Պարթոզկոմատը սկսեց լուծարքի յենթարկել իր ապրանքափոխանակման խանութները և իր ապրանքային ֆոնդերը տվեց կոպերացիային: Ի հարկե, այս ամենն արվում էր առանց ծրագրի, առանց սխառմի ու հաշվի, առանց վորեւ պայմանի, այլ հենց այնպես—տնավարի, գիպվածարար:

Քիչ թե շատ զարգացած կենտրոնն արդեն սկսում էր յեւք փրնառել նաև դեպի արտաքին շուկաները: Անդրկովկասյան հանրապետութիւնների տերրիտորիայի վրա սոցիալիստական իշխանութիւնն հաստատելն այդ բանի համար բարենպաստ պայմաններ եր ստեղծում: Դրանով արտաքին առևտուրը զարգացման ուժեղ խթան բուսացավ: Արտաքին առևտրի մենաշնորհը փաստորեն հանձնված էր «Հայկոսպին»:

Սկսվեց նույն տարեբայնուրեն-աննդոտ շտապօգականութիւնը: Յերկար մտածելու և կշռադատելու ժամանակ չկար: Անհրաժեշտ էր մոմենտը բաց չթողնել, մանավանդ վոր չըջապատու՛մ ամեն ինչ բարենպաստում էր գլխապատույտ հաջողութիւններին. ճրի փոխազրութիւն, մաքսի, ակցիզի և հարկային պրեսսի բացակայութիւն և այլն: Կոսպերացիայի փողոցում սա մի խկական տոնակատարութիւն էր: Յեվ սկսվեց առևտրական աժիոտածի մի տխուր չըջան: Զանազան կետերում, փորպես սունկերն անձրեկից հետո, սկսեցին բանել «Հայկոսպի առևտրական գրասենյակները» (Քալթրիում, Ջուլֆայում, Նախիջևանում, Թիֆլիսում, Բաթումում, Բագվում, Կոստանտինոպոլսում և այլուր): Բնականաբար դեպի այդ գրասենյակները ձգվեցին ամբողջ սոցիալիստացիան, բոլոր թեթևութիւնը չահույթ փնտրողները, վորովհետև սե վերոհիշյալ գրասենյակներն էլին այն ուղանցքը, վորով յեւք էր վորոնում իր հունից դուրս յեւրած առևտրական բուրժուազիան: Այս ամենը կոսպերացիայի շուրջն բուեղծում էր ազմկատ գործերի և անառողջ կամեերցիոնալիզմի ճշացող մթնոլորտ: Յանցի անառողջ մթնոլորտն, ի հարկե, իր անդրադարձումն էր գտնում նաև կենտրոնում:

Սակայն, ազմկատ գործերի, բնդհանուր անտնտեսավարութիւն և հաշվաման սկզբունքի բացակայութիւն այս գլխապատույտ մթնոլորտում ներքին այդ հիվանդութիւնը, — վորով տառապում էր մեծ սրգանիզմը, — ծածկված էր մակերեսով նայող աչքերից և թվում էր, թե ազգային կոսպերացիան առաջ է շարժվում յոթ վերստ կորոզ քայլվածքով:

Սպառողական կոսպերացիայի հզանամի կիմնական պատնառները. յերկրի գյուղատնտեսական բնույթը և քղբադրամների արժեքազրկումը: Նգովյալ ողակը: Գյուղատնտեսութիւն տեխնիկական նորոգումը վորպես մումենտի խնդիր: Գյուղատնտեսութիւն զանազան ճյուղերի կոսպերատիվ կազմակերպումը: Քաղաքի և գյուղի նորմալ փոխ-հարաբերութիւն պայմանները: Սպառողական և գյուղատնտեսական կոսպերացիաների միացումը: 1921 թվի նոյեմբեր 24-ի դեկրետը վորպես այդ տեղեկեցների արտահայտութիւն: Ինտեգրալ կոսպերացիայի տեսութիւնը: Նրա առաջնացման պատնառները: «Հայկոպի» գյուղատնտեսական բաժինը: Այդ փորձերի անհաջողութիւնը: «Միութիւն» արդյունաբերական գարծունելութիւնը:

* * *

Յեվ այսպես, վորտե՞ղ պետք էր փնտուել սպառողակոսպերացիայի ճիշտամի հիմնական պատնառները: Այդ պատնառները մի կողմից արմատացած էլին Հայաստանի գյուղատնտեսական բնույթի մեջ, իսկ մյուս կողմից՝ թղթային վալյուտայի կատարյալ արժեքազրկման մեջ:

Մենք վերևում ասացինք, վոր Հայաստանն առավելապես գյուղատնտեսական յերկիր է: Նրա բնակչութիւնն ճշուղ մեծամասնութիւնը կապված է գյուղական տնտեսութիւն պայմանների հետ: Առևտրին ու արդյունաբերութիւնն ընկնում է հանրապետութիւն բոլոր բնակիչների 5 կամ 6 տոկոսը միայն: Ըստ վորում՝ այդ արդյունաբերութիւնն ու առևտուրը ունեն մանր-տնայնագործական բնույթ: Այդ պատնառով նա ստիպված է՝ ինդուստրիալ արդյունաբերութիւնն սպրանքները ներմուծել գրսից. իսկ, ինչպես հայտնի է, ինդուստրիայի արտադրութիւնները գյուղատնտեսական յերկրում կազմում են սպառողական ընկերութիւնների «առևտրի» գլխավոր առարկան:

Բայց սպառնալուքերացիան ինչպէս ս պետք է ձեռք բերել ինչուսարիալ արդյունարեբության առարկաներ :

Բնական է, կտանն, դրամի միջոցով : Բայց ալա՛ղ : Թղթադրամների գնողական ուժն արտաքին, արտասահմանյան շուկաներում հավասարվում էր անսահման փոքր մեծության՝ շնորհից նրանց համարյա կատարյալ արժեքազրկման : Այդ գեղջում կասեք. «վոսկով գնեցեք» : Բայց ասացեք, վորտեղի՞ց պիտի լինել արք վոսկին : Վոսկին բոլորովին դուրս էր յեկել շրջանառությունից. մասամբ նա անցել էր արտասահման, մասամբ պառկել էր մասնավոր մարդկանց քսակների մեջ, մասամբ հոսել էր պետական դանձարկղի պահեստները և մի փոքրիկ մասն էր միայն, վոր ազատ շրջանառություն էր կատարում «սե բրեթայում» : Այսպիսով՝ մնում էր վոսկին գնել այդ «սե բրեթայից»՝ Թղթադրամների հետ փոխանակելով : Բայց սպառնալուքերացիան կոտակրացիան այդպիսի գործարքների համար վորտեղի՞ց կարող էր վերցնել անհրաժեշտ Թղթադրամների բյուրները : Կարող են առարկել, թե սպառողական կոտակրացիան անհրաժեշտ քանակությամբ Թղթադրամը կարող էր ձեռք բերել գործարանային արդյունաբերության ապրանքները գյուղում ռեսիդացիայի յենթարկելու ճանապարհով :

Բայց ալա՛ղ : Գյուղում այդ «Թղթերից» չկար և գյուղացին նրանց մասին լսել անգամ չէր ցանկանում : Նա վաղուց էր մոռացել դրամական շրջանառության մասին և վերագարծել էր բնական ապրանքափոխանակության պայմաններին : Նա գիտեր միայն մի ֆորմուլա—«ապրանքն ապրանքով» : Տուր նրան իր անձի կամ իր տնտեսության համար պետքական «Փարրիկանաները» և նա դրա փոխարեն կտա քեզ իր գյուղատնտեսության առարկաները :

Բայց սպառնալուքերացիան վորտեղից պիտի վերցնել արք «Փարրիկանաները» : Վորպեսզի սպառնալուքերացիան ունենար արք պետք է ունենար վոսկի. վորպեսզի վոսկի ունենար՝ պետք է յին «Թղթեր», իսկ վորպեսզի «Թղթեր» ունենար՝ պետք է յին «Փարրիկանաներ» : Սպառողական կոտակրացիայի համար այսպիսով բտտեղծվել էր մի նպովյալ շրջան, վորից, բտտ յերևութիւն, յելք գտնել չէր կարելի : Չարմանալու վորչինչ չկա, վոր, այդ անհոսալի շրջանն ընկնելով՝ սպառնալուքերացիան նորից սկսեց շորանալ, թտոսածել և հետզհետե դիականալ :

Բայց միթե՞ բոլոր ուղիներն արդեն սպառվել է յին և վերածնության հույս չկա՞ր այլեւ :

Ի հարկե, այդպես ասել չէր կարելի : Բայց մի բան կարելի էր ասել վորոչ վճռականությամբ. վոտնահարված հին ճանապարհներում կոտակրացիան փրկություն չէր գտնի : Անհրաժեշտ էր դուրս գալ գեղի նոր և գեւ չփորձած ուղիները :

Այդ ուղիները մասնանշվում է յին Հայաստանի ամբողջ տնտեսակարգով : Յեթե Հայաստանը չունէր վոսկու վալյուտա, սպա դրա փոխարեն, վորպես գյուղատնտեսական յերկիր, նա ունէր հում նյութ (բամբակ, բուրդ, կաշի և այլն), վոր նրա համարյա թե միակ «վոսկու պահուստն» է յին հանդիսանում. արտաքին, արտասահմանյան շուկաներում դրանցով կարելի էր ձեռք բերել գյուղին անհրաժեշտ Փարրիկաններ :

Այդ ինդիքն այնքան ավելի հաջող կլուծվեր, վորքան ավելի շատ լինէր «պահուստը» և ինչքան ավելի լավ վորակի լինէ յին նրա բաղկացուցիչ տարրերը : Այդ յերկու ինդիքներն էլ՝ իրար հետ միացած, հանդում է յին գյուղական տնտեսության արտադրական ուժերի բարձրացմանը : Վոր վորքի համար գաղտնիք չի, վոր Հայաստանի գյուղատնտեսական տեխնիկայի հետամնացության պատճառով հում նյութի պահուստները չնչին է յին, իսկ նրա վորակն այնքան ցած էր, վոր նա արտաքին շուկաներում դժվարությամբ էր վաճառվում :

Գյուղատնտեսության տեխնիկայի նորոգում—այս էր ժամանակի նշանը, այս էր մոմենտի կենսական ինդիքը, այս ինդիքի լուծումով պետք է յելք գտնվեր տնտեսական այն փակուղուց, վորի մեջ մղվել էր Հայաստանի ժողովրդական Տնտեսությունը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում :

Բայց այս ինդիքի բարենպաստ լուծման շանտարհին կանդնած է յին մի շարք անհաղթահարելի արգելքներ, վոր է յին. հայ գյուղացիական մասսայի տգիտությունը, գյուղացիական մանր տնտեսությունների պառպերիզացիան և քայքայված վիճակը, ժողովրդին մոտ կանգնած գիտական—տեխնիկական ուժերի բավարար կադրի բացակայությունը, գյուղացիական տնտեսությունների անհատական փոչիացած մանրացած վիճակը, և, վորպես վերջինիս հետևանք, այդ տնտեսությունների ստրիկական կախվածությունը վաչխատուական ու միջնորդական կապիտալից, վորը մասսաների պառպերիզացիայի հետ միասին առաջացնում է տնտեսության գիշատիչ ձեեր :

Գյուղատնտեսութեանը կապիտալ մատակարարելու խնդիրն ու գրամ-փարկային հարաբերութեաննրի կազմակերպումը Հայաստանում բռժին ընկալ գյուղատնտեսական փարկային կոոպերատիվներին, դեռ ևս 1900-ական թվականներին: Բայց Հայաստանի փարկային կոոպերացիան, դժբախտաբար, գյուղում խոր արմատներ ձգել չկարողացավ, այնպես վոր՝ այնտեղ շարունակում էր տերութուն անել վաշխատուն: Վարկի կազմակերպումին ավելի պակաս չափով հայկական գյուղը հաջողութուն ունեցավ գյուղատնտեսական կյանքի այլ կողմերը կոոպերատիվ սկզբունքներով կազմակերպելու գործում:

Սինդիկալ շարժման տարբեր ձևերը հայ գյուղի համար դեռ ստար էյին մնում, չնայած այն բանին, վոր տնտեսական կյանքի ընդհանուր պայմանների ազդեցութեան ներքո գյուղատնտեսութեան համար հասել էր արդեն իր «տեխնիկայի նորոգման» մոմենտը—մի մոմենտ, յերբ գյուղացիական մանր տնտեսութեան առաջ իր ամբողջ հասակով կանգնել էր գյուղատնտեսական արտագրութեան մասնագիտացման հարցն ընդհանրապես, ու յերբ այդ արտագրութեանին սկսել էյին առանձնանալ և ինդուստրիալ բնույթ ընդունել արտագրութեան ու նրա միջերքների վերամշակման առանձին ճյուղերը—բամբակագործութունը, ծխախոտագործութունը, շաքտուղագործութունը, այգեգործութունը, գինեգործութունը և այլն: Բայց, ավա՛ղ, գյուղացիական մանր արտագրողներն իրենցինքն դեռ ևս ներկայացնում էյին ջրատված մի մասսա, վոր գիշատիչ շահագործման առարկա էր դարձել գյուղական գանազան տեսակ կուլակ—վաշխատունների, միջնորդների, վերավաճառողների և կոմիսիոներների վոճմակի ձեռքում, վորոնք, ինչպես մենք վերեում ցույց տվինք, իրենց ճարպիկ ու գիշատիչ ճանկերի մեջ էյին սուել գյուղացու աշխատավորական մանր տնտեսութունը և հնարավորութուն չէյին տալիս, վոր նա, մոմենտի պահանջների համաձայն, անցնի տնտեսութունն ինտենսիվ դարձնելու նշանակալի շափով ավելի բարձր ստաիճանի, քան էլ առաջներում:

Յեվ այգպես՝ մոմենտի տնտեսական կենսական խնդիրն էր «տեխնիկայի նորոգումը»—գյուղատնտեսութեան վերամշակումը՝ նրա գանազան ճյուղերի կոոպերատիվ կազմակերպման միջոցով:

Այս բանով շահագրգռված էր վոր միայն գյուղը, այլ և հենց այդ էր պահանջում Հայաստանի սակավաթիվ ու թույլ զարգացած քաղաքների շահը, վորովհետև այդ քաղաքները

դեռ տառապում էյին առաջին անհրաժեշտութեան տարկաների սուր պակասութեանին: Յեվ այդ ա՛յն ժամանակ, յերբ գյուղատնտեսութունն իր մեջ պարունակում էր անպարտ հնարավորութուններ ու պոտենցյալ ուժեր, վորոնք կարող էյին արթնանալ՝ շվվելով ժամանակի մեծագույն գաղափարի, աստղիացիալ սկզբունքի հետ:

Այսպիսով՝ հայ գյուղի տնտեսական վերամշակումը Հայաստանի քաղաքների, դրա հետ միասին նաև քաղաքային սպոտողական կոոպերացիայի վերամշակման անհրաժեշտ որոյեկտիվ պայմանն էր:

Ամփոփելով այս ամենը՝ մենք կարող ենք ասել, վոր Հայաստանի սպոտողացիայի առաջ գրված էր ճակատագրական մի յերկրնարանք. կամ գերեզման իջնել, կամ արմատից փոխել առեփարակ—տնտեսական իր քաղաքականութունը, շրջելով այն հիմնապես, այլ կերպ ասած—նորից ձեռք բերել իր կորցրած կոոպերատիվ էյութունը:

Բայց բավական էր, վոր սպոտողական կոոպերացիան կանգներ այդ միակ ուղիղ ճանապարհին, իսկույն նրա առաջ պիտի դրվեր գյուղը սինդիկալ շարժման շրջանակի մեջ գրավելու և գյուղատնտեսութեան տարբեր ճյուղերը կոոպերատիվորեն կազմակերպելու պրորբլեմը, վորովհետև այս պայմանով միայն կստեղծվեր քաղաքի ու գյուղի նորմալ փոխհարաբերութունների ամուր հիմք, վորը կհենվեր «do ut des» (տալիս էմ, վոր տաս) սկզբունքի վրա: Այդ ժամանակ, գյուղը, կազմակերպվելով գանազան տեսակ սինդիկատների մեջ, քաղաքին կհայթայթեր վոր միայն անունդի և ժամագին ու լավվորակ միջերքներ, այլ և արդյունաբերութեան համար անհրաժեշտ հում նյութեր (բամբակ, բուրդ, կաշի, ծխախոտ և այլն): Իսկ քաղաքն, իր ստացած հում նյութերը մասամբ արդյունաբերական վերամշակման յենթարկելով և մասամբ փոխանակելով միութունական արդյունաբերութեան սպրանքների հետ, գյուղի համար կդառնար Փարրիկա—գործարանային արդյունաբերութեան սպրանքների գլխավոր հայթայթող:

Սպառողական ու գյուղատնտեսական կոոպերացիաների այս միացման մեջ էր պարունակվում այն գրավականը, վորով պիտի վերացվեր քաղաքի ու գյուղի, սպոտողի ու արտագրողի, բանվորի ու գյուղացու միջև յեղած հակամարտութունը: Բայց դրա մեջ էր

պարունակում նաև Հայաստանի ազգատ, քայքայված ու ազրա-
րային հանրապետութեան տնտեսական ու կուլտուրական վերա-
ծնութեան գրավակներ :

Միմիայն ա՛յդ դեպքում մենք կարող եյինք ասել, վոր «կո-
տպերացիան անցողական մի պալլիատիվ չի: Ամեն մի կոտպերա-
տիվ ձեռնարկութուն, ինչքան ել նա համեատ լինի, իրականու-
թեան մեջ կրում է տնտեսական նոր աշխարհի սագմեր, և նախա-
պես չի կարելի հաշվատել ստաջացոյ գործի հնարավոր ընդար-
ցակումը»:

Բայց մեկ անգամ սինդիկալ շարժման շրջանակի մեջ մտնելով՝
հայկական գյուղն անխուսափելիորեն պիտի մղվեր դեպի այն
գանդաղ, բայց ճիշտ սղին, վոր է՝ աստիճանական անցումը՝ գյու-
ղացու հնարարյան, անջատ-փոշիացած ու անհատական տնտեսու-
թեանից դեպի ապագայի սոցիալիստական տնտեսութեան կատա-
րելագործված տեխնիկան:

Այսպիսով՝ հայկական սոցալոտպերացիայի կենտրոնի ստաջ
դրված եր մի պատմավոր խնդիր-կամ դառնալ իր բնական կարողու-
թեաններով հարուստ մի յերկրի տնտեսական վերածնութեան լծակ,
և հենց դրանով կանդնել գյուղական պրովինցիայի ընդարձակ ու
առողջ տնտեսական բաղալի վրա, կամ, մուրացկանի պարկը
ձեռքն առած, շարունակել պետական փշրանքների համար մուրաց-
կանութուն անելը:

Ահա այն նոր ուղիները, վորոնցով Հայաստանի կոտպերացիան
կկարողանար հաղթահարել վոչ միայն իր հաճախակի ճգնաժամերը,
այլ և հզոր լծակ կդառնար ազրարային փոքրիկ հանրապետութեան
տնտեսական և մինչևիսկ կուլտուրական վերածնութեան համար:

Հայաստանի կոտպերատիվ շինարարութեան այս նոր ուղիներն
իրենց իրավական արտահայտութունը գտան Հայաստանի Ժողո-
վրդական կոմիսսարների խորհրդի 1921 թվի նոյեմբերի 24-ի դեկ-
րետում: Հայաստանի կոտպերացիայի պատմութեան մեջ այդ դեկ-
րետը զարձակ նոր ուղեցույց և կոտպերացիայի առաջ բացեց զար-
գացման զարմանալի հնարավորութուններ: Նրա հիմքում դրված
միտքն անչափ պարզ եր: Այդ միտքը հետևյալն եր. վոր յեթե կո-
տպերացիան հայկական իրականութեան պայմաններում ցանկա-
նում է դառնալ կենսական ույժ, ապա նա, կամա-ակամա, բազմա-
տեսակ թիւրով պետք է կապվի գյուղացու աշխատավորական տըն-
տեսութեան հետ, պետք է դառնա Հայաստանի հետամնաց նահա-

պետական գյուղի տնտեսական, հետևապես նաև կուլտուրական
վերածնութեան լծակը:

Ճշմարիտ է այն, վոր դեկրետն այդ խնդիրը դնում է սպառո-
ղական կոտպերացիայի վրա: Ըստ այդ դեկրետի՝ սպառկոտպերա-
ցիան պետք է ընդգրկի գյուղացիական տնտեսութեան բոլոր կող-
մերը: Գյուղատնտեսական հատուկ կոտպերացիայի խնդիրները
դիտվում են վորպես սպառողական կոտպերացիայի խնդիրներ:
Մենք վերևում արդեն մատնանչեցինք, վոր Հայաստանի սպառո-
ղական կոտպերացիան իր զարգացման ընթացքում դեմ առավ գյու-
ղական տնտեսութեան զանազան կողմերը կոտպերատիվորեն կազ-
մակերպելու պրոբլեմին: Այդ եյին պահանջում գյուղական տըն-
տեսութեան շահերը, այդ եյին պահանջում նաև հենց սպառկո-
տպերացիայի շահերը, վորն իր նախընթաց զարգացման ընթաց-
քով մղվել եր տնտեսական փակուղու մեջ: Բայց հայ գյուղը դեռ
ծանոթ չեր գյուղատնտեսական կոտպերացիային: Վերջինիս զար-
գացման ճանապարհին գեռ ևս կանգնած եյին նշանակալի խոչըն-
դոտներ, վոր եյին—նախ՝ Հայաստանի գյուղացիական մասսա-
ների կուլտուրական սոսկալի հետամնացութունը և նրանց մեջ
տիրող անշարժ համոթութունը. յերկրորդ՝ գյուղացիական տըն-
տեսութունների քայքայվածութունն ու պատուերիցացիան. յեր-
րորդ՝ այդ տնտեսութունների փոշիացած վիճակն ու հայ գյու-
ղացիութեան համայնական սովորութիւնների բացակայութունը
և, վերջապես, չորրորդ՝ Ժողովրդին մոտ կանգնած և տեսի-
նիկապես պատրաստ բավականաչափ ուժերի բացակայու-
թունը: Մինչդեռ՝ սպառողական կոտպերացիան գյուղացիական
ինքնագործունեութեան և ինքնողութեան բավական հանրամատ-
չելի մի ձև եր արդեն: Բացի այս ամենից՝ այստեղ արտահայտվում
եր նաև վորոչ թեքում՝ դեպի տնտեսական պրոբլեմների պարզա-
ցումը: Այս տեսակետն իր մեջ վորոչ չափով անդրազարձնում եր
հենց գյուղացիական տնտեսութեան շլատվածութունը, նրա
ստանձին կողմերի թույլ ստորաբաժանումը: Այդ պատ-
ճառով «ինտելեքալ» կոտպերատիվ տնտեսութունն ամենից
ավելի շուտ այն ժամանակվա «ներկայի» իդեոլոգիական
անդրադարձումն եր, քան ապագայի զարգացման տեն-
դենց: Գյուղատնտեսութեան զարգացումն ընթանում եր
ավելի ու ավելի ստորաբաժանվելու ուղիով: Գյուղա-
ցիական մանր տնտեսութեան առաջ ավելի սուր եր դրվում

գյուղատնտեսական արդյունաբերութեան մշակույթը մասնազե-
տացնելու պրորբլեմը: Այդ պատճառով Հայաստանի գյուղատնտե-
սութեան զարգացման հիմնական տենդենցներն առաջադրում էյին
նաև գյուղական կոոպերացիայի առանձին տեսակների բաժանման
հարցը: Բայց դրանք միմիայն զարգացման տենդենցներ էյին, վո-
րոնք ազոտ կերպով էյին ընդգծվում և դեռ բավարար չա-
փով գիտակցված չէյին: Ահա թե ինչու նրանք չէյին կարող հիմք
դառնալ կոոպերատիվ գործնական քաղաքականութեան համար:

Կոոպերատիվ զարգացումը Հայաստանում մի վորոշ ժամանակ
ընթացավ «ինտեգրացիայի» ուղիով: 1921 թվին, վորոշեա ժամա-
նակի անցողական ազդեցութեաններին վճարելիք տուրք, «Հայաս-
տանի Կոոպերատիվ Ընկերութեանների Կենտրոնական Միու-
թեանը» կազմակերպեց գյուղատնտեսական բաժին: Նրա առա-
ջացման արտաքին որչեկտիվ պայմանները չափազանց ծանր
էյին: Յերկրի տնտեսութեանը դեռ ևս գտնվում էր համարքա կա-
տարելապես անդամարած վիճակում: Կոոպերացիան գոյութեան
ունէր ավելի շուտ վորպէս հնարավորութեան, քան վորպէս իրո-
կանութեան: Նրա ինքնագործունէութեանն ու նախաձեռնութեանը
Պարթոզկոմատը կաշկանդել էր: «Միութեան» Ֆինանսական վիճակը
չափազանց ճգնաժամային էր: Բայց չնայած դրան՝ գյուղատնտե-
սական բաժինը ավելց ընդորինակման արժանի իր առաջին վոր-
ձերը: Նա Հայաստանում նախաձեռնող հանդիսացավ այնպիսի մի
նոր ու ոգտարեր մշակույթի գործում, վորպիսին ծխախոտի մը-
շակույթն է:

Ճիշտ է, վոր Հայաստանում ծխախոտը մշակվում էր վաղուց:
Բայց այդ ծխախոտը ցած վորակի էր—մախորկա, վաճառում
չունէր և գործածվում էր տեղում: Հայաստանում ծխախոտի ար-
դյունաբերական մշակույթի հիմքն առաջին անգամ գրեց Հայ-
կոոպը—Չարբախի շրջանում:

Գործն ըսկսվեց դեռ 1921 թվից և փոքր մասշտաբով—ընդա-
մենը 3 դեպատին: Փորձը հաջող արդյունքներ ավեց: Հաջողու-
թեան ազդեցութեան ներքո՝ հաջորդ տարում վճուվեց ընդարձակել
այդ մշակույթի տարածութեանը: Հողթողկոմատը Չարբախի շը-
ջանում «Հայկոոպին» տրամադրեց 200 դեպատին հող: Ի հարկէ,
այդ հսկայական տարածութեան վրա ծխախոտ ցանկը «Միու-
թեան» ուժերից վեր էր: Վճուվեց սահմանափակվել 23 դեպատու-
նով, իսկ մնացած տարածութեանը տրամադրել բանջարատնոցներ
և զանազան հացահատիկների մշակույթներին:

Այդ տարածութեանը ցանվեց և 1922 թվին Հայաստանի կո-
ոպերացիան ունէր 1500 փութ լավ տեսակի ծխախոտ, վոր հա-
վաքել էր իր պլանտացիաներից:

Կասկած չկա, վոր 22 թվի փորձը տեղական բնակչութեանը
գրգեց անցնելու այդ շահաբեր մշակույթին:

Իրանից բացի՝ գյուղատնտեսական բաժինը, ծխախոտի ընտիր
սերմեր բաժանելու և հրահանգչական ունութեան կազմակերպե-
լու միջոցով առաջին նախապատրաստական քայլերն արեց՝ Հա-
յաստանի լեռնաշխարհի տապ հարթավայրում, առանձին կոոպե-
րատիվ ընկերութեաններին կից, ծխախոտի ցուցադրական պլան-
տացիաներ կազմակերպելու համար:

Բացի այդ՝ գյուղատնտեսական բաժինը ձեռնարկեց նույնպէս
և սերմացու պատրաստող տնտեսութեանների, որինակելի ցանք-
սերի և գյուղատնտեսական այլ ավելի պակաս նշանակալի ձեռ-
նարկումների կազմակերպման:

Ի հարկէ, սրանք հայկական կոոպերացիայի առաջին վարա-
նոտ քայլերն էյին, վորոնցով սկիզբ առնող կոոպերացիան շոշա-
փում էր իր վորաքի տակի հողը: Բայց այդ սկզբնավորութեան-
ների հետագա զարգացումին ընթացք տալն ու վերջնականապէս
ձեռավորելն արդեն վիճակված էր գյուղատնտեսական կոոպերա-
ցիային, վոր 1924 թվից սկսած, հայ գյուղում արդեն արմատներ
էր ձգում: Սպասողական կոոպերացիայի գյուղատնտեսական գոր-
ծունէութեանը միմիայն ազոտ արտահանութեանն էր այն խըն-
դիրների, վոր կոոպերացիային առաջադրում էր հայ գյուղը: Իրա
հետևանքով՝ սպասողական կոոպերացիան իր վրա առավ իրեն
չպատկանող պատմական մի գործ: Ահա թե ինչու, իր վրա վերց-
րած այդ բեռը նրա ուժերից վեր էր: Սպասկոոպերացիայի բը-
նութեն ու խնդիրները քիչ չափով էյին հարմարեցված, կամ ամե-
նէին էլ հարմարեցված չէյին գյուղատնտեսական կոոպերացիայի
առաջ գրվող պրորբլեմների լուծումին: Յուրաքանչյուրն ըստ իրեն,
ասում է լատինական դարձվածքը: Կյանքի փորձը մի անգամ ևս
ընդգծեց այդ հնագույն ճշմարտութեանը: Սպասողական կոոպե-
րացիայի գյուղատնտեսական ձեռնարկումները չունէյին այն, ա-
ռանց վորի նրանք նշանակալի չափով կորցնում էյին իրենց սո-
ցիալական արժեքը, այսինքն, չունէյին «կոոպերատիվութեան»:
Այդ ձեռնարկութեաններն անխուսափելիորեն տառապում էյին
բյուրոկրատական կենտրոնացմամբ, վոր անգրադատնում էր վոչ

միայն նրանց ոգտաբերութեան վրա, այլ և ստեղծում էր նրանց հապիտալիտական ալլաներման խոշոր վտանգը:

Վորպեսզի սույն գլուխն ավարտվի, մի քանի խոսք էլ ասենք հայկական կոոպերացիայի մի շարք այնպիսի նախաձեռնությունների մասին, վորոնք իրենց ամբողջութեամբ անմիջականորեն արդեն վերաբերվում են Միութեան արդյունաբերական գործունեությանը, բայց վորոշ անուղղակի կապ ունեն նաև նրա գյուղատնտեսական գործունեության հետ:

Անհրաժեշտ է, ասալին հերթին, կանգ առնել Միութեան ծխախոտագործարանի վրա: Վերջինիս առաջացումը նշանակալի չափով կապված էր սեփական ծխախոտի մշակույթի ծավալման հետ: Այդ գործարանը գոյություն ուներ 1921 թվից և մի կոմբինացիոն ձեռնարկություն էր, վորի մեջ Միութեանը պատկանում էր ընկերության կապիտալի կեսը: Գործարանի ամբողջ արտադրողականությունը, 1921 թվի սեպտեմբեր 15-ից մինչև 1922 թվի մարտի 31-ը, հավասար էր 3.156.680 հատ գլանակի և 3463 Փ. ծխախոտի: Իսկ գործարանի ընդհանուր յեկամուտն այդ ժամանակամիջոցում հավասար էր 9.239 ուլբլու:

Գյուղատնտեսության ոժանդակ ձեռնարկությունների շարքը պետք է դասել նույնպես և Միութեան թեյի-սուրճի գործարանը, վոր գտնվում էր Ղարաբլիխայում: Այդ ձեռնարկությունը ևս կոմբինացիոն էր. նա պտուղների թեյ և կաղնու սուրճ էր պատրաստում՝ թե մեկի և թե մյուսի համար առատ ու եժան հում նյութ գտնելով շրջակայքի անտառներում:

Միութեան գյուղատնտեսական գործունեության հետ անմիջական կապ ունեցող ձեռնարկություններին էր պատկանում և յերկրագործական գործիքների գործարանը, վոր 1922 թվին ստեղծվեց «Շահալիում»:

Վորպեսզի Միութեան արդյունաբերական ձեռնարկների թվարկումն ավարտենք, մնում է, վոր մի յերկու խոսք էլ ասվի ոճառի գործարանի մասին:

Գործարանը հիմնված է 1920 թվին: 1920 թվի ընթացքում նրա արտադրողականությունը հավասարվում էր 2.000 փուլի լավվորակ ոճառի: Իսկ ընդհանուր յեկամուտը մատնանշված ժամանակամիջոցում հավասար էր 30.000 ուլբլու: Սա Հայաստանի համարյա թե միակ ոճառի գործարանն էր:

Այս և կարճ թվարկումը Միութեան ձեռնարկությունների, վորոնց հետագա զարգացման ու կատարելագործման ուղղութեամբ ծախսվել է նրա եներգիտալի նշանակալի մասը: Թված այս բոլոր հիմնարկություններն էլ զարգացման վորոշ հեռանկարներ ունեյին: Բայց յեթև աճումը կրիտալի քայլերով էր կատարվում, ապա դրա պատճառն ազատ զբաղմունքների բացակայությունն էր—ինչպես Միութեան մեջ, այնպես էլ յերկրում: Բայց ինչքան էլ վարանստ լինեյին հայկական կոոպերացիայի ձեռնարկումներն արդյունաբերական գործունեության բնագավառում, այնուամենայնիվ, ա՛յն, ինչ վոր արվում էր այն ժամանակվա հայկական իրականության դժոխային պայմաններում, մխիթարի: Երմպողմն էր հանդիսանում այն պոտենցիալ ուժերի, վոր նա իր մեջ կրում էր:

VII.

Նախորդ ժամանակների կոոպերացիայի ընդհանուր բնույթագիրը: Ապրանձափոխանակութունը: 1922—23 թվականների շրջանը. «մեծ գործերի» ժամանակաշրջանից մնացած ժառանգութան լիկվիդացիան: Պետական ֆաղափականության շրջադարձը կոոպերացիայի նկատմամբ: Հայտի կազմակերպումը և՛ «Հայկոպի»,—վարպես ազգային կոոպերացիայի կենտրոնի—անմիջական խնդիրների հետ չկապված առևտրական բոլոր փունկցիաների հանձնումը Հայտին: Կազմակերպված անդամին բավարարելը՝ վորպես կոոպերացիայի անմիջական խնդիր: Ապարատների կրճատումը: Արդյունաբերական ֆաղափականության վերանայումը: Ցանցի վիճակը: Կոոպերացիայի իսկական պատմության սկիզբը:

* * *

1922—23 թիվը Հայաստանի կոոպերացիայի պատմության մեջ անկյունադարձային տարի յե հանդիսանում: Վերևում մենք տեսանք, վոր ուղղմական կոմմունիզմի շրջանում սպառողական կոոպերացիան դարձավ Պարթոզկոմատի բյուրոկրատական բաշխիչ ապարատը: Ճիշտն ասած՝ այդ ժամանակաշրջանում կոոպերացիան գոյություն չունեց: «Նոր տնտեսական քաղաքականության» անցնելուց հետո յե միայն, վոր նա ազատություն և անկախ գոյության հնարավորություն ստացավ: Կոոպերացիան դարձավ յերկրի տնտեսական կյանքի կենտրոն: Պարթոզկոմատը նրան հանձնեց գյուղի հետ ունեցած ապրանքափոխանակման իր բոլոր ֆունկցիաները: Արտաքին առևտուրը ևս, ինչպես մենք վերևում տեսանք, անցավ «Հայկոպին»: Այսպիսով կոոպերացիայի առաջ միանգամից դրվեցին մեծ խնդիրներ: Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով նա ձեռնարկեց այդ խնդիրների լուծմանը:

Տնտեսական նոր քաղաքականությունը նրան հանկարծակի յերեց: Ռազմական կոմմունիզմի շրջանից վոչինչ չեք մնացել՝

յացի կոոպերացիայի կենտրոնական ապարատից: Վերջինս վոչ մի սոցիալական բազա չունեց: Սկսվեց կոոպերացիան վերևից տնկելու մի տենդոտ աշխատանք, բայց առաջացող կոոպերատիվները միմիայն ապրանքափոխանակման սովորական խանութներ էյին: Ճիշտ և, ուղղմական կոմմունիզմի շրջանից դեռ ևս մընացել էր նաև բնակչության ստիպողական կոոպերացման սկզբունքը, բայց փաստորեն այդ ստիպողականությամբ բնակչության վոչ մի կոոպերացում էլ չեք ստացվում: «Հայկոպ»-ի արտաքին, արտասահմանյան ապարատն էլ սկսեց ընդարձակվել նույնպես արագ, ինչպես ընդարձակվել էր ներքին ապարատը: Իր պատմության այս շրջանում «Հայկոպ»-ն ըստ էյության ծավալվել էր վորպես մի խոշոր «առևտրական տուն»: Նրա առևտրական գործառքները կրում էյին առևտրական հիմնարկումներ (գրյունդերստվոի) բնույթ և շատ քիչ ընդհանուր բան ունեյին կոոպերացիայի իսկական խնդիրների հետ: Իսկ ինչ վերաբերվում է նրա «աշխատող ապարատին», ապա նա ընդարձակվել էր ուղարձել բյուրոկրատական ինքնարավ մի հսկայական պարբ: Բավական է մատնանչել, վոր «կոոպերատիվ» աստիճանավորների բանակն այդ շրջանում կազմված էր 350 մարդուց՝ հենց միայն կենտրոնական ապարատում:

Այսպիսով՝ յեթե հայկական կոոպերացիայի պատմության նախորդ շրջանը կարելի յե բնորոշել վորպես կոմմերցիոնալիստական, ապա 1922—23 թվականները պետք է դիտել վորպես անցյալի ծանր ժառանգության լիկվիդացիայի շրջան, վորի շնորհիվ աստիճանաբար, բայց ճշտորեն պետք է անցում կատարվեր դեպի իսկական կոոպերատիվ աշխատանքի իսկական ուղիները:

Այդ նկատի առնելու դեպքում՝ 1922 թիվը հայկական կոոպերացիայի համար դառնում է լիկվիդացիոն տարեթիվ: Իսկապես ասած՝ վո՞րն էր կոոպերացիայի համար, վերջին հաշիվով, առողջարար այդ պրոցեսսի անմիջական խթանը: Խթանը պետության վորոշ «հեռացումն» էր կոոպերացիայից:

Ամենից առաջ կոոպերացիայից յերես դարձրեց «Պարթոզկոմատը»: Այդ «հեռացումը» պատճառաբանվում էր նրանով, վոր կոոպերացիան ապրանքափոխանակային գործառքներում ցուցադրեց իր անկարողությունը:

Վերևում մենք ասացինք, վոր 1921 թվին Պարթոզկոմատը «Հայկոպ»-ին հանձնեց իր մրցող ապրանքափոխանակության

Փոնդը: Հետաքրքիր է հիշել, թե ինչից է նշ ապրանքներից երբադկացած այդ Փոնդը: Ահա նրանց թվարկումը.

	Ք Ա Ն Ա Կ Ը	Ա Ր Ժ Ե Ք Ը
Մանուֆակտուրա	20 000 արշին	55 000 ո.
Աղ	11 000 փութ	4 025 ո.
Մանգաղներ և գերանգրներ	4 000 նաս	2 000 ո.
Ոճառ	340 փութ	1 500 ո.
Ծխախոտ, կոճակներ, թուղթ,		
Ասեղ, և այլ անպետք ապրանքներ	—	9 411 ո.
Ընդամենը		72 466 ո.

Ահա այդ ամբողջ ապրանքա-փոխանակային Փոնդը: Այս թրվերը պարզաբանելու համար պետք է ավելացնել, զոր «Հայկոոպ»-ի ստացած մանուֆակտուրայի 55%-ը գյուղի պահանջներին միանգամայն անհամապատասխան էր (բառիստ, աժուր, կրետոն և այլն): Նույնը պետք է ասել և գերանգրների ու մանգաղների վերաբերյալ, զոր իրենց չափսով համապատասխան չէին հայ գյուղի պետքերին: Մնացած անպետք ապրանքների մասին խոսելու կարիք էլ չկա: Ամբողջ այս բարիքը գանազան ժամանակներում ուղարկվել է «Հայկոոպ»-ի գյուղական խանութները:

Այսպիսով՝ յեթե մի կողմ ձգենք այս դժվարաչարժ կամ մինչև իսկ բոլորովին անպետք ապրանքների քանակը, ապա ապրանքա-փոխանակման Փոնդից իրացման համար պիտանի ապրանքները կկազմեն 32,295 ուրբու, կամ ստացած ամբողջ ապրանքային Փոնդի 45%-ը: Այդ գումարի հանդեպ «Հայկոոպ»-ը Պարժողկոտին ավելց 32,994 ուրբու պարենավորման միջերքներ, կամ, 639 ուրբով ավելի, քան նրանից ընդունել էր՝ իբր իրացման համար պիտանի ապրանքներ: Ինչ վերաբերվում է մնացած անպետք ապրանքներին, ապա նրանց աննշան մասը Պարժողկոմառը հետ վերցրեց, իսկ չընդունված մասայի մնացած արժեքը ևս հետագայում հատուցեց «Հայկոոպ»-ին:

Ըստ Եյության, ճիշտն ասած, դա վոչ թե «ապրանքա-փոխանակության», այլ «ապրանքա-խարեյության» մի պրոցես էր, զորի վերջնական հետևանքով կոոպերացիան կանգնեց կոտրած տաշտակի առաջ:

Բայց, այդու ամենայնիվ, կոոպերացիան հայտարարվեց մտտ «կոնտրագենտ», զորից Պարժողկոմատն արդեն աշխատեց ապա-

տադրվել: Պետությունն անցավ իր սեփական առևտրական ապարատները կազմակերպելու աշխատանքին: 1922 թվի յերկրորդ կիսին Հայաստանի Տնտիսորհը հաստատեց «Հայառ»-ի կանոնադրությունը: Նոր կազմակերպությունն իրեն առաջադրեց «հանրապետության միջերքների իրացման» և «առևտրի բոլոր տեսակները կազմակերպելու» խնդիրը: «Հայկոոպ»-ի կողքին այս ձևով առաջացավ տնտեսական մի նոր կազմակերպություն, զոր՝ հենց սկիզբից չըջանառության պատկառելի գրամագլուխ ստանալով, աստիճանաբար սկսեց լայնորեն ընդարձակել իր վոչ միայն արտաքին, այլ և ներքին մեծածախս-մանրածախս առևտրի ապարատները: Սակզժվեց պետական ու կոոպերատիվ առևտուրների գուհահեռականություն:

Կոոպերացիան հետին պլանն անցավ: Պետական գանազան մարմինների հանձնարարությամբ նախորդ չըջանում կոոպերացիայի կողմից տարածվող առևտրական բոլոր Փոնդիցիաները տրվեցին «Հայառ»-ին:

Ըստ Եյության սա մի ասողը դարձ էր: Կոոպերացիան մինչ այդ շատ էր զբաղվում նրանով, ինչ նրա անմիջական խնդիրների չըջանակը չէր մտնում և քիչ ժամանակ էր տրամադրում այն բանին, զորը նրա ուղղակի պարտականությունն էր: Սակայն այս դարձրտեղի ունեցավ նույնքան խիստ կերպով, զորքան նախորդ դարձերը: Դրա հետևանքով այս հարցը ևս կրկին սուր ճգնաժամի բնույթընդունեց:

Առևտրական գրյունդերության չըջանից մնացին թանդ արժեցող մեծ ապարատներ և կազմակերպչա-տնտեսական թույլ կապ՝ բանվորա-գյուղացիական մասսաների հետ: Դրա հետևանքով՝ ամբողջ հասակով մեկ կանգնեց հետեյալ ստիպողական պահանջը. նախ՝ առավելագույն չափերով պարզացնել ու եժանացնել նրա արդյունավետությունը և նոր խնդիրներին համապատասխան կերպով վորակապես նորոգել ու թարմացնել կոոպերացիան, և, վերջապես՝ յերրորդ՝ նրա տակ ստեղծել բանվորա-գյուղացիական կազմակերպված սպասողների սոցիալ-տնտեսական ամուր ու պատկառելի բազա: Ահա այն ուղիները, զոր 1922-23 թվականներին ընդգժվել սկսեցին Հայաստանի սպասողական կոոպերացիայի համար:

Նշանակված նոր խնդիրների համապատասխան, արտաքին բազմաթիվ գրասենյակներն րսկսեցին լուծարքի յենթարկվել և

տրվել «Հայաստան», վոր քայլ առ քայլ սկսեց գրավել «Հայկոսպի» թողած առևտրական կետերը: Նույն պրոցեսսն ըսկսվեց և յերկրի ներսում:

Հանրապետութեան զանազան կետերում «Հայկոսպի» կողմից բացած առևտրական բազաները, վոր գլխավորապես պետական առևտրա-փոխանակութեանն էյին ծառայում, սկսեցին կծկվել ու լուծարքի յենթարկվել: Իսկ նրանց ապրանքային մնացորդները տրվեցին տեղական սպառողական ընկերութեաններին: Այսպես, սրինակ՝

Յերեվանի սպառ. ընկեր. ստանում է զագան ապրանք.	2 572 ո.
Ղարաքիլիսի » » » » » »	3 279 »
Ալեքսանդրպոլի » » » » » »	2 788 »
Եջմիածնի » » » » » »	548 »
Նոր-Բայազետի » » » » » »	4 191 »
Մեղրու » » » » » »	3 236 »
Իրիջանի » » » » » »	3 487 «

Ընդամենը 20 209 ո.

Ապրանքային այս վոչ մեծ Փոնդերը, վոր տրվեցին ամենից ավելի կենսունակ սպառողական ընկերութեաններին, դարձան այն նյութական բազան, վորի վրա հաջորդ, 1923-24 թվականներին այդ ընկերութեանները փոքր առ փոքր սկսեցին ծավալել այդ ժամանակի համար բնորոշ իրենց կենդանացած աշխատանքը:

Լուրջ բեկում կրեց նաև «Հայկոսպի» բանող ապագարատը: Վերևում մենք ասացինք, վոր 1921 թվին այդ ապագարատում կար 350 մարդ, : Զանազան տեսակ աստիճանավորների մակարուծական մի հսկա բանակ էր այդ: Տնտեսապես վոչ հզոր ազգային կոոպերացիայի որդանիզմից վերահաստմամբ պետք է հեռացվեր նրա այդ այլանդակորեն ուռած անդամը:

Այդ անդամահատութեան հիվանդոտ պրոցեսսների հետևանքով՝ 1923 թվին «Հայկոսպի» ծառայողների թիվը հասցվեց 88 մարդու, վոր էյին՝

Ծառայողն. թիվը՝

1. Վարչութեան	3
2. Ընդհանուր բաժին	8
3. Հաշվապահութեան	8
4. Բժշկական բաժին	2

Պատասխանի թիվ՝

5. Պահեստներ	4
6. Կազմահրահանգչական բ.	4
7. Ոճառի գործարան	7
8. Ծխախոտի պլանտացիա	25
9. Խաղողի այգի	4
10. Փոխադրական միջոցներ	23

Ընդամենը 88

Ութսուն և ութ մարդ՝ 350 ծառայողները բանակից: Ի հարկե, առ մի խոշոր քայլ էր՝ «Հայկոսպի» «բանող ապագարատն» եժանացնելու տեսակետից: Իրա հետ միասին, կարուկ միջոցներ էյին՝ ձեռք առնված՝ մնացող աշխատակիցները վորակը բարձրացնելու համար: Ապագարատի եժանացման այս պրոցեսսը կանգ չառավ դրա վրա և անցավ դեպի 1923 թիվը: Այդ տարվա առաջին կիսամյակում ծառայողների թվական կազմի հետևյալ շարժումը կատարվեց՝

Հունվարին	88 ծառայող
Փետրվարին	62 »
Մարտին	60 »
Ապրիլին	60 »
Մայիսին	51 »
Հունիսին	50 »

Սա արդեն «Հայկոսպի» բանող ապագարատի թվական կրճատման կուլմինացիոն կետն էր, վորից հետո արդեն պետք է ըսկսել մի ուրիշ շրջան, — աշխատանքի դիտական կազմակերպման շրջանը:

Արմատական վերանայման յենթարկվեց նաև «Հայկոսպի» արդյունաբերական քաղաքականութեանը: Առևտրական գրյունդերութեան իր տենդոտ ժամանակամիջոցում «Հայկոսպի» ծածկվել էր մի շարք արդյունաբերական ձեռնարկներով, վոր էյին՝ մեխանիքական գործարանը, ստաղձագործարանը, սուրճ խանձելու, յուցկու գործարանը և այլն: Այդ ձեռնարկութեանները կազմակերպվում էյին առանց «միութեան» Ֆինանսական ուսյալ հնարավորութեան հաշվառման և առանց զարգացման հետագա հեռանկարների: Յե՛վ այս հասկանալի յե, վորովհետև տնտեսական հաշվի խիստ սկզբունք չեր կարող յինել այնտեղ, վորտեղ ամեն ինչ վառ-

վում էր «մեծ գործերի» ծառայով : Իսկ յերբ վրա հասան վերևում նկարագրված ճգնաժամը և «մեծ գործերի» արբեցումից սթափվելու շրջանը, այդ ժամանակ ակնհայտ դարձավ, Վոր արդյունարևրական քաղաքականութունը պետք էր թեքել, համաձայնեցնելով այն կոոպերացիայի համեստ ֆինանսների և տնտեսական նպասակահարմարության սկզբունքի հետ : Այդ ժամանակ լուծարքի յեթաթարկվեցին ալելորդ և միմիայն քայքայման աղբյուրը հանդիսացող բոլոր ձեռնարկությունները : Պահվեցին միմիայն ոճառի և ծխախոտի գործարանները :

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսական բաժնին և այդ բաժնի ձեռնարկություններին, ապա 1922-23 թվին այդ ապարիլում վոչ մի փոփոխություն չմտցվեց և հաջորդ 1923-24 թվին միայն ծխախոտի պլանտացիան հանձնվեց «Հայկոոպի» նախաձեռնությամբ կազմակերպված ծխախոտագործ մանր-պլանտատորներին արտելին : Այս քայլով, կարծես թե, ավարտվեց «Հայկոոպի» գյուղատնտեսական գործունեության շրջանը : Հետագայում վաճառվեց և ցուցադրական այգին :

Ճիշտն ասած ահա հենց այս լուծարքային պրոցեսներով պետք է բնորոշել «Հայկոոպի» 1922-1923 թվականների կյանքը : Կոոպերատիվ ցանցի տնտեսական առողջացումն ու կազմակերպչական ամրապնդումը պետք է դատնային հաջորդ, 1923-24 թվականների հիմնական խնդիրը :

Ինչ վերաբերվում է այդ ցանցին, ապա՝ նրա վիճակն աննախանձելի էր : Նախորդ տարվա 150 սպառողական ընկերությունների փոխարեն մնացել էին միայն 62-ը, վոր բոտ շրջանների բաժանված էլին հետևյալ կերպ .

Սպ. ընկ. թիվը

1. Յնրեվանի գավառում	7
2. Ալեքսանդրապոլի »	5
3. Լոռի-Փամբակի »	22
4. Նոր-Բայազետի »	7
5. Եջմիածնի »	10
6. Իջևանի »	6

Այս ընկերություններն իրենց խղճուկ գոյությունը հաղիվ էլին պահում : Չունենին միջոցները «Անդամները» գեպի գործը հանդես էլին բերում անտարբերություն : Բացակայում էր նրանց ինքնագործունեությունն ու անկոտրելությունը : Իսկ «Հայկոոպի»

գրադված լինելով իր վերքերի բուժմամբ, իր սպալարատների լուծարքով ու ցրված միջոցները համախմբելով՝ փաստորեն չէր կարողանում գրադվել իր ցանցի կազմակերպման ու ամրապնդման գործով : Սրանով է վերջանում 1922-23 թվի ժամանակաշրջանը :

* * *

Հայաստանի սպառողական կոոպերացիայի զարգացման այս նախորդ ակնարկն համոզեցուցիչ կերպով խոսում է այն մասին, թե այդ կոոպերացիայի բողոքն ինչքան փոփոխական ու անհաջող է յեղել նրա վոչ յերկար պատմության ընթացքում :

Այստեղ չկար առաջացող բջիջների նորմալ որդանական աճում, ամբություն ու կայունություն : Շարժումը տեղի յեր ունենում թոխչքներով, վորոնց ընթացքում շացուցիչ աճման շրջանին յերբեմն հաջորդում էր համարյա լիակատար անկում, ջլատում և մինչև իսկ նախորդ զարգացմամբ ստեղծված բոլոր արժեքների վոչնչացում : Կոոպերատիվ սաղմերը կարծես թե բերովի բնույթ էլին կրում և ժողովրդական մասսայի մեջ ամուր արմատներ չունեյին : Այդ մասսան դեռ չէր գիտակցում կոոպերացիայի դերը, դեռ չէր զգում, վոր կոոպերացիան նրա սեփական գործն է, այն կազմակերպությունն է, վորի տերը վոչ այլ վոք է, քան ինքը : Նա չարունակ սպառողական կոոպերացիայի վրա նայում էր դրսից, վորպես դիտող, և դեպի կոոպերացիան վերաբերվում էր վորպես մի պատիվ քաղքենի : Սրա հետևանքով առաջանում էր ինչ վոր տարրինակ դուալիզմ, վոր թափանցում էր սպառողական կոոպերացիայի վողջ սխտեմի մեջ՝ նրա պատմության համարյա ամբողջ ընթացքում :

«Բյուրոկրատական դլավիզմը», բարձր վերադիր ծախքերը սպարանքների անհամապատասխան ասորտիմենը, սպալարատների անչարժությունն ու թույլ ձկունությունը—այս ամենը սպառողական կոոպերացիայի վերևում մատնանչած՝ ընդհանուր և հիմնական հիվանդության անխուսափելի ու հիվանդոտ արտահայտությունն էր : Հասարակական-քաղաքական կատաստրոֆաների և սպառողական կոոպերացիայի շացուցիչ աճման այդ փոթորիտ ժամանակաշրջանում այդ հիվանդությունը ծածուկ էր և դժվար էր այն նկատելը : Բայց հենց վոր հեղափոխական տարերքներն ըսկսեցին խաղաղվել և կյանքը մտավ որդանակայն շինարարության նորմալ ափերի մեջ, այդ ժամանակ բոլորի համար արդեն պարզ յեզավ այն կործանիչ հսկայական պրոցեսսը, վոր կատարվել էր սպառողական կոոպերացիայի որդանիզմի մեջ :

Այդ պատճառով՝ զարմանալի չէ, յետե՛ր յերկրորդ, այսինքն, «ՆԵՊ»-ի պլանային շրջանում և հատկապես, կամավոր անդամագրմանն անցնելուց հետո, մենք կանգնեցինք սպառնալից քայլի վերին սպառնալից կազմայուժման ու կիսափթման փաստի առաջ, յերբ այդ սպառնալիցը չունեյին սպառնողական կոտորացիա, այսինքն՝ չունեյին «կազմակերպված սպառնող»:

Սա տրամաբանական ու պատմական անխուսափելի պսակն էր նախորդ զարգացման ամբողջ ընթացքի: Ծարժումը պետք է ըսկավեր նորից և նոր ձևով: Հայաստանի սպառնողական կոտորացիայի պատմութեան մեջ առաջին անգամն էր, վոր ստեղծվում էյին սպառնողացիայի նորմալ, որդանական աճումի պայմաններ: Նույնպես առաջին անգամն էր, վոր լրջորեն, գործնական ու գործունյա կերպով հարց էր դրվում՝ ստեղծել այնպիսի մի կոտորացիա, վորին «իսկապես մասնակցեյին բնակչութեան իսկական մասսաները» (Լենին): Վորովհետև այդպիսի կոտորացիայի միջոցով է միայն, վոր մենք կկարողանանք հասնել սոցիալիզմին:

Հետագա 1923-24 թվականները և հատկապես վերջին տարվա առաջին կեսը, Հայաստանի սպառնողացիայի շարժման պատմութեան մեջ արդեն բացեցին մի նոր դուռը—նրա աճման ու տրտեսա-կազմակերպչական ամբապնդման մի շրջան: Ծիշտն ասած՝ հենց այդտեղից էր, վոր ըսկավեց իսկական կոտորացիայի իսկական պատմութեանը, իսկ նրա նախորդ ամբողջ շրջանը պետք է դիտել վորպես նրա նախերգանքի շրջան:

VIII.

Զարգացման նոր շրջանը: Հայաստանի ժողովրդական Տնտեսութեան վերելքը: Կամավոր անդամութեան որեմքը: Իսկական կոտորացիայի իսկական անուժը: Քաղաքային կոտորացիան—«Բանկոտայր»: «Հայաստանի կոտորատիվների միութեանը»: Զարգացման հեռանկարները:

* * *

Հայաստանի սպառնողական կոտորացիան զարգացման նոր շրջան մտավ Հայաստանի ժողովրդական տնտեսութեան վերածնութեան պայմաններում: Մենք վերեում արդեն մատնանչեցինք, վոր իմպերիալիստական պատերազմի և «Ազգային փոթորիկների ու կրքերի» ժամանակամիջոցում կատաստրոֆիկ կերպով ընկան նրա արտադրողական ուժերը: «Սորհրդայնացումը» և «նոր տնտեսական քաղաքականութեանն» անցնելը Հայաստանի տնտեսական զարգացման մի փոթորկոտ շրջան բացեցին: Ահա այդ աճման մի քանի բնորոշ հայտարարները: Այսպես որինակ՝ գյուղատնտեսական զանազան մշակույթների ամբողջ ցանքսի տարածութեանը, ամբողջ Հայաստանում, կազմում էր՝

1914 թ.	268 651	դեոյատին
1919 թ.	75 714	»
1922 թ.	83 209	»
1923 թ.	194 969	»
1924 թ.	248 662	»
1925 թ.	251 096	»

Անասունների ընդհանուր թիվը կազմում էր,

1914 թ.	2 364 733	գլուխ
1919 թ.	747 643	»
1922 թ.	796 670	»
1923 թ.	1 139 820	»
1924 թ.	1 348 367	»
1925 թ.	1 896 386	»

1925 թվին ցանքերի ամբողջ տարածությունն արդեն կազմում էր նախապատերազմյան մակարդակի 90%-ը: Նոր վերականգնման պրոցեսս էր նկատվում և անասնապահությունն աստիճանաբար, 25 թվին խոշոր յեղջյուրավոր անասունները կազմում էին նրանց նախապատ. քանակի համեմատությամբ 94%, իսկ մանր յեղջյուրավորները՝ 74%: Իսկ անասունների ընդհանուր քանակը կազմում էր նրանց նախապատերազմյան թվի 80%-ը:

Հայաստանի գյուղատնտեսությունից արտադրանքի ընդհանուր արժեքը կազմում էր (նախապատերազմյան ուղղությունով).

Պատերազմից առաջ	44 000 000 ու.
1923—24 թվին	28 300 000 »
1924—25 »	30 500 000 »
1925—26 »	33 900 000 »

Յեթև նախապատերազմյան արտադրությունից արժեքը վերցնենք վորպես 100%, ապա համապատասխան տարիներում մենք կունենանք հետևյալ հարաբերական %-ը. 24,0, 60,1, 71,5: Այսպիսով՝ 1925—26 թվին գյուղատնտեսությունից արտադրանքի արժեքը նրա մինչպատերազմյան նորմայի 3/4-ից մի քիչ էր պակաս:

Անհամեմատ ավելի արագ էր ընթանում խոշոր արգյունարեյրական ինդուստրիայի վերականգնման տեմպը:

Մենք վերևում արդեն ցույց տվինք, վոր Հայաստանը գերադանդապես ազրարային յերկիր է: Նրա ժողովրդական տնտեսությունից մինչպատերազմյան արտադրանքի ընդհանուր արժեքից, 65.40 միլիոն մինչպատերազմյան ուղղությոց խոշոր արգյունարեյրությունն ընկնում էր միմիայն 10,0 միլլ. մինչպատ. ուղղվի: այսինքն՝ 15-ից ավելի պակաս: 1923—24 թվականներին խոշոր արգյունարեյրությունից արտադրանքը կատաստրոֆիկ կերպով ընկավ մինչև 2,4 միլլ. ուղղվի: 1924—25 թվին նա արդեն կազմում էր 6,0 միլլիոն ո., իսկ 1925—26 թվին 7,2 միլլ. ո.: Այլ կերպ ասած՝ յեթև 1913 թվի արտադրությունը վերցնենք իբր 100, ապա 1923—24-ին մենք կունենանք խոշոր արգյունարեյրությունից մինչպատերազմյան արտադրության մակարդակի 24%-ը, 1924—25-ին—60,1%-ը, և 1925—26-ին 71,5%-ը: Գյուղատնտեսության և արգյունարեյրությունից ամամը համապատասխան կերպով աճում էր և յերկրի ապրանքաշրջանառությունը: 1923—24 թվին Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառությունը հավասար էր չերվոն ուղղվիներով 31.000.000 ուղղությոց, 1924—25 թվին՝ 51.4 միլլ. ո.,

1925—26 թվին՝ 74,0 միլլ. ո.: Իրենց նախորդ տարիներին համեմատությամբ այդ աճումը հավասար էր—1924—25 թվին՝ 166%-ի, իսկ 1925—26 թվին՝ 114%-ի:

Այսպիսով Հայաստանի ժողովրդական տնտեսությունը մտավ իր զարգացման վերելքի շրջանը: Անկասկած՝ տնտեսական—վերականգնումի այդ պրոցեսսի ելական պայմաններից մեկը հանդիսացավ և գրամական ռեֆորմը: Ի հարկե, մինչպատերազմյան տնտեսական նորմերը «իդեալ» չէին, այլ միմիայն յելակետ՝ լուծելու համար այն նոր, ավելի բարդ և անհամեմատ ավելի բարձր խնդիրները, վոր կանգնած են սոցիալիստական իշխանությունից առաջ:


Տնտեսական վերածնությունից վերոհիշյալ պրոցեսսների շնորհիվ ստեղծվեց այն բարենպաստ պայմանը, վորի միջոցով նոր կոսպերացիայի սերմերը արագ և առատ ծիրեր արձակեցին:



Կոսպերատիվ վերածնությունից ամենակարևոր մյուս պայմանը «Կամավոր անդամություն» վերաբերվող որենքն էր:

«Կամավոր անդամություն» վերաբերվող որենքն յեկավ վորտես ռազմական կոմմունիզմի շրջանի խորհրդային կոսպերատիվ որենաբրությունը: Հակառակ «սոցիալիստական կոսպերացման սկզբունքին» վոր բնորոշ էր ռազմական կոմմունիզմի շրջանի համար, այդ նոր որենքն առաջ էր քաշում կամավորություն, այսինքն հասարակական—կոսպերատիվ նոր ձևերի ազատ ստեղծագործությունից սկզբունքը: Յեթև առաջին սկզբունքը բխում էր քաղաքացիական անողոք կովի պայմաններից, պարենավորման սուր ճգնաժամից, մասնավոր—առևտրական ապրարատների խորտակումից, այսինքն՝ վերջին հաշվով՝ քաղաքացիական կոիպների հուր ու ծիխի մեջ ձևավորվող բանվորա—գյուղացիական իշխանությունից հրամայական շահերից, ապա յերկրորդ սկզբունքն արգյունք էր հեղափոխությունից հաղթանակի և ժողովրդա—տնտեսական կյանքի որդանական խաղաղ շինարարությունից սկզբունքի ազդարարման—այդ կյանքում սոցիալիզմի հիմունքներն արմատացնելու միջոցով:

Խորհրդային հանրապետությունների ժողովրդական տնտեսությունից վերականգնումի ու նրա հետագա զարգացման նպատակով մանր—ապրանքարտադրող գյուղացիական տնտեսությունների հրակայական մասսայի տնտեսական տիրապետությունից պայմաններում, ներքին ապրանքաշրջանառությունը պետք է արվեր ազատություն:



Սա նշանակում էր մասնավոր առևտրական կապիտալի մասնակի վերակենդանացում: Իսկ մասնավոր շուկայի ապրանքային շրջանառության վերակենդանացող ու աստիճանաբար զարգացող տարրերի դեմ կռվելու համար պետք է բաց արձակվեյին սպառողական կոոպերացիայի ձևերը, պետք է ջարդվեյին նրա աճումին և ազատ շարժվելուն արգելք հանդիսացող «ստիպողականության» շղթաները: Այս ելին պահանջում պատմական զարգացման դիալեկտիկայի անողորմ որենքները:

Պետական իշխանությունն արդեն գտնվում էր բանվոր դասակարգի ձեռքում: Շահագործողների քաղաքական իշխանությունն արդեն տապալված էր և արտադրության բոլոր միջոցներն անցել էյին բանվոր դասակարգի ձեռքը: «Այժմ մենք իրավունք ունենք ստելու, —ասում էր Լենինը,—վոր կոոպերացիայի հասարակ զարգացումը մեզ համար համազոր է սոցիալիզմի զարգացմանը»: Բայց սոցիալիզմի աճումը կարող էր տեղի ունենալ միմիայն իբրև ազատ կոոպերացիայի, այսինքն, իբրև ժողովրդական լայն մասնաձևերի ակտիվ գործակցության արդյունք:

Դրդապատճառը իրական չեղավ: Սկսվեց կոոպերացիայի հին սպալարատների տենդոս վերակառուցման և այդ սպալարատները նեպի եկանոմիկայի նոր խնդիրներին ու փոփոխված պայմաններին հարմարեցնելու մի շրջան: Նրանց սարգացման, եթանացման ու առևտրական ոացիոնալիզացիայի պրոցեսներին զուգընթաց, տեղի յեր ունենում և մի ուրիշ պրոցեսս—վոր էր՝ բանվորների ու գյուղացիների ամեն տեսակ կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական բլիջների հասարակական բյուրեղացումն այդ սպալարատների շուրջը:

1924 թվի հունվար 1-ին Հայաստանի սպառողական ընկերությունների ընդհանուր թիվը կազմում էր 43, վորոնցից 33-ն ընկնում էր գյուղին, իսկ 10-ը՝ Հայաստանի փոքրաքանակ քաղաքներին: Իսկ տարվա վերջին արդեն մենք ունեյինք 67 սպառողական ընկերություններ—56-ը գյուղական և 11-ը քաղաքային:

Այսպիսով՝ 1924 թվի հունվար 1-ից մինչև հոկտեմբեր 1-ը սպառողական ընկերությունների թիվն ավելացել էր 14%-ով: Իսկ բնակչության կոոպերացման աստիճանի տեսակետից մենք ունեյինք հետևյալ պատկերը:

Կոոպերատիվների տարածման շրջանները	Կոոպերատիվների քանակը	1-ին հունվարի		Առ 1-ին հոկտեմբերի	
		Կոոպերատիվների քանակը	Մարտի 1-ին հոկտեմբերի	Կոոպերատիվների քանակը	Մարտի 1-ին հոկտեմբերի
Ամբողջ Հայաստանում	170,431	7,679	4,5	24,057	14,1
Այդ հաշվում					
Յերեվանում	7,151	1,229	17,2	8,893	54,4
Լենինականում	7,000	386	5,5	1,981	23,3
Պավաներում	156,280	6,064	3,9	18,183	11,6

Ի՞նչ ենք տեսնում: 1924 թվի հունվար 1-ին սպառողական կոոպերացիայի ամբողջ ցանցում կային 7,679 կազմակերպված անդամներ, վոր տնտեսաեսությունների ընդհանուր թվի 4,5%-ն էլին կազմում: Ըստ վորում՝ բնակչության կոոպերացման ամենամեծ տոկոսն ընկնում էր քաղաքներին: Յերեվանում 17,2% (բանվորներ ու ծառայողներ), Լենինականում 5,5%, և վերջին տեղը զբաղում էլին գյուղաշատ գավառները, վոր տալիս են տնտեսաեսությունների ընդհանուր թվի 3,9%-ի կոոպերացում:

Տարեվերջում մենք ունեյինք բավական խիստ կերպով վտիված մի պատկեր. կազմակերպված անդամների ընդհանուր թվին արդեն կազում էր 24,057 մարդ, կամ անատնտեսությունների ընդհանուր թվի 14,1%-ը: Այսպիսով՝ հոկտեմբեր 1-ին բնակչության կոոպերացման աստիճանը՝ համեմատած 1924 թվի հունվար 1-ի հետ՝ յերևան էր հանում 313,2%-ի աճում: Ըստ վորում՝ քաղաքներում (Յերեվանում և Լենինականում) մենք ունեյինք 54,4 և 23,2% կոոպերացում, իսկ գյուղաշատ գավառներում՝ տնտեսաեսությունների ընդհանուր թվի 11,6%-ը:

Այդ տվյալներն անկասկած վկայում էլին Հայաստանի սպառողական կոոպերացիայի տեսակարար կշռի աճման մասին, վորով սպառողական կոոպերացիան 1924 թվի վերջերին Հայաստանում դառնում էր յերկրի անտեսական կյանքի նշանակալից ազդակ:

Հաջորդ 1925-1926 թվականները սպառողական կոոպերացիայի հետագա առաջընթաց զարգացման շրջանն էլին: Սպառողական ընկերությունների ընդհանուր թիվը, վոր 1925 թ. հոկտեմբեր մեկին 68 էր, 1926 թվի հոկտեմբեր 1-ին ավելացավ մինչև 81, կամ 19%-ով: Ընկերությունների այս քանակից 69-ը գյուղական էլին, իսկ 12-ը քաղաքային: Ամենից ավելի ուժգին աճում էր ցույց տվել

գյուղական կոոպերացիան (21%): Համապատասխան կերպով աճել էր նաև խանութների ցանցը. 1925 թվի հոկտեմբեր 1-ին խանութների ընդհանուր թիվը հասնում էր 276-ի, վորոնցից 176 գյուղական էլին: 1926 թվի հոկտ. 1-ին խանութների թիվն արդեն հավասար էր 309-ի, վորոնցից գյուղական էլին 201-ը: Մի տարվա ընթացքում խանութների ցանցն ավելացել էր 12,9%-ով:

Յուրաքանչյուր սպառողական ընկերությանն ընկնում էր.

1925 թվի հոկտեմբերի 1-ին	4,06	խանութ
1926 » հունվարի 1-ին	4,14	»
1926 » ապրիլ 1-ին	4,00	»
1926 » հոկտեմբերի 1-ին	3,81	»

Տեսնում ենք, վոր Հայաստանի սպառողական կոոպերացիան զարգանում էր միախանութների ուղղությամբ. դա բացատրվում է նրանով, վոր գյուղական բնակչությունը բավական ցրված էր և գյուղում թագավորում էր առանձնականության վուգին: Կոոպերացված բնակչության քանակն էր 1925 թվի հոկտ. 1-ին 45.903, կամ հանրապետության տնտեսությունների ընդհանուր քանակի 25,8%-ը. 1926 թվի հոկտեմբեր 1-ին՝ 65.750, կամ տնտեսությունների ընդհանուր քանակի 37,0%-ը: Պատկերն ավելի հետաքրքիր է ըստ առանձին գավառների. կոոպերացված էլին.

Դիլիջանի և Յերեվանի գավառում անտ. 53,1%, Զանգեզուրի գավառում անտ. 42,9%, Մեղրու գավառում անտ. 41,6% և այլն. Միջին թիվով յուրաքանչյուր ընկերությանն ընկնում էր.

Առ 1-ին հոկտեմբերի 1925 թ.	675	մարդ
» » » 1926 թ.	812	»
Ըստ սոցիալական կազմի՝		
Գյուղացիները	87,8%	
Բանվորները	4,3%	
Ծառայողները	7,4%	
Այլ արհեստի պատկանողներ	0,5%	

Այսպիսով՝ Հայաստանի սպառողական կոոպերացիան իր սոցիալական կազմով գերազանցապես գյուղացիական էր:

Այժմ դառնանք Հայաստանի սպառողական կոոպերացիայի Ֆինանսական վիճակի բնութագրմանը: Այդ կոոպերացիայի սեփական կապիտալները 1925 թվի հոկտեմբերի 1-ին կազմում էլին 528.680 ուրլի, իսկ 1926 թ. հոկտեմբերի 1-ին՝ 930.688 ուրլի: Այդ զբրածագլուխները մեկ տարվա ընթացքում ավելացել էլին 76%-ով: Փոխառու միջոցներն էլին, 1925 թվի հոկտեմբեր 1-ին 1.411.035

ուսրբի, իսկ 1926 թվի հոկտեմբերի 1-ին 1-688-771 ուսուրբի, այսինքն՝ ավելացել էլին 19,6%-ով: Սեփական գրամագլուխները նշանակալի չափով ավելի արագ էլին աճել փոխառու գրամագլուխներից: Կոոպերացիան ավելի ու ավելի յեր սկսում աշխատել բրնակչությունից ստացած միջոցներով: Բնակչության ակտիվությունն ու ինքնագործությունը տարեց տարի ավելի յեր աճում: Այդ բանն ամենից ավելի լավ կարելի յեր դիտել փայտագրամագլխի աճման մեջ. 1925 թվի հոկտեմբեր 1-ին փայտագրամագլխի ամբողջ գումարն էր 136.854 ու., իսկ 1926 թվի հոկտեմբեր 1-ին՝ 235.266 ու., այսինքն՝ փայտագրամագլուխը մեկ տարում ավելացել էր 71,9%-ով: 1925 թվին միջին փայտ կազմում էր 2 ու. 98 կ., իսկ 1926 թվին՝ 3 ու. 58 կ.:

Բնականարար աճեցին նաև անտառական շրջանառությունները: 1924—25 թվին նրանք հասնում էլին 8-612-000 ուսուրբու, մինչդեռ՝ 1925—26 թվին հասան 13.564.000 ուսուրբու, այսինքն՝ ավելացան 57,7%-ով: Այդ շրջանառություններից գյուղին ընկնում էր միայն 5.547-000 ուսուրբի, կամ 40,9%-ը, այսինքն՝ կեսից պակասը. 2.426-000 ուսուրբին, կամ՝ 17,9%-ն ընկնում էր գավառական քաղաքներին, իսկ 4.731-000 ուսուրբին, կամ 34,9%-ն ընկնում էր Հայաստանի մայրաքաղաք Յերեվանին և արդյունաբերական վերածնվող կենտրոն Լենինականին (Ալեքսանդրապոլ): Մենք այսպիսով տեսնում ենք սպառողական կոոպերացիայի անշեղ, որդանական աճումը: Այդ շարժումն ավելի ու ավելի խոր արձատներ էր ձգում Հայաստանի գյուղացիական սովոր մասսայի և դեռ նոր ստաջացող փոքրաթիվ պրոլետարիատի մեջ: Սպառողական կոոպերացիան դարձավ իսկական ժողովրդական մասսաների իսկական կազմակերպություն: Սոցիալական իր հիմնական դեմքով այդ կոոպերացիան գյուղացիական է: Յեվ այդ հասկանալի յե, վորովհետև ինքը Հայաստանն էլ իրենից ներկայացնում է միմիայն մի մեծ գյուղ:

Քաղաքային խոշոր կոոպերատիվներից ու շաղրությունն է գրբավում միայն Յերեվանի «բանկոոպը»: Անշափ բնորոշ է, վոր Հայաստանի ներկա մայրաքաղաքը կոոպերատիվ շարժմանը շատ ուշ է մասնակից դարձել: Առաջին կոոպերատիվ ընկերությունները, ինչպես մենք այդ տեսանք վերևում, գյուղումն էլին առաջացել: Յերեվանն արդյունաբերական կենտրոն չէր: Այդ իսկ պատ-



Պրոլետարիատի անկող պիտանուցիական կոոպերատիվի անդամները

ճառով այստեղ չկար այն հասարակական դասակարգը—վարձվող բանվորների դասակարգը—վորի շրջանում սպառողական կոոպերացիան դարգացման ամենաչափ հնարավորութունն ունի: Իսկ քաղաքի մանր-բուրժուազիան—արհեստավորներն, առևտրականները, պաշտոնեյությունը—խոր շահագրգիռութուն չունենք դեպի սպառողական կոոպերացիան: Առաջին սպառողական ընկերութուններն այստեղ ծագեցին պարենավորման ճգնաժամի սրման ժամանակ, յերբ նաև մանր-բուրժուազիան, ապրանքի հետեվից ընկնելով, մղվեց դեպի կոոպերացիան: 1917 թվին Յերեվանում արդեն գոյութուն ունեյին այդպիսի մանր-բուրժուական վեց սպառողական ընկերութուններ — «Экономия», «Надежда», «Самопомощь», «Пентах» և այլ: 1918 թվին նրանք 24-ն եյին: 1920 թվին, դեպի Յերեվանի շուկան յեկող ապրանքների հոսանքի դադարման հետևանքով, այդ ընկերութուններից շատերն ոճառի բշտիկների պես պալթեցին և նրանցից մընացին միմիայն 8 ընկերութուններ, վորոնք քաղ եյին տալիս իրենց խզճուկ գոյութունը: Այդ ընկերութունների միջև տեղի ունեց անողոք մրցում: Նրանց միացման հաճախակի փորձերը փոչ մի գրական արդյունքի չեյին հասցնում, վորովհետև նրանց մեջ թագավորում էր առանձնականության վագին և կոլեկտիվ ընդհանուր գործունեյության մասնակցելու անընդունակութունը: Հայաստանի «խորհրդայնացումն» էր միայն, վոր վերջ ավեց այդ ընկերութունների անջատ գոյությանը: Իրար դեմ մրցող մի քանի կոոպերատիվների փոխարեն ստեղծվեց մեկ բազմախանութ կոոպերատիվ: 1926 թվի հոկտեմբեր 1-ին նա միացնում էր 8,003 անդամների: Իսկ նրա առևտրական կետերը 19-ն եյին: Կոոպերատիվի միջոցների ընդհանուր գումարը հավասար էր 737,000 ուրբու, վորից 114,000 ուրբին սեփական միջոցներ էյին, իսկ 623,000 ուրբին՝ փոխառված: Նրա առևտրական շրջանառությունը 1925—26 թվին կազմում էր 3,306,000 ուրբի: Ընկերութունն ունի հինգ ճաշարան, մեխանիքական փուս և որինակելի կոոպերատիվ կազմակերպութուններից մեկն է:


* * *

Սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմի տնտեսական ու գաղափարական-կազմակերպչական կենտրոն է հանդիսանում «Հայաստանի Կոոպերատիվների Միութունը»: Սպառողական

կոոպերացիայի ամբողջման ու տնտեսական անողջացման հետ միասին այժմ աճել, ամբացել և առողջ աճման ուղի է յեղել նաև նրա «կենտրոնը»: Յեթե 1924—25 թվին նրա առևտրական շրջանառությունը կազմում էր 3,183,000 ուրբի, ապա 1925—26 տարում նա արդեն կազմում էր 6,698,000 ուրբի: Մեկ տարվա ընթացքում միության առևտրական շրջանառությունն աճել էր 110,3%-ով: Պահեստների միջոցով անցել էր ամբողջ ապրանքի 78,9%-ը և տրանզիտով 22,1%-ը: Ապրանքը գնորդին մոտեցնելու նպատակով «միությունը» բազիսային պահեստներ ունի Լենինականում, Ղարաբաղի խայում և Քոլագերանում: Նրանց առևտրական շրջանառությունը 1925—26 թվին կազմում էր «միության» ամբողջ շրջանառության 22,1%-ը: «Միության» գործարքային գործունեյության հիմնական առարկաները մասայական սպառման ապրանքներն են կազմում: Նրա ապրանքաշրջանառության 31,8%-ը կազմում է գյուղացիական ճոթեղները, 13,0%-ը՝ հացամթերքները, 13,0%-ը՝ շաքարը, 3,2%-ը՝ աղը, 10,5%-ը՝ նավթամթերքները և այլն: «Միության» գլխավոր հայթայթողները կոոպերատիվ ու պետական կազմակերպութուններն են, վորոնց հաշվին ընկնում է նրա գնումների 97,2%-ը: 1925—26 թվին ապրանքաշրջանառության արագությունը կազմել է միջին թվով 35 օր: Նշանակալի չափով ամբացել է նաև «միության» Ֆինանսական գրությունը: 1925 թվի հոկտեմբեր 1-ին մաքրված հաշվեկշռի գումարը հավասար էր 1.041.000 ուրբու, վորից 127,000 ուրբին, կամ 12,2%-ը գտնվում էր անչարժ ակտիվներում, և 804,000 ուրբին, կամ 87,8%-ը կազմում էյին շրջանառության միջոցները: Սեփական միջոցները շրջանառությանը չեյին մասնակցում: Հաշվեկշռում՝ սեփական 1 ու հանդեպ գալիս էյին 8 ու 80 կ. ոտար միջոցներ: 1925—26 թվին «միության» Ֆինանսական գրությունն ամբողջովեց: Մաքրված հաշվեկշռի գումարն արդեն կազմում էր 1.597.000 ուրբի: Սեփական միջոցներն արդեն հավասար էյին 321.000 ուրբու, իսկ փոխառուն՝ 1.275.000 ուրբու, այսինքն՝ սեփական և փոխառու միջոցների հարաբերությունն արդեն հավասար էր 1:3,96-ի:

Տնտեսական գործունեյությունից բացի՝ «միությունը» հսկայական աշխատանք է տանում գաղափարական-կազմակերպչական ասպարիզում: Ա. Ս. Ֆ. Ու. Հ. Տնտեսական Բարձրագույն Մորհրդի 1924 թվի դեկտեմբերի 9-ի փորձման համաձայն, «միութ-

թյունը» ցանցի նկատմամբ հանդիսանում է վերստուգիչ հենարան : Նրա հրահանգիչ-վերահսկիչներն իրենց խնդիրը չեն սահմանափակում միմիայն գնահատականով ու քննադատությամբ, այլ և դրա հետ միասին ռացիոնալիզատորական ահազին աշխատանք են տանում՝ ցանցի անտեսա-կազմակերպչական կյանքը կարգավորելու և առողջացնելու սեղոլությամբ : Սրանից բացի՝ «միությունը» նշանակալի չափով տանում է նաև կոոպերատիվ-կրթական աշխատանք—ունի կոոպերատիվ տեխնիկում, կոոպերատիվ ակադիմի համար կազմակերպում է կոոպերատիվ կարճատեղ գասրնթացքներ, կոոպերատիվ պրակտիկայի զանազան խնդիրների մասին հրատարակում է հանրամատչելի գրականություն և այլն, և այլն :



Հայաստանի սոցալոգական կոոպերացիայի սիստեմն, այսպիսով, խորհրդային իշխանության հաստատվելու շնորհիվ, վճռականորեն ընթանում է վերածնության և առաջադեմ աճման ուղիով : Հանրապետության ժողովրդական անտեսության մեջ կոոպերացիան ավելի ու ավելի նշանակալից Փակտոր է դառնում : 1924-25 թվին նա արդեն ընդգրկում էր հանրապետության մանրածախ առևտրական շրջանառության 36,2%-ը : Փոխանակության աստիճանական հասարակակայնացումը նրա համար դառնում է շարժիչ ուժ և հետագա զարգացման պափոս :

Հայաստանի կոոպերատիվ շարժումը, վերպես խորհրդային կոոպերացիայի ամբողջ սիստեմի մի ճյուղը, զարգանում է սոցիալիզմի նշանաբանի ներքո : Նրա վերջնական նպատակն է անտեսական կյանքի հասարակակայնացումը : Պրոլետարիատի գեղատառության պայմաններում սա ուսուպիա չի, այլ որվա գործնական խնդիր : «Հին կոոպերցիայի» ղեկավարներն ել կոոպերացիայի միջոցով ձգտում էլին սոցիալիզմի : Բայց նրանք ցանկանում էլին սոցիալիզմին հասնել ատանց բանվորների դասակարգային կովի, խաղաղությամբ, ատանց ցնցումների, կոոպերացիայի գորդացմամբ քայլ առ քայլ կապիտալիզմի ամբությունները գրավելով : Նրանք յերպում էլին, վոր այգպես, գեգեցիկ մի որ, աննկատելիորեն, և ի դարմանս բոլորի, կոոպերատիվ շքակառքով կմտնեն սոցիալիզմի թագավորությունը : Ի հարկե, նրանք չմտան սոցիալիզմի թագավորությունը՝ խրվելով մանր-բուրժուական ճահճի

ձանձաղուաներում : Յեվ հենց ինքը, նրանց կոոպերատիվ շքակառքը ծածկվեց մանր-բուրժուական իդեոլոգիայի մամուռով : Կապիտալիզմը պայթեցնելու փոխարեն այդ կոոպերացիան հենց ինքը պայթեցվեց նույն կապիտալիզմի կողմից :

Կապիտալիզմը հաղթահարելու ուղին պրոլետարիատի գեղատառության միջով է անցնում : Պրոլետարիատի հաղթական հեղափոխությունն է միայն, վոր ստեղծում է բարենպաստ հող, վորի մեջ փարթամորեն կարող են աճել կոոպերացիայի սերմերը :

Բայց կոոպերացիան անելիք ունի՞ արդյոք «սոցիալական հեղափոխությունից հետո, մյուս որը» :

Հաղթական հեղափոխությունը մեզ հասցրեց արտադրական գործիքների ու միջոցների խոշոր կապիտալիստական սեփականությունը հասարակակայնացնելուն : Հեղափոխությունը իր ձեռքը գրեց միայն կապիտալիստական սեփականության վրա : Նա անձեռնմխելի թողեց մանր աշխատավորական արտադրողներին—արհեստավորների, անալանգործների և գյուղացիների—սեփականությունը : Հասարակական այդ ընդարձակ դասի նշանակությունը չափազանց մեծ է մեր առավելապես յերկրագործական յերկրներում : Բայց մանր արտադրողը—լինի նա գյուղացի, թե արհեստավոր, իր անտեսությունը վարում է ինքնուրույնարար, իր սեփական ուժերով : Նա վոչ միայն արտադրում է ինքնուրույնարար, սգավելով նախապապական տեխնիկայի ձեվերից, այլ և ինքնուրույն կերպով և չուկայում հանում այն, ինչ արտադրում է : Սոցիալիստական (բանվորա-գյուղացիական իշխանության ձեռքում գտնվող) արդյունաբերությունը միլիոնավոր գյուղացիական մանր տանտեսությունների հետ անմիջապես կապվելու տեխնիկական հնարավորությունից զուրկ է : Սա նրա ուժերից վեր մի խընդիր է : Սրա համար անհրաժեշտ կլինեն ունենալ պետական աստիճանավորների մի ամբողջ բանակ, վորի խնդիրը պիտի լինեն. մի կողմից՝ գեպի գյուղը, գեպի գյուղացիական անտեսությունը հոսեցնել պետական արդյունաբերության արտադրությունները, ինչպես որինակ՝ յերկրագործական գործիքներ, սպառման առարկաներ—մանուֆակտուրա, շաքար, լուցիկ, և այլն, իսկ մյուս կողմից՝ գեպի քաղաք ուղարկել գյուղացիական անտեսության մթերքները—արդյունաբերական հում նյութերը—բամբակ, բուրդ, կաշի, մետաքս, յուղ, ձու, պանիր և այլն : Պետական «աստիճանավոր-միջնորդների» այդ հսկայական բանակի գործունեյության

վրա հսկելը մի անլուծելի խնդիր կլինեն: Իսկ վերահսկողութեան բացակայութեանն աղբյուր կդառնար մեծ և անվերջ շարաշահութեանները: Դա ևս, իբր մի նոր և ծանր բեռ, կնստի գյուղացիութեան վրին:

Սա հարցի միայն մի կողմն է: Կա և նրա մյուս յերեսը, վոր վոչ պակաս, յեթե չասենք ավելի, անմխիթարական է: Ինքն իր ուժերին թողնված գյուղացիական մանր արտադրողը համարյա միանգամայն անպաշտպան մի էակ է:

Նա միանգամայն անպաշտպան մի արարած է դառնում, յերբ վոր սկսում է չլման մեջ մտնել արտաքին աշխարհի հետ: Այստեղ նրա առջ բացվում է լայն ու անվորոշ շուկան: Արտադրութեան տեխնիքական ձևերին ծանոթ լինելով՝ նա միանգամայն անփորձ ու անպաշտպան է դառնում, յերբ նրա առջ խնդիր է ծառանում— վաճառել, վաճառահանել այն, ինչ նա իր «ճակատի քրտինքով» արտադրել է:

Վորտե՞ղ, ո՞ւմ է ի՞նչպես վաճառել: Նա այս բանը վո՞րտեղից պիտի իմանա: Արտաքին աշխարհը նրանից ծածկված է անթափանցելի վարագույրով: Յեվ բացի այդ՝ մի՞թե նա կարող է սպասել: Դրամը ծայր պատիճան անհրաժեշտ է նրան: Բայց ո՞ւմ վաճառել: Ահա այստեղ է, վոր նրան «ոգնութեան» է համարում մասնավոր առևտրական միջնորդը և իր «ծառայութեաններն» և առջարկում՝ վորպես նրա և անորոշ «չուկայի» միջև միջնորդ հանդիսացող ողակ: Այսպիսով՝ գյուղացիական մանր անտեսութեանն քստրկանում է առևտրամիջնորդային կապիտալին, վորը դառնում է նրա քայքայման ու աղքատացման աղբյուր: Մտնուվոր առևտրական կապիտալն, այսպիսով «միջնորդող» ողակ է դառնում սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղացիական մանր անտեսութեան միջև: Բայց այդ «ողակը» կապիտալիստական մի ցեղ է, վոր միատեսակ կերպով ուտում է ինչպես սոցիալիստական արդյունաբերութեան, այնպես էլ աշխատավոր գյուղացիական անտեսութեան հիմքերը:

Ապրանքային շուկան իր ձեռքում ունենալով՝ առևտրական միջնորդն ավելի պակաս չափով չի քայքայում նաև բանվորին: Նա լափում է նաև բանվորի աշխատանքային յեկամուտն՝ իջեցնելով նրա աշխատավարձի գնողական ուժը:

Այդ պատճառով՝ չնայած խոշոր կապիտալիստական սեփականութեան հասարակակալնացմանը, կապիտալիստական փոշին

այնուամենայնիվ չարունակում է թունավորել մեր սոցիալիստական հանրապետութեանների ժողովրդական անտեսութեանների սրբանիգմը:

Խնդիրն այն է, վոր վոչնչացնենք, վերջնականապես քամուռ տանք կապիտալիստական այդ փոշին: Այս խնդիրը մեծ է, անհետաձգելի և արժանի է հասարակական անչեջ վոգեւորութեան: Սակայն ի՞նչպես մոտենալ նրան: Վո՞րն է այն ուղին, վոր տանում է դեպի նրա լուծումը: Աշխարհիս ճնշվածների մեծ առաջնորդ Վլ. Լենինն իր պարզած գրոշակի վրա մատնանշել է այդ ուղին: Այդ ուղին կոպերացիան է:

Միմիայն կոպերացիան է, վոր կարող է մանր, փոշիացած, իրարից անջատ գյուղացիական անտեսութեանների աշխարհին սրսկել լայն հասարակակալնութեան կենդանի հոսանք: Գյուղացին անպաշտպան է վորպես վաճառող ու գնորդ: Նա ստրկացած է առևտրական կապիտալին, վոր նրան անտեսական ճնշման չղթաների մեջ է պահում: Կոպերացիան նրան պետք է սովորեցնի առանց միջնորդային առևտրական կապիտալի «ծառայութեանները» յուրա գնալուն և այդ կապիտալի պարտականութեանն իր վրա պետք է վերցնի: Սակայն փոխանակութեան հասարակակալնացումը դեռ ևս խնդրի լուծում չի: Գյուղացիական արտադրութեանն մեր դեռ ևս խնդրի լուծում չի: Գյուղացիական արտադրութեանն այդու ամենայնիվ դեռ մնում է մանր և ինքնուրույն: Վորպես մանր արտադրութեան նա չի կարող տեխնիկապես կատարելագործվել: Այդ իսկ պատճառով կոպերացիայի առաջ կանգնում է գյուղացիական անտեսութեան խոշորացման խնդիրը: Այդ խոշորացման հասնելու ուղին գյուղացիական մանր անտեսութեաններն ընկերութեանային խոշոր միութեանների մեջ ձուլելն է: Այդպիսով՝ փոխանակութեան հասարակակալնացումից հետո կգա արտադրութեան հասարակակալնացում: Գյուղացիական անտեսութեանը կվերակազմվի սոցիալիստական սկզբունքներով: Յեվ հենց այդ ժամանակ էլ գյուղում կհնչի կապիտալիզմի վերջին ժամը: Հասարակակալնացված գյուղացիական անտեսութեանն այն անմիջական «ողուումը» կհաստատի սոցիալիստական քաղաքային արդյունաբերութեան հետ, վորը ապագա ծավալված սոցիալիստական հասարակակարգի ամուր հիմքն է դնելու:

Սակայն՝ այդ հասարակակարգն իրականացնելու համար դեռ բավական չի գյուղացիական կոպերացիայի լայն ու ամենապարփակ զարգացումը: Անհրաժեշտ է նույնպես և քաղաքի կոպերա-

ցիայի զարգացումը: Գյուղացիական տնտեսութեան միջերջերի գլխավոր սպառողը բանվորն է: Նա հայտնի չափով քաղաքային արդյունաբերութեան ապրանքների սպառողն է: Ինքն իրեն թողնելով՝ նա եւ ստրկանում է առեւտրական միջնորդներին՝ բայց արդէն վորպես սպառող: Վորպես արտադրող նա արդէն ինքն իրեն ազատել է՝ ձգելով արդյունաբերական կապիտալի լուծը: Բայց մի լծից ազատվելով՝ նա մյուսից դեռ չի ազատվել: Այդ ազատագրումը կատարվելու յի սպառողական կոոպերացիայի միջոցով: Վերջինս նրան անմիջականորեն կկապի վաչ միայն պետական արդյունաբերութեան, այլ և հասարակակաշխարհն—կազմակերպված գյուղացիական տնտեսութեան հետ:

Այսպիսով՝ կոոպերացիայի հետագա զարգացումը համապարհ սոցիալիզմի զարգացման: Ահա թե ինչու Վ. Լենինը, լրիվ հիմք ունենալով՝ բանվոր դասակարգի հաղթանակով մեզ մոտ բացված դարեչրջանը համարում էր կոոպերատիվ դարեչրջան:

Այսպիսով՝ խնդիրները վորոշված են—զարգացման ուղիները լրւատրված: Կոոպերացիայի աստղը փայլում է ավելի պայծառ քան յերբ և է: Մնում է աշխատանքը—այն մեծ աշխատանքը, վոր պիտի թափվի մեր կոոպերացիայի չհերկված դաշտում: Լիակատար կոոպերացում—այս է մեր առաջ բացված զարգացման շրջանի խնդիրը: Խնդիրն այն է, վոր ստեղծենք «խակական կոոպերացիա, վորին մասնակցում են իսկական ժողովրդական մասսաներ»:





« Ազգային գրադարան



NL0208085

